



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Чикуният
рънбюк

рънбюк

h. II

1905р

84

U-86

unb. 6529-23

ԶՆՈՒԱՄՈԼ
ՔԱՂՔԵՆԻՆ

LE BOURGEOIS GENTILHOMME,

ԿԱՏԱԿԵՐԳ ՀԻՆԳ ԱՐԱՐԹՈՎ



19 NOV 2010

ԿԱՏԱԿԵՐՊԳՔ

20 APR 2008

ԱՆՁԻՆՔ

— 3000 —

- Պ. ԺՈՒՐՏԷՆ Քաղցեկի մը:
 ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԷՆ Իր կիմք:
 ԼԻՒՍԼ Ժուրտենի աղջիկը:
 ՔԼԵՇՆԴ Սիրահար Լիւսիլի:
 ՏՕՐԻՄԷՆ Մարդիկուհի:
 ՏՕՐԱՆԴ Լուս, հուսանի Տօրիսկի:
 ՆԻՔՈԼ Մպատուհի Պ. Ժուրտենի:
 ՔՈՎԱՆԵԼ Մպասառը Քղեօնդի:
 ԵՐԱԺԴՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ ԵՒ ԻՐ ԱՇՎԱԿԵՐՏԸ:
 ✓ ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ:
 ✓ ԱՐԱԽԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ:
 ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ:
 ✓ ԴԵՐՁԱԿ ՄԸ:
 ✓ ԴԵՐՁԱԿԻ ՄԱՆՉ ՄԸ:
 ✓ ԵՐԿՈՒ ԼԱՃԵՐ:

ՏԱՄԱՐԱՆ Է Ի ԲԱՐԵՎ. Պ. ԺՈՒՐՏԵՆԻ ՑՈՒՆԸ



ՄՈԼԵԿԵՐԸ

— 3000 —

ԲԱՐԴՄԱՆԵՅ
ՄԵՄՐՈՎ ՆՈՒՊԱՐԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԱԶՆՈՒԱՄՈԼ ՔԱՂՔԵՆԻ. — ՄՔԱՐԵՆԻ ՆԵՆԳՈՒԹԵԱՆՆԵՐԸ. —
ԿԱՐԴԱՑՈՂ ԿԻՆԵՐ.



Պ Ջ Մ Պ Ք
ՊԱԴՐ. Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ ՈՐԴԻ
1905

606

ԳՐԱԴԱՐԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ

ԱՅԱԽՈՎ
ՀԱՅՈՒԹՎԱՅ ՊԱՐԱԳԱ

ԲԱՏՈՒ ՓՐԵՄՈՒ

— ՀԱՅՈՒԹՎԱՅ ՊԱՐԱԳԱ — ԱՐԵԳԱԿ ՊՈԽՏՈՒՅՑ



134
40

ՀԱՅՈՒԹՎ

ՀԱՅՈՒԹՎԱՅ ՊԱՐԱԳԱ

ՀՕԿ 1

ԱԶՆՈՒԱՄՈԼ

ՔԱՂՔԵՆԻՆ

(LE BOURGEOIS GENTILHOMME)

ԿԱՏԱԿԵՐԳ ՀԻՆԳ ԱՐԱՐՔՈՎ



Ա. Ն Զ Ի Ն Ք

— 300 —

Պ. ԺՈՒՐՏԵՆ	Քաղքենի մը :
ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵՆ	Իր կիմք :
ԼԻՒՄԻԼ	Ժուրտենի աղջիկը :
ՔԼԵՕՆԴ	Սիրահար Լիւսիլի :
ՏՈՐԻՄԵՆ	Մարքիզուհի :
ՏՈՐԱՆԴ	Կումս, հոմանի Տօրիմենի :
ՆԻՔՈԼ	Սպառուհի Պ. Ժուրտենի :
ՔՈՎԻԷԼ	Սպասառոր Քլեօնդի :
ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ	ԵՒ ԻՐ ԱՇԽԿԵՐՏԸ :
ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ :	
ՍՐԱԽԱՐԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ :	
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ :	
ԴԵՐՁԱԿ	ՄԸ :
ԴԵՐՁԱԿԻ ՄԱՆՉ ՄԸ :	
ԵՐԿՈՒ ԼԱՑԵՐ :	

ՏԻՍԱՐԱՆՆ Է Ի ԲԱՐԻՑ, Պ. ԺՈՒՐՏԵՆԻ ՑՈՒՆԸ



ԱՐԱՐՔ ԱՌԱՋԻՆ

Մի շատ նուագարաններու ձայնով վարագոյրը կը բացուի. մէջտեղը երածշութեան վարժապետին աշակերտը կը տեսնուի՝ որ սեղանի մը վրայ կը յօրինէ Պ. Ժուրտենէ ապապրուած ցայզանուազի եղանակ մը:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ, ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ, ԵՐԵՔ
ԵՐԱԺԻՇՏՆԵՐ, ԵՐԿՈՒ ԶՈՒԹԱԿԱՀԱՐԿՆԵՐ, ԵՐԿՈՒ ՊԱՐՈՂՆԵՐ

ԵՐԱԺՇՏ. ՈՒՍՈՒՑԻՉ. — (երաժիշտներուն .) Այս սրահը
եկէ'ք հանգստացէք մինչեւ որ գայ :

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — (պարողներուն .) Դու'ք ալ ա'յս
կողմը եկէք :

ԵՐԱԺՇՏ. ՈՒՍՈՒՑԻՉ. — (իր աշակերտին .) Պատրաստեցի՞ք :

ԱՇԱԿԵՐԾ. — Այո՛ :

ԵՐԱԺՇՏ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Տեսնեմ . . . : Լա՛ւ :

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Նոր եղանա՞կ մ'է :

ԵՐԱԺՇՏ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Սյո՛, ցայգանուազի եղանակ մը
զոր հոս շաբազրել տուի՝ մինչեւ որ մեր մարդն արթննայ :

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Կընա՞մ անզամ մը աեսնել :

ԵՐԱԺՇՏ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Երբ զայ՝ պիտի լսես որամա-
խոսութեամբ մէկտեղ . ա՛ւ չուշանար :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Դուն եւ ևս հիմայ շատ գործ ունինք :

ԵՐԱԾԾ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Առոյդ է, մել պէտք եղած մարդ գուած ենք : Այս պարոն ժուրտէնի՞ իր աղնուականութեան եւ կնահաճութեան ցնորդներով մեղի համար լաւ հասոյթ մ'է . թէ իմ երաժշտութեանս եւ թէ քու ալ պարերուդ համար ո՞րքան փափաքելի էր որ ամէն մարդ այս մեր պարոն ժուրտէնին նմանէք :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Նմանէր՝ այլ ոչ բոլորովին . ես կուզէի որ մեր սորվեցուցած բաները քիչ մ'աւելի հասկնար :

ԵՐԱԾԾ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — իրաւ՝ չհասկնար , այլ լաւ կը վճարէ . եւ մեր երկուքին ալ արուեստները ամենէ աւելի այդ բանին պէտք ունին հիմայ :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — կը խոսառվանիմ թէ իմ մասիս քիչ մը փառք կը փնտուեմ : Ծափահարութիւնները կ'աղդեն ինձի , եւ այնպէս կը կարծեմ թէ ամէն զեղարուեստներու մէջ գմնդակ լան մ'է տխմարներու գիմաց ելլել եւ յօրինուած երկի մը մասին յիմարի մը խակ եւ անձաշակ զնահաառումները մաֆկ ընել : Զես կրնար ժխտել թէ մեծ հաճոյք է աշխատի ախափսի անձանց համար՝ որք արուեստի փափկութիւններն զգալու կարող՝ երկասիրութեան մը զեղեցկութիւնները կը հասկնան ու կը զնահաատեն , եւ իրենց ողոքալի հաւանումներով կը պատուեն զքեզ : Այո՛ , աշխատութեան մ ամենէ հաճելի տրիտուքը՝ տեմնելն է թէ կը հասկնան զայն , եւ պատուարեր ծափերով կը չոյենու կը փայտիայեն : Իմ կարծիքով մեր յոգնութեանց ասկէ աւելի լաւ վարձատրութիւն չկրնար ըլլալ . լուսամիտ ներբողներ մեղի համար ամենաքաղցր վայելքներ են :

ԵՐԱԾԾ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Ես ալ քեզ պէս կը մտածեմ , եւ մեծապէս կ'ախորժիմ դրուատիքներէ : Այո՛ , ծափիքու նման անձնասիրութիւն չոյող զգուող բան չկայ անշուշտ . բայց մարդու խունկով չապրիր եւ չոր գովիստներով բարեկեցիկ կեանք չունենար , պէտք է գրականն ալ խառնել անոր : Այս պահաճառաւ գովելու ամենէ լաւ կերպը ձեռքերով գովիկն է : Իրաւ մեր մարդն անգէտ անտեղնակ մէկն է՝ որ ամէն բաներու վրայ ափեղցիեղ կը խօսի , զովելիքը չզովեր , չզովելիքը կը գովէ , բայց իր ստակը մտքին սխալ դատումները կ'ուղղէ , կը սրբազրէ . անոր դատողութիւնն իր քսակին մէջ է , այնպէս որ այդ տղէտ քաղքենին՝ ինչպէս կը տեսնես՝ մեղ հա-

մար աւելի մեծ արժէք ունի՝ քան թէ մեր իրեն ներկայացունող ուսեալ ջոջը :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Հսածներուղ մէջ ճշմարտութիւն կայ , բայց ինձ այնպէս կը մուի թէ ստակին վրայ պէտք եղածէն քիչ մ'աւելի կը կոթնիս . շահն ստորին բան մ'է եւ պարկեշա մէկը պէտք չէ երբէք կարեւորութիւն տայ . անոր :

ԵՐԱԾԾ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Ասով մէկտեղ մեր մարզուն տուած ստակները սիրով կ'ընդունիս :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Անշո՛ւշտ կ'ընդունիմ , բայց բոլոր երջանկութիւնս անոր վրայ չեմ կայացներ . կը փափաքէի որ նա իր հարստութեան հետ քիչ մ'աւելի կիրթ ճաշակ ունենար :

ԵՐԱԾԾ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Ես ալ այդ բանը կը փափաքէի , եւ երկուքս ալ կրցածնոււս չափ ատոր կ'աշխատինք : Բայց որ եւ է կերպիւ ինք միջոց մը կ'ըլլայ որ հասարակութեան մէջ ճանչցու ինք , եւ ինչ գովեստ որ կուտանք իրեն՝ փոխարէնն ստակով կը հատուցանէ :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Ահա կուզայ :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՅԵՆ՝ առտնին պարեգոտով և գիշերային գդակով , ԵՐԱԾԾՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ . ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ . ԵՐԱԾԾՈՒԴԻ ՎՐ , ԵՐԿՈՒ ԵՐԱԾԾՈՒԹԵԱՆ ՊԱՐՈՒՆ ԼԱՃԵՐ

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՅԵՆ . — Է՛ն , պարոններ , ի՞նչ կայ նայինք , ձեր խեղկատակութիւնը պիտի ներկայացնէ՞ք :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ . — Ի՞նչպէս , ի՞նչ ըսել է խեղկատակութիւն :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՅԵՆ . — Է՛ն , բանը . . . ի՞նչ է անունը . երգ ու պարի ձեր նախաբանը կամ արամախօսութիւնը :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ . — Ա՛ն , ա՛ն :

ԵՐԱԾԾ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ . — Այո՛ , պատրաստ ենք , պա-

րոն : ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՅԵՆ . — Զձեղ փոքր ինչ սպասցնելուս պատ-

հագուիլ . դերձակս մետաքսեայ գուլպաներ ղրկած էր զորս
քիչ մնաց ուռքս չափախ անցընէի :

ԵՐԱԺԾԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Զեր պարապ ժամուն կ'սպա-
սենք ամէնքս ալ :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Ոտքէ ցղլուխ սքանչելի կերպով
հագուած շքուած պիտի տեսնէք զիս :

ԵՐԱԺԾԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Ատոր տարակոյս չունինք :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Հնդիկ պաստառէ սա՛ հագուսալ
շինել առուի :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Խի՛ստ զեղեցիկ :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Դերձակս ըստու թէ աղնուականներն
առուու այսպիսի հագուստ կը հագնին եղեր :

ԵՐԱԺԾԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Եւ սքանչելի կերպով ալ կը
վայլէ ձեզ :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Ծօ՛, լաճե՛ր, ծօ՛, իմ երկու լաճերս :
Ա. ԼԱՅ. — Հրամմեցէ՛ք, պարոն :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Պէտք չկայ, ուզեցի տեսնել թէ
ձայնս կը լսէ՛ք : (Պարու եւ երածշուրեան ուսուցիչներուն .) Լամերուս հագուստին ի՞նչ ըսիք :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Խիստ շքեղ են :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (Պարեզօքը կէս մը բանալով եւ
կարմիր քաշիշ նեղ զսապանը եւ կանանց քաշիշ յորանա-
կը ցուցնելով .) Այս առտնին հագուստու ալ առտուան դասե-
րուս համար է :

ԵՐԱԺԾԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Խի՛ստ ընտիք :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Ծօ՛, լա՛ճ :

Ա. ԼԱՅ. — Հրամմեցէք, պարոն :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Միւս լաճին կ'ըսեմ :

Բ. ԼԱՅ. — Հրամմեցէք, պարոն :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (Պարեզօքը հանելով .) Բանէ՛ սա
պարեգօստ :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Սքանչելի :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Հիմա գա՞նք ձեր բանին :

ԵՐԱԺԾԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Նախ եւ յառաջ կ'ուզէի որ լսէք
եղանակ մը՝ (աշակերտը ցուցնելով) զոր շարազրեց ձեր
խնդրած ցայգանուազին համար : Իմ աշակերտներէս մէկն է՝
որ սքանչելի տաղանդ ունի այս տեսակ բաներու :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Այո՛, բայց այս տեսակ բան մը

պէտք չէր որ աշակերտի ձեռօք զրել տայիր , այս գործին
համար դուն անդամ հաղիս կը բաւէիր :

ԵՐԱԺԾԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Աշակերտի անունէն մի՛ խա-
րուիք, պարոն . այս տեսակ աշակերտները ամենէ մեծ վար-
պեսներու չափ հմառութիւն ունին, եւ յօրինած եղանակն ալ
ամենագեղեցիկ բան մ'է՝ զոր չափալանց պիտի հաւափ եթէ
մտիկ ընէք :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (իր լաճերուն .) Պարեգօստ բերէ՛ք
որ աւելի աղէկ լսեմ . . . : Կեցիք, կարծեմ առանց պարեգօստի
աւելի աղէկ պիտի երեւիմ : Ո՛չ, ո՛չ, տուէ՛ք պարեգօստ .
աւելի լաւ կ'ըլլայ :

ԵՐԱԺԾԾՈՒՀԻՆ. —

Բարէ՛, կը հիւծիմ ցրենկ եւ գիշեր :

Իմ ցաւըս մեծ է

Այն օրէն հետէ՛

Որ քու գեղեցիկ անոյշ աչուներ

իրենց խստութեամբ կը չարչըկեն զիս :

Եթէ, ո՛ սէրդ իմ, ալդպէս կը կարուիս

ինձ հետ որ ունիմ սիրտ մը սիրալիք,

Քու թշնամիիդ ի՞նչ պիտ' ընէիր :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Սդալի ու տիրուր է այդ երգը, եւ
մարդուն քունը կը բերէ . կ'ուզէի որ տեղ անդ զուարթ ձեւ
մը տայիր անոր :

ԵՐԱԺԾԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Պէտք է, պարոն, որ եղանակն
խօսքերուն յարմար ըլլայ :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Ասկէ յառաջ եղանակ մը սորված
եմ՝ որ խիստ սիրուն է : Կեցի՛ր . . . : Ի՞նչպէս կ'սկսէր :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Զեմ գիտեր ո՞ր եղանակին համար
է ըսածնիդ :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Սա մէջը ոչխար կայ, ա՛յն եղանա-
կը :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Ոչխա՞ր :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Հա՛, միտքս կուզայ, (Կերէն .)

Ես վարդուիմն որքան չընադ :

Այնան ալ հեղ կը կարծէի :

Ոչխարէ իսկ հեզուկ, աւա՛դ :

Ինձ կ'երեւար իմ վարդուհի :
Աւաղ, աւաղ, քիւրապատիկ
Անագորուն է այդ աղջիկ
Քան անտառի
Գազան վայրի :

Սիրուն չէ՞ այս եղանակը :

ԵՐԱԺՇԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Այո՛, ամենասիրուն :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Ձեր երգելու կերպն ալ աղուոր է :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ. — Եւ երաժշտութիւն ալ չեմ սորված :

ԵՐԱԺՇԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Պէտք էք, պարոն, ինչպէս պարու՝ նոյնակէս երաժշտութեան ալ զաս առնուք : Այս երկու արուեստներն իրար հետ սերա առնչութիւն ունին :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Եւ երկուքն ալ մարդուս միաքը կը բանան գեղեցիկ բաներու :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ. — Աղնուականներն երաժշտութիւն ալ կը սորվի՞ն :

ԵՐԱԺՇԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Այո՛, պարոն, կը սորվին :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ. — Ուրեմն ես ալ կը սորվիմ. բայց չեմ զիսեր ի՞նչպէս ժամանակ գտնեմ, վասն զի սրախաղի ուսուցչէ զատ փելիսոփայութեան վարժապետ մ'ալ բռնեցի՝ որ այս առաւօտ իր զասը պիտի սկսի :

ԵՐԱԺՇԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Փելիսոփայութիւնը բան մ'է անշուշտ, այլ երաժշտութիւնը, պարոն, երաժշտութիւնը :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Երաժշտութիւնը ու պարը . . . երաժշտութիւն ու պար ամէն բանի կը բաւէ :

ԵՐԱԺՇԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Տէրութեան մը մէջ երաժշտութենէ օգտակար բան չկայ:

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Մարդոց համար պարէ աւելի պէտքացու բան չկայ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ. — Է՛հ, այդպէս թող ըլլայ, երկայն մի՛ ընէք :

ԵՐԱԺՇԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Կ'ուղէ՞ք տեսնել մեր երկուքին արուեստը :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ. — Այո՛:

ԵՐԱԺՇԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Ինչպէս ըստ եմ արդէն՝ պղտի փորձ մ'է այս զոր ատենով շարադրած եմ՝ երաժշտութեան արտայայտել կրցած զանազան կրքերու :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ. — Խիստ լաւ :

ԵՐԱԺՇԾ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — (երաժիշտներուն.) Օ՛հ, յառաջ

անցի՛ք : (Պ. Ժուրտէնի.) Այնպէս պէտք է ենթադրէք թէ այս նուագալին խումբը հովուական հագուստներ հագած ըլլայ :

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ. — Ամէն այսպիսի ասիթներու մէջ սովորութիւն է հովիւի կերպարանօք երեւիլ; ինչո՞ւ այս այսպէս կ ըլլայ :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Երբ անձինքներն հարկ է երաժշտութեամբ խօսեցնել՝ հաւանականութեան համար հովուերգական ձևն ընտրելի է: Երդն ամէն ժամանակ՝ ընական չէ որ քաղաքացիներ իրենց ներքին կիրքերն երգերով յայտնեն:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ. — Ինչ որ է, տեսնե՛նք հիմայ սա ձեր խաղերը :

ՏՐԱՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՄՔ

ԵՐԱԺՇՑՈՒՀԻ ՄԸ ԵՒ ԵՐԿՈՒ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

ԵՐԱԺՇՏՈՒՀԻ ՀԻ. —

Սիրտ սիրահար

Հոգերու մէջ կը ծփի յար.

Այնպէս կ'ըսուի

Թէ մտադիւը կը տառապի:

Զկայ սակայն

Ազատ սրտի պէս անոյշ բան :

Ա. ԵՐԱԺԻՇՏ. —

Զկայ այնչափ հանելի բան

Ամենաջաղցը քան խանդըն ան:

Որ նոյն ըղձիւք գորովագին

Կ'ապրեցնէ սրտեր կրկին.

Առանց սիրոյ երկրի վըրայ

Երշանկութիւն սեպէ՛ չկայ:

Սէրըն հանէ

Մարդու կեանքէ,

Համ ու հոտն ալ մէկտեղ կ'ելլէ:

Բ. ԵՐԱԺԻՇՏ. —

Խիստ անոյշ բան է սէրն եթէ

Անկեղծութիւնն ունի իր հիմ:

Սակայն, աննենգ հաւատարիմ

Սրտով այսօր աղջիկ ո՞ւր է:

Սեռ իգական՝
Որ գոյութեան է ամարժան
Պէտք էր, բաբէ՝,
Ուժացնել զմեզ իրմէ։

Ա. ԵՐԱԺԻՇՏ. —

Հուր գեղեցի'կ։

ԵՐԱԺՇՏՈՒՀՅԻ. —

Անսիրութիւն գերեզանիկ։

Բ. ԵՐԱԺԻՇՏ. —

Խաթեցա՞յ սեռ։

Ա. ԵՐԱԺԻՇՏ. —

Անուշի'կ սէր։

ԵՐԱԺՇՏՈՒՀՅԻ. —

Կը նախընտրեմ ամէն բանէ։

Բ. ԵՐԱԺԻՇՏ. —

Կին բառն սոսկում հոգւոյս կ'ազդէ։

Ա. ԵՐԱԺԻՇՏ. —

Թո՞դ այդ քու հեռ,
Ու պաշտէ՝ սէր։

ԵՐԱԺՇՏՈՒՀՅԻ. —

Սիրոյն վըրայ
Հաստատ կեցող աղջիկ միշտ կա'յ։

Բ. ԵՐԱԺԻՇՏ. —

Բաբէ՝, ո՞ւր է աղջիկ այդպէս.
Եւ ո՞չ մէկ հատ կը տեսնեմ ես։

ԵՐԱԺՇՏՈՒՀՅԻ. —

Առ ի պատիւ քնջոյշ սեռիս՝
Կ'ընծայեմ սիրտս, կ'ընդունի՞ս զիս։

Բ. ԵՐԱԺԻՇՏ. —

Կընա՞մ հաւատալ թէ քու խօսքեր
Ճշմարիտ են ու չին խաթեր։

ԵՐԱԺՇՏՈՒՀՅԻ. —

Տեսնենք փորձո, | Թէ ո՞վ մեզմէ
Աւելի սէր պիտի յայտնէ։

Բ. ԵՐԱԺԻՇՏ. —

Ով իր հրոյն ըլլայ դըժող՝
Դից բարկութիւնն վրա'ն թափի թող։

ԵՐԵԲՆԻՆ ՄԵԿՑԵԴ. —

Ասանկ կրակո | մը տենչալի
Թող մեր հոգին այրի, մըկի.
Ուշն ի՞նչ անոյշ՝ երբ սիրտք կըկին
Անքակ սիրո | իրար կապուին։

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵՆ. — Ա՞յլքան է:**ԵՐԱԺՇՏ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Այո՛:**

**ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵՆ. — Աղէկ շակուած էր, բաւական սի-
րուն խօսքեր ալ կան մէջը:**


**ՊԱՐՈՆԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Իմ արուեստիս գալով՝ ահա պզտի
փորձ մ'ամենէ գեղեցիկ շարժումներու եւ դիրքերու՝ որոնք
պարի մը մէջ կընան երբէք մանել։**

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵՆ. — Նորէն հովիւնե՞ր պիտի ելլեն։

**ՊԱՐՈՆԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Պիտի ահս՝ էք ու հաւնիք։ (պա-
րողներուն.) Օ՞ն, յառա՞ջ։**

ՊԱՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

(Զ-ը պարուրներ էրւուց սահա-ցին հրամայած կերպ ինը շարժու-
նելն ու դաշտուները կը կ-դարձէն։)



ԱՐԱՐՔ ԵՐԿՐՈՒԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵՆ, ԵՐԱՋՇՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ,

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՇԵՆ. — Շիտակը դէշ չէր. այս պարուղք լաւ կը շարժակին :

ԵՐԱԾՈՅՑ. ՈՒՍՈՒԹԻՉՔ. — Երբ երգը կրած տութեան հետ
խառնուի՝ ազգեցութիւնն աւելի մեծ կ'ըլլայ. շատ պիտի
հաւնիք այն պղտի պարախաղը՝ կոր ձեւ համար պատրաստած
հնոք:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԽԻՏԵՆ. — Այդ ետքէն կը տեսնենք . այն տիկինը՝ որու համար այս ամէն բաները պատրաստել տուի , հոսմայելու պատիւր պիտի բնէ ինձ :

ՊԱՐՈՒԻ ՈՒՍՅՈՒԹԻՉ. — Մեր կողմէ ամէն ի՞նչ պատրաստէ :

ԵՐԱԾՈՅՑ. ՈՒԽՈՒԻՑԻՉ. — Մնաց որ, պարոն, այս չբաւեր. ձեզ նման պերծ մէկը՝ որ գեղեցիկ բաները կը սիրէ, ամէն չորեքշաբթի կամ հինգշաբթի օրեր իր ապարանքին մէջ ուետք է նուազահանդէս մը տայ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Աղնուականներն ա՞յդպէս կ'ընեն :
ԵՐԱԺԵՏ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Այս', պարոն :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ես ալ նուազոհանդէս կուտամ
ուրեմն։ Աղօւոր բան պիտի ըլլաց՝ այս նուազահանդէսը :

ԵՐԱԾՈՅՑ. ՈՒՍՈՒԻՑԻՉ. — Անտարակոյս։ Երեք ձայն պէտք
պիտի ըլլայ։ մէկ վերնաբամբ, մէկ զիլ ձայն, եւ մէկ բամբ,
որոնց պիտի ընկերանան մէկ սոնալիօլ (*basse de viole*), մէկ
դիօրպա եւ մէկ յարաղաջնակ՝ դամբ (*basse continue*) համար,
ինչպէս նաեւ կցուրդներու համար ալ ջութակի վերնաբամ-
բեր։

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. - Ծովային փող մ'ալ դնէլնք մէջը :
Ծովային փողը ներդաշնակաւոր նուագարան մ'է՝ զոր չատ
սիրած եմ :

ԵՐԱԾՈՅ. ՈՒՍՏԻՇԻՉԻՑ. — Այդ լաներուն հոգը զուք մեղի թողուցէք:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԽՏԵՒՆ. — Սյնալէս թող ըլլայ, այլ չմունաս
պահեկէ մը երաժիշտներ խրկելու՝ որպէս զի սեղանին վրայ
երգեն:

ԵՐԱԾՈՅՑ. ՈՒՍՈՒՅԻՑԻՉ. — Պէտք եղած մարդիկը կը խըր-
կենք, անհոգ եղիք:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. - Այլ հոգ տանիս որ պարանցիկը աղւոր բան մ'ըլլայ:

ԵՐԱԾՈՅՑ. ՈՒՍՈՒԻՑԻՉԻՉ. — Պարանցիկէն գոհ պիտի մնաք եւ մասնաւորապէս ինչ ինչ յամրապարերէ (menuels)՝ որք անոր մէջ պիտի տեսնուին:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՏՏԵՆ. — Ո՞հ, ես ալ չատ կը սիրեմ յամրապարերը. մէյմը պարելու տեսնէիր. հապա, փորձե՞նք անդամ մը:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵՆ. - Ի՞նչպէս եմ.

ԵՐԱՖՇՏ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Սքանչելի՛

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ.— ՍՂԵԿ միտքս ինկաւ . ինձ լաւ մը սորվեցուք թէ մարքիղուհի մը բարեւելու համար իսոնար-

հութիւնն ի՞նչպէս ընել պէտք եմ, քանզի պահեկէ մը պէտք պիտի ունենամ:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ.— Մարքիզուհի մը բարեւելու համար խոնարհութիւն մը, ըսկը:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԵԿՆ. — Այո՛: Մարքիզուհի մ'որու անունը Տօբիմէն է:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ.— Զեռքերնիդ ինձ տուէ՛ք:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ո՛չ, դուք ձեւն ըրէ՛ք. ևս միտքս կը պահեմ:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ.— Եթէ կ'ուզէք միծ յարգանքով մը բարեւել՝ նախ դէպի ետեւ խոնարհութիւն մ'ընել պէտք է, ետքը քալել իրեն՝ դէպի ետեւ երեք խոնարհութիւններով, եւ վերջինին՝ մարմինը ծռել մինչեւ անոր ծնկուըները:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ըրէ՛ք տեսնեմ: (Պարու ուսուցիչը երեք խոնարհութիւններն ընելի էսֆ.) Լաւ հասկցայ:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԵԿՆ. ԵՐԱԺԵՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ,

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ, ԼԱՅ ՄՐ

ԼԱՅ. — Տէր իմ, սրախազի վարպետն եկած է:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ըսէ՛ որ ներս զայ զասը տալու համար: (Պարու եւ երաժշուրեան ուսուցիչներուն.) Կ'ուզեմ որ դուք ալ ներկայ ըլլաք:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԵԿՆ. ՄՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՉ, ՊԱՐՈՒ և

ԵՐԱԺԵՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԼԱՅ ՄՐ՝

Երկու փորձարուր բանած

ՄՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ.— (Երկու փորձարուրերը լաճին ձեռքին առնելի եսֆ որոնցմէ մին Պ. Ժուրտէնի կը ներկայացնէ.) Օ՛հ, պարոն, խոնարհութիւն ըրէ՛ք: Զեր մարմինը՝ կանգուն: Զախ երանքին վրայ փոքր ինչ ծռած: Ոտքերն՝

միեւնոյն գծի վրայ: Դաստակն՝ ձեր ազդրի առջեւով: Թուրի ծայրը՝ ձեր ուսի զիմացովը: Թեւը՝ ո՛չ այնքան բոլորովին տարածուն: Զախ ձեռքը ձեր աշքին հաւասար: Զախ ուսը գծէն աւելի գուրսկեկ: Գլուխը՝ շիտակ: Նայուածքը՝ անվեհներ: Յառաջ անցէ՛ք: Մարմինն՝ ամուր: Խուսափի շարժումով թուրիս գալիք ինչ տուէ՛ք: Մէկ, երկու: Նորէն ձեր տե՛ղը: Յաճախեցէ՛ք ձեր հարուածները աննահանջ: Ոստում մը դէպի ետեւ: Երբ հարուածը կ'ուղղէ՛ք՝ պէտք է որ յառաջ թուրը շարժի եւ մարմինը բոլորովին կողմնակի դիրք առնու: Մէկ, երկու: Երբորդակ շարժումով դաշէ՛ք թուրիս, եւ նոյն կերպով վերջ տուէ՛ք: Յառաջ: Մարմինն՝ ամուր: Յառաջ: Ատկէ ճամբայ ելէ՛ք: Մէկ, երկու: Զեր տեղը: Յաճախեցէ՛ք հարուածները: Ոստում մը դէպի ի ետեւ: Ի զգոյշի, պարոն, ի զգոյշի:

(Արտիոդի սահմանագույն ինչ հայուսածներ էրդունք. “Ի շունչ”, է շունչ ընելու)

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԵԿՆ. — Է՛ն, ի՞նչպէս եմ:

ԵՐԱԺԵՇ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ.— Սքանչելի՛, պարոն, սքանչելի՛: ՄՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ.— Արդէն ըսած եմ, սրախազի բուրու գաղտնիքը երկու բանի վրայ կը կայանայ միայն. հարուածը տալ եւ երբէք չընդունիլ. եւ ինչպէս անցեալ օր ապացուցական փաստով յայտնեցի ձեզ, եթէ թշնամոյն թուրը մարմնոյ զիծէն հեռացնելը զիտնաք՝ անկարելի է որ հարուած ընդունիք, եւ այս՝ դաստակի դէպի ի ներս կամ դէպի ի դուրս պղտի շարժումէ մը կախում ունի միայն:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԵԿՆ. — Այս կերպով ուրիմն մարդ մ'առանց սրտոտ ըլլալու ապահով է թէ թշնամոյն պիտի սպաննէ, եւ ինք չպիտի սպաննուի:

ՄՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ.— Անչո՞ւշտ, ատոր ապացուցումը չտեսա՞ք:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԵԿՆ. — Այո՛:

ՄՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ.— Եւ ասով կընաք մակարերել թէ սրախազի զիտութիւնն ո՛րքան եւ ո՛րքան զերազանց է միւս բոլոր անօգուտ զիտութիւններէն, զոր օրինակ, երաժշտութիւն, պար . . . :

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ.— Կամաց, սրախազի վարպե՛տ, մի՛ այդքան արտորար պարու նկատմամբ, յարգանքով խօսէ՛:

ԵՐԱԺԵՇ. ՈՒՍՈՒՑԻՉ.— Երաժշտութեան պատուականութեան մասին աւելի պատշաճ լեզու մը գործածէ՛:

ՍՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ. — Զարմանալի՝ մարդիկ՝ որ ձեր գիտութիւններն իմինս հետ կը բաղդատէք:

ԵՐԱԾԾԾ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Նայէ՛ սա մեծ մարդը:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Ի՞նչ ալ այլանդակ է՝ իր լանջապահովը:

ՍՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ. — Պարոն պարու վարժապետ, աչքի բաց, զքեղ լաւ տեսակէն պարել կուտամ: Քեզ ալ պարոն երածառութեան վարժապետ, լաւ տեսակէն երգել կուտամ: Կը լսէ՞ք:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Պարոն սուր խաղցնող, ես քու չափդ կը ճանչցնեմ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (պարու ուսուցչին.) Իմ թե ես որ ելլես կուրօտիս այդ մարդուն հետ՝ որ երրորդակ, չորրորդակ հարուածներու հմուտ է, եւ որ ապացուցական փաստով մարդ մեռցնելը դիտէ:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Ես մէկ սոտակի չեմ առնուր ոչ իր ապացուցական փաստը, եւ ոչ իսկ իր երրորդակ չորրորդակ հարուածները:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (պարու ուսուցչին.) Հանդարտէ՛ կ'ըսեմ:

ՍՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ. — (պարու ուսուցչին.) Լի՛րը, թշուառական զքեղ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Է՛, կեցիր, սրախաղի վարպետը:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — (սրախաղի ուսուցչին.) Յիմա՛ր անսուն զքեղ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Կեցի՛ր, պարու վարպետս:

ՍՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ. — Անզամ մը վրա՛ղ իշնամ . . . :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (սրախաղի վարպետին.) Հանդարտէ՛, կ'աղաչեմ:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Մէյմը բռնե՛մ զքեղ . . . :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (պարու ուսուցչին.) Հանդարտէ՛, այս ի՞նչ տեսակ մարդ ես:

ՍՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ. — Պատուական ծեծ մ'ուաես՝ որ խելքդ գլուխդ դայ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (սրախաղի ուսուցչին.) Ինդքիմ, չնո՞րհ . . . :

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Պատուական տեսակէն դիոց մը պիտի տամ որ հասկնաս:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (Պարու ուսուցչին). Է՛ս, բաւական է, կ'աղաչեմ:

ԵՐԱԾԾԾ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Թողէ՛ք որ այսուհետեւ չնորհքով խօսիլը սորվեցնենք իրեն:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (Երածշուրեան ուսուցչին). Հանդարտէ, Ասուծու սիրոյն: այս ի՞նչ զարմանալի մարդեր էք:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ, ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ, ԵՐԱԾԾԾՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ, ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ, ՄՐԱԽՍՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ, ԼԱԶ ՄԲ

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Եկո՛ւ, պարոն փիլիսոփայ, ձիշդ ժամանակին կը հասնիս քու փիլիսոփայութեամբ մէկտեղ. Եկո՛ւ, սա մարդիկը խաղաղէ:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Ի՞նչ է, ի՞նչ կայ, պարոններ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Իրենց արուեստներու նախապատուութեան խնդրին համար սաստիկ կրքի ելան՝ իրար նախատելու եւ բանը ծեծի հանելու աստիճան:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Է՛ս, պարոններ, պէ՞տք է որ այդպէս կրքի ելեք. կարդացած չէ՞ք Մնիքայի հմտալից գրուածը բարկութեան վրայ: Աշխարհի մէջ կա՞յ բան մ'աւելի սառին եւ ամօթալի քան այդ կիրքը որ զմարդ վայրի գաղան մը կը գարձնէ: մեր բոլոր շարժումներուն տէրն եւ իշխողն խելքը պէտք չէ՞ ըլլայ:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Ի՞նչ ըսել է, այս մարդն զմեզ երկուքս ալ թշնամանեց՝ արհամարհելով պարն որ իմ արուեստը է, եւ երածառութիւնը՝ որ պարոննեն է:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Իմաստուն մարդ մ'եղած թրշնամանքները բանիւ տեղ չդներ: անարդանաց արուելիք ամենէ մեծ պատասխանը չափաւորութիւնն ու համբերութիւնն է:

ՍՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՑԻՉ. — Ասո՞ք եկը լրբօրէն իրենց արուեստներն իմինիս հետ կը բաղդատեն:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Եւ այդ բանն հո՞գ կ'ընես:



Մարդիկ սին փառաց եւ աստիճանի մասին պէտք չեն մաքառի. իմասութիւն ու առաքինութիւնն է որ զմեզ կատարելապէս կը զանազանէ մէկմէկէ:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Ես սա՛ բանին վրայ կը պնդեմ թէ ըստ ամենայնի պատուոյ արժանի գիտութիւն մ'է պարը:

ԵՐԱԾՏ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Ես ալ կը պնդեմ թէ երաժշտութիւնը ամէն գարերու մէջ յարգուած մեծարութիւն մ'է:

ՄՐԱԿԱՋԻ ՈՒՍՈՒՑԻՉ. — Իսկ ես անոնց երկուքին ալ կը պնդեմ թէ սրախաղութիւնը գիտութիւններու մէջ ամենէ գեղեցիկն է ու պիտանին:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Հասկա փիլիսոփայութիւնն ի՞նչ է: Յիրաւի երեքտ ալ բաւական մակիրն ըլլալ պէտք էք որ զայսպիսի ամբարտաւանութեամբ խօսիք առջեւս, եւ անամօայսպիսի ամբարտաւանութեամբ խօսիք առջեւս, որք թաքար գիտութեան անուն տաք այնապիսի բաններու, որք թաքար գիտութեան անուն տաք այնապիսի չեն, եւ որոնք զինամըրաբուեստի անուան անդամ արժանի չեն, եւ պրոնք զինամըրաբիկ, երգիչ եւ պարորդի ողորմելի յորջորջմամբ միայն պէտք են ձանցուիլ:

ՄՐԱԿԱՋԻ ՈՒՍՈՒՑԻՉ. — Օ՞ն անզը, անպիտան փիլիսոփայ:

ԵՐԱԾՏ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Օ՞ն անզը, երկու փարանոց իմաստակ:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Օ՞ն անզը, անշա՞հ սովիեստէս:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Ի՞նչ, երեք սինլքորներ . . . :

(Փէլանդական առաջ վեց և յարշտելի, ու լու ձեզ ըստ հայութեան:)

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ. — Տէ՛ր փիլիսոփայ:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Լիրքե՛ր, անպիտաննե՛ր:

ՄՐԱԿԱՋԻ ՈՒՍՈՒՑԻՉ. — Յիմա՛ր անասուն:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ. — Պարոննե՛ր:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Սներեամնե՛ր, անամօթննե՛ր:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ. — Տէ՛ր փիլիսոփայ:

ՊԱՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. — Համեստաւո՞ր էշ:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ. — Պարոննե՛ր:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Սնղգամնե՛ր, անպիտաննե՛ր:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ. — Տէ՛ր փիլիսոփայ:

ԵՐԱԾՏ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Սեւերս, ԱՌՌ փիլիսոփայ:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ. — Պարոննե՛ր:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Նենդաւորնե՛ր, խարդախննե՛ր, անառակնե՛ր:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ. — Տէ՛ր փիլիսոփայ, Պարոննե՛ր, Տէ՛ր փիլիսոփայ, Պարոննե՛ր, Տէ՛ր փիլիսոփայ:

(Ծէծէւելու բառ է եւլու:)

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ, ԼԱՃ ՄԸ

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ. — Ո՞հ, զայէ՛ք ուզածնուղ չափ ծեծկուեցէք, ես չեմ կրնար զձեզ հանդարանեցնել, զձեզ իրարմէ զատելու համար պարեգոսս մէկ ստկի ընելու ժամանակ չունիմ: Երթալ իրենց մէջ խօթութիւն է, վրայէն հարուած մ'ալ ընդունեցայ որու ցաւը կ'զգամ դեռ:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ, ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ, ԼԱՃ ՄԸ

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — (Փողնոցը շտկելով). Գա՞նք մեր դասին:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ. — Ո՞հ, պարոն, կը ցաւիմ որ այնքան ծեծ կրաքաք:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Հող չէ: Փիլիսոփայ մ'ամէն բան համակերպութեամբ կ'ընդունի. Յոբնադի ոճով երգիծանութիւն մը պիտի հրատարակեմ՝ որ անոնց վայն ի զլուխը բերէ: Թո՞ղունք այս խնդիրը: Հիմայ ի՞նչ սորպիւ կ'ու գէք:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՏԻՆ. — Ի՞նչ որ կրնամ՝ սորպիւ կ'ու գէք: Վասն զի ամենամեծ փափաք ունիմ զիտնական ըլլալու: Կը բարկանամ որ ինչո՞ւ հայրս ու մայրս մանկութեանս ժամանակ բոլոր գիտութիւնները սորվեցնել չտուին ինձ:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉ. — Երաւացի է այդ զգացումը. Նամ, սինէ տօջրինա՛, վիդա էսդ ըլլազի մօրդիս իմակօ: Այս խօսքը կը հասկնաք. լատիներէն զիտէք անշուշտ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Այս', այլ բացատրէ՛ այդ խօսքին նշանակութիւնը՝ իրր թէ լատիներէն գիտցած չըլլայի:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Այս խօսքը կը նշանակէ թէ՝ առանց գիտութեան՝ կեամքը մահու պատկեր մ'է զբեթէ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Այս լատիներէնը շատ ճշմարփա բան մը կը խօսի:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Գիտութեանց սկզբնաւորութիւն՝ նախնական ծանօթութիւն մը չունի՞ք ամեննեւին:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Այս', ունիմ. կարգալ զրել զիտեմ:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Ուսկի՞ց կ'ուզէք որ սկիզբ ընենք, կ'ուզէ՞ք որ ձեզ տրամաբանութիւն սորվեցնեմ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Այդ տրամաբանութիւն ըսածդ ի՞նչ կ'ըլլայ կոր:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Տրամաբանութիւնը մտքի երեք գործողութիւնները կը սորվեցնէ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Ե՞ս, ո՞րոնք են եղեր մտքի այդ երեք գործողութիւնները:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Առաջինը, երկրորդը, երրորդը: Առաջինն է լաւ իմանալ ընդհանուրներու (universaux) միջոցաւ, երկրորդը՝ լաւ դատել ստորոգութեանց (catégories) միջոցաւ. Երրորդը ձիշտ հետեւութիւն մը հանիէ՝ ձեւերու միջոցաւ. Փարավարա, Անլարմնդ, Տառիի, Ֆերիօ, Փարավեդոն, եւ այլն:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Ի՞նչ կոչտ բառեր են ատոնք: Այս տրամաբանութիւն ըսածդ բանիս չգար, աւելի համով բան մը սորվի՞նք:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Կ'ուզէ՞ք բարոյազիտութիւն սորվիլ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Բարոյազիտութիւն:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Այս',

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Այդ բարոյազիտութիւն ըսածդ ի՞նչ բան է:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Բարոյազիտութիւնը երջանկութեան վլայ կը ճառէ, մարդուս կը սորվեցնէ իր կիրքերը չափաւորել, եւ

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Ա՛չ, թողունք այդ բարոյազիտութիւնը: Սաստիկ մաղձոտ մէկն եմ, եւ այս մասին որ եւ է բարոյազիտութիւն ստակ չըներ. կ'ուզեմ որ կը քի ելած ժամանակս բարկանամ ուղածիս չափ:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Կ'ուզէ՞ք բնագիտութիւն սորվիլ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Ե՞ս, այդ բնագիտութիւն ըսածդ ի՞նչ է:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Բնագիտութիւնն այն, է որ բնական բաներու սկզբունքները եւ մարմնոց յատկութիւնները կը սորվեցնէ, աարերաց, հանքերու, քարերու, առևնկերու եւ կենգանեաց բնութեան վրայ կը ճառէ, եւ բոլոր օգերեւոյթներու պատճառները կը սորվեցնէ. զոր օրինակ ծիրանի գօտին, ասուպները, գիտաւորները, փայլակները, որոտումը, կայծակը, անձրեւը, ձիւնը, կարկուաը, հովերը եւ հողմապոյտները (tourbillons):

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Շատ շնկոց՝ շատ խառնաշփռթութիւն կայ այդ բաներուն մէջ:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Ի՞նչ կ'ուզէք ուրեմն որ սորվեցնեմ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Ուզզագրութիւն սորվեցուք

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Շատ լաւ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Ետքն տօմարը կը սորվեցնեմ որպէս զի գիտնամ թէ երբ լուսին կայ, երբ չկայ:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Լաւ: Զեր նպատակին հետեւելու եւ այս նիւթու փիլիսոփայօթէն ճամեկու համար՝ հարկ է՝ իրերու կարգին համեմատ՝ նախ ձշափու ճամնչալ հասկնալ տառերու ընութիւնը, եւ զանոնք ամէնքն ալ արտասանելու տաղթեր տաղթեր կիրակերը: Այս մասին հարկ է ըսեմ՝ որ տառերը երկու տեսակ են. ճայնաւոք տառեր՝ վասն զի ձայները կ'արտայալան, եւ բաղաձայն տառեր՝ որք ձայնաւորներու հետ հնչին կը հանեն, եւ ձայներու զանազան արտաքրութիւնները կը յայնեն միայն լեզուի մէջ հինգ ձայներ կամ ձայնաւորներ կան. Ա է ի, օ, ու,

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Զեր ըստաներն հասկցայ քոլորն ալ:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Ա ձայնը բերանը ստամի բանալով կը ձեւանայ ա,

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Ա, մ Այս', այնպէս է:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Ե ձայնը վարի ծնուը վերին մօտեցնելով կը ձեւանայ ա, օ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ. — Ա, օ, ա օ իրաւ այդպէս ։ ի՞նչ գեղեցիկ բաներ են ասոնք:

ՓԻԼԻՍՈՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻԶ. — Եւ օ ձայնը ձայն իրար

աւելի մօտեցնելով, եւ բերնի երկու անկիւնները դէպի աշկանջները խոասրելով է, ա, ե, ի:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ա, ե, ի, ի, ի, ի, ճիշդ այդպէս է: Կեցցէ՛ գիտութիւն:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Օ ձայնը կը ձեւանայ մօտները բանալով եւ շրթունքները անկիւններու կողմէն մօտեցնելով, վերը եւ վարը օ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Օ, օ: Ամենամի՛շդ, ա, ե, ի, օ, ի, օ: Հիանալի բան է այս. ի, օ, ի օ:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Բերնի բացուածքը օ ձայնը ճշտիւ ներկայացնող պղտի կլոր մը կը ձեւացնէ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Օ, օ, օ: Իրաւունք ունիս: Օ, Գիտութիւնն ո՛րքան դեղեցիկ բան է:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Ս ձայնը կը ձեւանայ ակուները մօտեցնելով՝ առանց բոլորովին միացնելու եւ երկու շրթունքները դէպի ի գուրս տարածելով եւ զանոնք իրաք մօտեցնելով՝ առանց իսպառ միացնելու. ս:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ս, ս: Ըստ ամենայնի ճշմարիտ է ըսածդ. Ս:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Երկու շուրթերը կ'երկնան՝ որպէս թէ պոկանց ծոկառուք մ'ընէր մէկը՝ իր հեղնութեան կամ գժզոնութեան նշան: Այնպէս որ եթէ ուղէք այդ ծոկը տուքն ընելով ծաղըել մէկը, և միայն կընաք ըսել:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ս, ս: ճշմարիտ է: Ա՛հ, ինչո՞ւ աւելի կանուխ ուսում առած չըլլայի՝ բոլոր այս բաները գիտնալու համար:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Վաղը միւս տառերը պիտի ուսումնասիրենք՝ որոնք բաղաձայնելուն են:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Բաղաձայններու մէջ ալ ասանի հետաքրքրական բաներ կա՞ն արդիօք:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Անտարակոյս, / Օրինակի համար ձ բաղաձայնը կ'արտասանուի լեզուին ծայրը վերի ակուներուն վերեւը զարնելով: ձա:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ձա, ձա: Այս ի՞նչ աղուոր բաներ են, այս ի՞նչ աղուոր բաներ են:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Է բաղաձայնը՝ մըայի ակուները վաբի շուրթին կոթնցնելով: ժա:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Էա, ժա: Այս ալ ճշմարիտ է: Ա իմ հայրս, ա'լի իմ մայրս, ինչո՞ւ անուսում թողուիք զիս:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Եւ ր բաղաձայնը՝ լեզուի ծայրը քիմքի մինչեւ վերի կողմը տանելով: այնպէս որ թեթեւ մը շօշափուած օդին՝ որ զուրս կ'ելլէ ուժով, տեղի կուտայ, եւ տեսակ մը դողդոջիւնով կը դառնայ իր առջի տեղը՝ ր, րա:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ռ, ր, րա, ր, ր, ր, ր, ր, րա: ճշմարիտ է: Ա՛հ, ի՞նչ զիտուն մարդ ես եղեր, եւ ո՛րքան փուձ ժամանակ կորսնցաւցեր եմ. ր, ր, ր, ր, րա:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Բոլոր այս հետաքրքրական բաները պարագայիւք պիտի բացատրիմ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ա՛հ, այս', կ'աղաչեմ որ բացատրես: Սակայն հիմայ գաղտնի բան մը պիտի ըսեմ խոստովանաբար: Ամենաբարձր տոհնէ սիկնոց մը սիրահարած եմ. կուզէի որ օքնես ինձ պղտի տոմսակ մը գրելու՝ զոր իր ստից տակ պիտի ձգեմ:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Խի՛ստ լաւ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Կնամեծար ընթացք մը պիտի ըլլայ այս:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Անշուշտ: Կ'ուզէք ոտանաւո՞ր գրել իրեն:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ոչ, ոչ: ոտանաւոր չեմ ուշ զեր:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Արձա՞կ կ'ուզէք ուրեմն:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Զէ՛, ոչ արձակ կ'ուզեմ ոչ ոտանաւոր:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Ե՛հ, պէտք է որ կա՛մ մէկն ըսայ կամ միւսը:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ինչո՞ւ համար:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Այս պատճառաւ որ, միտքը յայտնելու համար կա՛մ արձակ կայ կամ ոտանաւոր:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Կամ արձակ կայ, եւ կամ ոտանաւո՞ր Կըսես:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Այս', պարօն: Ամէն ինչ որ արձակ չէ ոտանաւոր է, եւ ամէն ինչ որ ոտանաւոր արձակ է:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ե՛հ, հիմայ խօսանիս ի՞նչ է:

ՓԻԼԻՍՈՒՓ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Արձակ է:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒՐՏՏԵՆ. — Ի՞նչ, երբ կ'ըսեմ. սեփօ՛ւ, հո-

Վաթավներս եւ ցայգագլակս ըե՛րու ասիկա արձաէ:

ՓիլիՍոփ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Այո՛, պարոն:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Շա՛տ բա՛ն առանց զիտնալու քուսուն տարիէ ի վեր արձակ կը խօսիմ եղեր. շա՛տ շնորհ կալ եմ որ այս բանս սորվեցուցիր ինձի: Գալով մեր խնդրո կ'ուղեմ տոմսակի մը մէջ գրել. Գեղանի մարջիզուի, գեղեցիկ աչքերուդ կրակը կը մեռցնէ զիս Այլ կ'ուղէի կոկիկ ու շնորհքով դարձուածք մ'ունենար:

ՓիլիՍոփ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Պէտք է զրել թէ իր աչք րուն կրակը կ'այրէ կը խանձէ ձեր սիրաը, թէ գիշեր եւ ցու կը մրկիք, կը առչորիք իր սէրէն, թէ . . . :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Ո՛չ, ո՛չ, ո՛չ այդ խօսքերը ուղեր. ըսա՛ծս կ'ուղեմ միայն: Գեղանի մարջիզուի, գեղեցիկ աչքերուդ կրակը կը մեռցնէ զիս:

ՓիլիՍոփ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Սակայն այդ խօսքը քիչ ընդլայնել պէտք է:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Ո՛չ կ'ըսեմ: Կ'ուղեմ որ տոմսա մէջ այդ խօսքը միայն զրուած ըլլայ, բայց շնորհքով ու զին նորաձեւութեան համեմատ շակուած, և ննդիմ, և ինձ ի՞նչ տարբեր տարբեր ձևերով այդ խօսքը կը պրուիլ:

ՓիլիՍոփ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Նախ ձեր ըսած ձեւով կը զրուիլ. Գեղանի՛ մարջիզուի, ջու գեղեցիկ աչքերուդ կրակը մեռցնէ զիս: Կամ. Քու գեղեցիկ աչքերուդ կրակը, գեղ մարջիզուի, կը մեռցնէ զիս: Կամ. Քու գեղեցիկ աչքերը գեղանի մարջիզուի, կրակը կը մեռցնէ զիս: Կամ. Կրակը գեղեցիկ աչքերուդ, գեղանի մարջիզուի, կը մեռցնէ Կամ. Քու գեղեցիկ աչքերուդ, գեղանի մարջիզուի, կը մեռ զիս կրակը:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Բայց ամէն ձեւերէն ո՞ւն է լա գոյնը:

ՓիլիՍոփ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Ձեր ըսածը. Գեղանի քիզուի, ջու գեղեցիկ աչքերուդ կրակը կը մեռ

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Աւսմունք առած շրջալովս մէկ առաջին անդամէն աղէկ ձեւը գտեր եմ: Զավականց շնոր կալ եմ քեղմէ: վաղը կանուխէն գաս կը կին:

ՓիլիՍոփ. ՈՒՍՈՒՑԻՉԻՉ. — Սիրով:

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. ԼԱՅ ՄԸ

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (իր լաճին) Ի՞նչպէս, մեկնոցս չբերի՞ն դեռ:

ԼԱՅ. — Ո՛չ, պարոն, չբերին:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Այս թշուառական դերձակը բանը կ'ուշացնէ, ես ալ չատ զործ ունիմ այսօր: Բարկութենէս կը ճաթիմ, կրողի՞ն երթայ այդ անպիտան դերձակը: գետի՞նն անցնի այդ ոչուփուծ գերձակը: Մէյ մը ձեռքս անցնէ՛ր սա շուն դերձակը, սա անզգամ դերձակը, սա զարշելի դերձակը . . . :

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ, ԴԵՐՁԱԿ, ԴԵՐՁԱԿԻ ՄԱՆՉ ՄԸ
Ճեռքը Պ. Ժուրտսկի մեկնոցը, ԼԱՅ ՄԸ

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Ա՛չ, եկա՞ր վերջապէս: Եթէ քիչ մ'ալ ուշանայիր՝ պարզապէս պիտի նեղանայի քեզ զէմ:

ԴԵՐՁԱԿ. — Աւնլի կանուխ չկրպայ զալ: դուցէ քսան աշկերտ աշխատացուցի ձեր մեկնոցին:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Երկած մետաքսեայ գուլպաներդ այնքան նեղ են՝ որ մինչեւ հագնիլս հոգիս բերանս եկաւ: Երկու տեղէ ալ բացուեցան արդէն:

ԴԵՐՁԱԿ. — Անոնք երթալով կը լայնան, անհոգ եղիք:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Այո՛, ուրիշ կողմիրէ ալ բացուելով: Շինել տուած մոճակներդ ալ ոտքս սոսկալի կերպով կը ցաւպնեն:

ԱՐՁԱԿ. — Զէ, այդ չկրնար ըլլալ, պարոն:

ԴԵՐՁԱԿ. — Ի՞նչպէս չկրնար

ՐՈՒ. ԺՈՒՐԾ

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Այդպէս կ'երեւակայեմ վասն զի ցաւը կ'զգամ: Տեսէ՛ք սըւոր ըսած խօսքը:

ԴԵՐՉԱԿ. — Ահա ձեզ ամենափասաւոր մեկնոց մը, խիստ լաւ յարմարցուած: Հրաշակերտ մ'է լուրջ մեկնոց մը հնարել որ սեւագոյն չըլլայ: Բարիզի ամենէ քաջ զերծակն՝ թող ասանկ մեկնոց մը շինէ՝ եթէ կրնայ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ի՞նչ է այս. ծաղիկները զլխիվար զրեր ես:

ԴԵՐՉԱԿ. — Ինձ չըսիք որ զլխիվեր զնեմ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Այդ ալ ըսե՞լ պէտք է:

ԴԵՐՉԱԿ. — Հարկաւ. Ամէն ազնուական անձանց մեկնոց ներուն վրայ զլխիվար դրուած են:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ազնուական անձանց մեկնոցներուն վրայ ծաղիկները զլխիվա՞ր դրուած են կ'ըսես:

ԴԵՐՉԱԿ. — Այս՛, պարսն:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Եթէ այդպէս է՝ լաւ ուրեմն:

ԴԵՐՉԱԿ. — Եթէ կ'ուզէք՝ զլխիվեր կը դարձնեմ զանոնք:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ո՛չ, ո՛չ.

ԴԵՐՉԱԿ. — Բաւական է որ այդպէս հրաման ընէք:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Զէ, կ'ըսեմ. աղէկ ըրեր ես. Այս մեկնոցը ի՞նչպէս է. կը վայլէ՞ ինձ:

ԴԵՐՉԱԿ. — Այդ ալ խօ՞սք է: Ո՛ր պատկերահանը կ'ուզէ թող ելլէ իր վրձինովը ատկէ աւելի ճիշդ ու ճիշդ բան մը նկարէ: Խանութիս մէջ աշակերտ մ'ունիմ որ լայն տեսակէ զստապան շինելու մասին աշխարհի ամենէ մեծ հանձարն է. նոյնպէս ուրիշ աշակերտ մ'ալ որ բաճկոնակի մը մասերը մէկտեղ բերելու կողմէ ժամանակիս ամենէ անուանի վարպետն է:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Կեզծամը եւ փետուրները ի՞նչպէս էն, չնորհքո՞վ են:

ԴԵՐՉԱԿ. — Ամէն բան կարգին է:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — (Դերձակը դիտելով.) Ա՛յ, ա՛յ, պաշտոն սերծակ, կը ճանչնաք, վերջին անգամ ինձ շինած մակնուտառէն է այս հագածը:

Ի՞նք ո՞ն սաստիկ հագած:

Վաստակած է այս պատասխանը:

Վաստակած է այս պատասխանը:

Վաստակած է այս պատասխանը:

Վաստակած է այս պատասխանը:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Այս՛, առ' որ նայիմ:

ԴԵՐՉԱԿ. — Կեցի՛ք, այսպէս չըլլար. հետո մարդիկ բերած եմ որ նուազաւոր չարժումներով հազուեցնեն զծեղ, զի այս տեսակ մեկնոցներ արարողութեամբ կը հազնուին: Ծօ՛, ո՞ւր էք, եկէ՛ք:

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. ԴԵՐՉԱԿ, ԴԵՐՉԱԿԻ ՄԱՆՉՅ, պարող

ԴԵՐՉԱԿԻ ՄԱՆՉՅԵՐ, ԼԱՃ ՄՅ

ԴԵՐՉԱԿ. — (իր մանչերուն.) Այս մեկնոցը հազցուցէք պարոնին՝ ինչ կերպով որ կը հազնէք ազնուատոհմ անձերու: ✓

Ա.Ա.ՁԻՆ ՊԱՐԱԽԱՂ

(Դերձակի վրա պարող հայեցը Պ. Ժուրտելնէ կը հայենան: Երիշուն անոր հաշուծ շուտապանը կը տաշեն իս հանեն, իսի միսս երիշունը՝ անոր տոմանակը, որին եւս՝ Քիշ Նաւադառը շրջանավով՝ նոր գիշուց է հասդնեն: Պ. Ժուրտելն անուց Քիշեղ ճեմելով՝ Հինուց էս սուշունէ՝ որի անուն է Անուշուն: Երաշունը կը անուշուն է: Երաշունը կը անուշուն է իւնեն:)

ԴԵՐՉԱԿԻ ՄԱՆՉՅԵՐ. — Պերճ սեպուհ, հաճեցէ՛ք մանչերուն նուէր մ'ընել:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ի՞նչպէս անուանեցիր զիս:

ԴԵՐՉԱԿԻ ՄԱՆՉՅԵՐ. — Պերճ սեպուհ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Պերճ սեպուհ: Ահա ի՞նչ բան է աղնուականի նման հագուիլ կապուիլը: Պարզ քաղքենիի նման հագուէ՝ ո՞վ Պերճ սեպուհ անունը կուտայ քեզի: (Ասակ տաղով.) Ահա՝ Պերճ սեպուհ անուանելուզ վարձքը:

ԴԵՐՉԱԿԻ ՄԱՆՉՅԵՐ. — Վսեմապատիւ տէ՛ր, չափազանց երախտապարա ենք ձեզ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Վսեմապատիւ տէր: Ո՞հ, ո՞հ, վսեմապատիւ տէր: Կեցի՛ք, «վսեմապատիւ տէր» ը վարձուց արժանի է: «վսեմապատիւ տէր» ը պլատիկ խօսք է: Ահա, «վսեմապատիւ տէր» ը պեղ պարզիւ կը չնորհէ:

ԴԵՐՉԱԿԻ ՄԱՆՉՅԵՐ. — Վսեմապատիւ տէ՛ր, ամէնքս ալ ախտի երթանք ձեր մեծութեան արեւշտառութեան համար չինի խմբնք:

ՊԱՐՈՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Զեր մհծութեան. ո՞հ, ո՞հ, ո՞հ: Կեցի՛ք, մի՛ երթար, « Զեր մհծութեան » ըսող, եկո՛ւր: (Մեղմ՝ մեկուսի.) Եթէ գործը « բարձրապատութեան հանէ՛ քսակիս մէջ եղածը չեղածը պիտի տամ »: (Բարձր.) Ա՛ռ սըւի « ձեր մհծութեան » խօսքին համար:

ԴԵՐՁԱԿԻ ՄԱՆՉՀ. — Վաստավախւ տէ՛ք, ձեր մհծութեան առատաձեռնութեան համար խոժարհաբար չնորհակալութիւն կը յայտնենք:

ՊԱՐՈՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Աղէկ որ « բարձրապատութեան » չըսաւ. զրպանիս ըոլոր ստակը պիտի տայի:

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԱԽԱՂ,

(Դերյակի շուրջ յանշեց Պ. Ժուարտենի դաստիարակութեան համար
հետագա կը դուենաւ:)



ԱՐԱՐՔ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՊԱՐՈՆ ԺՈՒԻՐՏԵՆ, ԵՐԿՈՒ ԼԱԶԵՐ

ՊԱՐՈՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Ետեւէս եկէ՛ք. բոլոր քաղաքը պիտի դառնամ մեկնոցս ցուցնելու համար. երկուքդ ալ նայեցէ՛ք որ ճիշտ քայլափոխներուս վրայէն քալէք՝ որպէս զի իմ լաճերս ըլլալնիդ լաւ հասկցուի:

ԼԱՃԵՐ. — Այո՛, պարսն:

ՊԱՐՈՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Նիքոլը կահչեցէ՛ք. քանի մը պատուէրներ ունիմ տալիք: Ո՛չ, ահա կուգայ, մի՛ շարժիք տեղերնէդ:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՊԱՐՈՆ ԺՈՒԻՐՏԵՆ, ՆԻՔՈԼ, ԵՐԿՈՒ ԼԱԶԵՐ

ՊԱՐՈՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Նիքօ՛ւ:

ՆԻՔՈԼ. — Հրամմեցէ՛ք:

ՊԱՐՈՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Մատիկ ըշէ՛:

ՆԻՔՈԼ. — (ծիծաղելով.) Հի, հի, հի, հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Խնդալու ի՞նչ բան կայ, լիրբ աղջիկ:
ՆԻՔՈԼ. — Հի, հի, հի, հի, հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Այս ջլթիկն ինչու կը խնդայ:
ՆԻՔՈԼ. — Հի, հի, հի: Այդ ի՞նչ եղեք էք: Հի, հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ի՞նչ եղե՞ր եմ:
ՆԻՔՈԼ. — Ա՛հ, ա՛. այդ ի՞նչ բան է: Հի, հի', հի', հի', հի:
ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ի՞նչ աներես աղջիկ է աս: Ի՞նչ, կը
ծաղրե՞ս զիս:

ՆԻՔՈԼ. — Ո՛չ, պարոն, ինչու ծաղրեմ: Հի, հի, հի, հի,
հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Եթէ մէյ մ'ալ խնդաս՝ քթիդ բեր-
նիդ լաւ մը պիտի ասմ:

ՆԻՔՈԼ. — Ի՞նչ ընեմ, տէր իմ, չեմ կրնար ինքինքս
բանել: Հի, հի, հի, հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Վերջ պիտի տա՞ս թէ ոչ:

ՆԻՔՈԼ. — Ներեցէ՛ք, տէր իմ. այնքան տարօրինակ երե-
ւոյթ մ'ունիք որ չեմ կրնար ծիծաղս բանել: Հի, հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Տեսէ՛ք մէյմը աս աղջկան լրբու-
թիւնը:

ՆԻՔՈԼ. — Չեր այդ հագուստներով իրաւցնէ զուարձալի
բան մ'եղած էք: Հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Հիմա՛յ զքեղ ... :

ՆԻՔՈԼ. — Կ'աղաչեմ, մի՛ բարկանաք: Հի, հի, հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Եթէ ամենապղախ ծիծաղ մը տես-
նեմ, այնպիսի ապտակ մը պիտի իջեցնեմ երեսիկ՝ որ ո՛ւր
ըլլալդ չըլլալդ դուն աւ չփանաս:

ՆԻՔՈԼ. — Է՛հ, խիստ լաւ, պարոն, չեմ խնդաբ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Աչքդ չորս բա՛ց: Հիմայ երթաս
սրահը ... :

ՆԻՔՈԼ. — Հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Երթաս, կ'ըսեմ, սրահը ... :

ՆԻՔՈԼ. — Հի, Հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Լաւ մը մաքրես, եւ ... :

ՆԻՔՈԼ. — Հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Դա՞րձաւ:

ՆԻՔՈԼ. — (խնդու/կն գետին իշմաղով.) Պարոն, ծեծեցէք
զիս՝ եթէ այդ է ձեր կամքը, եւ թողէք որ կուշա մը ինդամ՝
եթէ ոչ պիտի ճաթիմ: Հի, հի, հի, հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Հի՛ մայ կը ժաթիմ:

ՆԻՔՈԼ. — Կ'աղաչեմ, տէր իմ, թողէ՛ք որ խնդամ: Հի, հի,
հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Մէյմը բանե՞մ զքեղ ... :

ՆԻՔՈԼ. — Եթէ չխնդամ՝ պիտի ճաթիմ: Հի, հի, հի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ո՞ւր տեսնուեր է ասանկ զետինն
անցնելիք սպասուհի մ'որ հրամաններս մտիկ ընելու տեղ՝
ելլէ լրբօրէն խնդայ երեսիս:

ՆԻՔՈԼ. — Է՛հ, ի՞նչ է ձեր հրամանը, պարոն, ըսէք:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Պահեկէ մը հիւրեր պիտի դան,
տունն հաւքտե՛ս, աներե՛ս ծառայ:

ՆԻՔՈԼ. — (ոտ եղեղով.) Ո՛հ, հիմայ խնդուքի ամէն ա-
խորհակս փախսւ, ձեր հիւրերն որոնց մէկը կ'կրթայ միւսը
կուգայ, տունը տեղն այն ասավձան տակնուվրայի կը բերեն՝
որ բոլոր զուարթութիւնս կորսնցունելու համար այս մէկ
բառը բաւական է:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Զըսե՞ս, անպիտան, որ քեզի համար
գուստ ամէն հիւրի առջեւ գոցել պէտք եմ եղեր:

ՆԻՔՈԼ. — Եթէ ոչ ամէնուն՝ գոնէ ոմանց առջեւ շատ ա-
լէկ կ'ընէիք, պարոն, ձեր գուստ գոցելով:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ, ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ, ՆԻՔՈԼ.
ԵՐԿՈՒ ԼԱՑԵԲ

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ա՛հ, ա՛հ, ահա նոր արտառոցու-
թիւն մ'ալ էրի՛կ, ի՞նչ է այդ հագուստ կապուստ: Այդ
կերպ հագուստով՝ չե՞ս մտածեր հասարակութիւնը. կ'ուզես
որ ամէն տեղ ծիծաղի՞ն վրադ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Դարսակները՝ անխելքնե՛րը միայն
պիտի ծիծաղին վրաս:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Բոլոր աշխարհ զքեղ ծաղրելու հա-
մար այս ժամուս սպասելու պէտք չունէր. երկա՛ք ժամա-
նակներէ հետէ քու տրարքներդ հանրութեան ծիծաղը կը
շարժեն:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Բայ հայիմ անդամ մը, ո՞վ կ'ըլլան
որ այս հանրութիւն ըսածդ:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Սյս հանրութիւնն այնպիսի հանրութիւն մ'է՝ որ իրաւունք եւ քեզմէ ալ աւելի խելք ունի, ձևարիտ կ'ըսեմ, վարած կեանքէդ ե՛ս մ'ամչնամ: Չեմ հասկնար թէ մեր տունը տեղն ի՞նչ է: Հոս կարծես թէ ամէն օր բարեկենդանի վերջին օրն եղած ըլլայ, եւ առտուընէ սկսեալ պարագ կատարած ըլլալու համար ջութակներու եւ երգիչներու գոռուգոչ մը կայ՝ որ զրացիները ամէն ժամ անհանդիսա կ'ընէ:

Նիբոլ. — Տիկինը շատ շիտակ կը խօսի, ես որ տունը տեղը միշտ մաքուր բանելու հոգ կը տանիմ՝ ա՛ւ քաշելիքս չմաց շատ մը անպէտ եւ անօգուտ մարդերէ՝ դորս չփառեմ ի՞նչ պատճառաւ ձեր գլուխը կը ժողվէք: Անօնց ուաքերը թաղերուն բոլոր տիզմը ժողվելով՝ հոս կը բերեն, եւ խեղճ լրարիամին հոգին կ'ելլէ տախտակները չփելէն ու չփելէն՝ զորոնք ձեր համովիկ պարոնները ամէն օր շարունակ կը ցեխուտեն:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Հէ՛, մեր նիքոլ սպասուհին. թեպէտ գեղջուկ մը՝ այլ այնպիսի բանուկ լեզու մ'ունի որ . . . :

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Նիքոլ իրաւունք ունի, եւ իր խելքը քուկինէդ շատ է: Կ'ուղէի գիտնալ թէ այդ քու տարիքիդ մէջ պարու դասատուն ի՞նչ պիտի ընես:

Նիբոլ. — Ինչպէս նաեւ սրախաղի այդ յաղթահասակ վարպետ՝ որ իր ոտքի տոփիւներով բոլոր տունը կը գորդէ, եւ սրահին ապակիները կը սասանէ տեղերնէն:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Դո՛ւն սպասուհիս եւ դո՛ւն կինս, ձայներնիդ քաշեցէք:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Բայ՛ նայիմ, ա՞յն ժամանակին համար կ'ուղես պարել սորվիլ՝ երբ ուաքերդ կարող պիտի չըլլան շարժելու:

Նիբոլ. — Մէկը մեսցնելու մի՞տք ունիք՝ որ սրախաղի վարժութեան ելեր էք:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Զայներնիդ քաշեցէք կ'ըսեմ: Երկուքնիդ ալ մէկմէկէ աւելի մեծ տղէաներ էք՝ որ այդ վարժութեանց օգուտները չէք հաւենալ:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Պէտք էլք մանաւանդ քու աղջկան:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Աղջկանս վրայ պիտի մտածեմ՝ փեսայ մ'ելլէ: բայց աղուստ բանելու տարիքին մէջ է:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Աղջկանս վրայ պիտի մտածեմ՝ մտածեմ:

Նիբոլ. — Սա ալ իմացայ, տիկին, որ յիմարութիւնը կատարնալ ըլլալու համար այսօր ելեր փիլիսոփայութեան վարժապետ մ'ալ բաներ է:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Անչուշա կը բռնեմ: Ես կ'ուզեմ խելք ունենալ եւ ամէն բանի վրայ տրամաբանել գիտնալ շնորհագոյն հասած միջոցիս:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Է՛հ, չես ելլեր վարժարան ալ չե՞ս երթար՝ որպէս զի այդ տարիքիդ մէջ զաւազանով ծեծ ալ ուտես:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Ինչու չէ: Ո՞ւր էր թէ այս ժամուս իսկ հրապարակաւ ծեծ ոււեէի՝ գպրոցի մէջ սորվուած բաները զիտնալու համար:

Նիբոլ. — Այո՛, անտարակոյս, ասով ծեր սրունքը եղած աւելի ձեւաւո՞ր պիտի ըլլար:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Անչուշա:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Տունդ կառավարելու համար շիտակը շա՞տ պէտքացու են այդ բաները:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Անչուշա պէտքացու են, Դուք երկուքդ ալ անբան անհասուններու պէս կը խօսիք, ծեր աղիտութեան վրայ ե՛ս կ'ամչնամ: (Տիկին Ժուրցէնի.) Օրինակի համար, ըստ՝ նայինք, զիտե՞ս թէ այս պահուս խօսածդ ի՞նչ է:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Այո՛, զիտեմ թէ խիստ ճիշդ խօսք մ'է խօսածս, եւ թէ ընթացքդ փոխել պէտք ես:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Ասոր վրայ չէ խօսքս, քեզ կը հարցնեմ, ի՞նչ են ըստ խօսքերդ:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Ըստաներս շա՞տ իրաւացի խօսքեր են, իսկ քու ընթացքդ խիստ յիմար:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Խօսքս ատոր վրայ չէ, կ'ըսեմ, կը հարցնեմ թէ ինչ որ կը խօսիմ, ինչ որ կ'ըսեմ այս ժամուս՝ ի՞նչ է:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Պարապ խօսքեր:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Ո՛չ, ո՛չ, այդ չէ հարցուցածս: Երկուքնուս ըստ, այս ժամուս մեր խօսած լեզուն:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Է՛հ խօսած ի՞նչ է եղեր երկուքնուս լեզուն:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Կը հարցնեմ թէ ի՞նչ անուն ունի:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Ինչ անուն որ տալ սղես՝ այն առունն ունի:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Արձակ է, արձակ, անիմաստ տղէս:
Կի՞ն: Տիկին ժՈՒՐՑԵՆ. — Արձակ մի:
ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Այո՛, արձակ: Ամէն ի՞նչ որ արձակ
է ոտանաւոր չէ, եւ ամէն ի՞նչ որ ոտանաւոր չէ՝ արձակ է
կը տեսնե՞ս և ի՞նչ բան է եղել ուսմունք առնուլը: (Նիշօլին) և
կը տեսն ալ ըսէ՛ նայինք, դիտե՞ս թէ ի՞նչ ընել պէտք է:
Նիբոլ. — ի՞նչ խօսք է ադ:
ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Այո՛: Ֆրանսերէն և ըսելու համար
ի՞նչ կ'ընես:
Նիբոլ. — ի՞նչ:
ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Ս ըսէ՛ տեսնեմ:
Նիբոլ. — Ահա կ'ըսեմ. ու:
ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — ի՞նչ է այդ ըսածդ:
Նիբոլ. — Այդ ըրած և ըսել է:
ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Այո՛, բայց և ըսած միջոցիդ թէ:
Կ'ընես:
Նիբոլ. — Ըսած բանդ կ'ընեմ:
ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Ո՞հ, ախմարներու հետ գործ ունե-
նալ ի՞նչ անտանելի բան է եղեր: Շրթունքդ զէպի զուրս
կ'երկնցնես, եւ վերի ծնօտդ վարինին կը մօտեցնես. ու կը
տեսնե՞ս: Շրթերու ծոմրտուք մը կ'ընեմ. ու:
Քիբոլ. — Այո՛, աղուոր զիտելիք մ'է եղեր այս:
Տիկին ժՈՒՐՑԵՆ. — Շխտակը սքանչելի՛ բան:
ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Այլապէս աղուոր է եթէ տեսնելու
թէ ի՞նչպէս կ'արտասանուի օ, եւ да, да, եւ ժա, ժա:
Տիկին ժՈՒՐՑԵՆ. — ի՞նչ ափեղցփեղ խօսքեր:
Նիբոլ. — Այդ ամէն բաներուն օգուտն ի՞նչ է:
ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Կը ճաթիմ երբ այսպէս տղէտ կի-
ներ կը տեսնեմ առջեւս:
Տիկին ժՈՒՐՑԵՆ. — Հաւատա՛ ի՞նձ, իսկստ լաւ գործ մը
ըրած կ'ըլլաս եթէ այդ բոլոր մարդիկն իրենց փուլումուն
դիտածներով դուրս վնասես տունէդ:
Նիբոլ. — Եւ մանաւանդ այդ սրտիսպի վարպետ ըսուած
ուղար՝ որ տունը սեղը փոշիով կը լեցնէ:
ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Է՞ս, զուն ալ այդ մարդը չես կը մա-
քաշել: Քու անճռութիւնդ ցուցնեմ հիմայ որ հասկնա
(Երկու փորձարուրեր բերել տալով մեկը Նիշօլի ձեռք կ-

տայ.) Ահա՛ ապացուցական պատճառ, մարմնոյ զիրքը թշնամ-
ւոյն դէմ: Երբ թրածայրով չորեակ հարուածը տաս՝ սապէս
պիտի ընես, երբ եռեակ հարուածը տաս՝ սապէս: Այս կերպով
հակառակորդէդ չես սպաննուիր: գեղեցիկ չէ՞ այս՝ որ մէկու
մը հետ կռուած ժամուգ չմեռնելուդ վրայ վստահ ըլլաս: Նա՛,
թրածայրով հարուածէ որ տեսնես

Նիբոլ. — Օ՞ն, տեսնենք ի՞նչպէս կ'ըլլայ:

(Հետո նշանակութիւն կատարութիւն կատարենք Պ. Ժամանեանի:)

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Է՞ս, ի՞նչ է այդ, կամաց կամաց
վայ գետինն անցնելիք աղջիկ, վայ:

Նիբոլ. — Դուք չըսի՞ք որ թրածայրով հարուածեմ:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Այո՛, այլ գուն եռեակ հարուածը
կռուած՝ չորեակէն յառաջ, եւ չես թողուր որ խոտորեմ այդ
հարուածը:

Տիկին ժՈՒՐՑԵՆ. — Դուն քու քմայքներովդ խենթեցեր
ես, էրիկ. եւ այս խենթութիւնը աղնուականներու յաճախե-
լէդ ի վեր վրադ եկաւ:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Աղնուականաց յաճախելով ես խելք
ունենալս կը ցուցնեմ. քու է անաֆներուդ յաճախելէդ հաղար
անդամ գեղեցիկ է այս:

Տիկին ժՈՒՐՑԵՆ. — Է՞ս, շիտակը աղնուականաց յաճա-
խելէդ շա՞տ բան կը շահիս. շա՞տ լաւ զործեր տեսար մանա-
ւանդ այդ վայինչագնեստ կոմսին հետ՝ որ խելքդ միտքդ ա-
ռած է:

ՊԱՐՈՒ ԺՈՒՐՑԵՆ. — Լոէ՛, կնիկ, բերնէդ ելածը գիտցի՛ք:
Դուն անոր վրայ խօսած ատենդ չես զիտեր թէ ո՞րու վրայ
կը խօսիս: Նա քու կարծածէդ աւելի բարձր մարդ է, աղնուա-
կան մ'որ մեծ պատիւ ունի ամեն աեղ եւ որ ի՞նչպէս ես քեզի
կը խօսիմ այնպէս կը խօսի. մեծերու հետ ի՞նձ համար մեծ
պատիւ չէ՞ որ ասանկ նշանաւոր մարդ մը տունս մտնէ ելլէ,
միրելի բարեկամը կոչէ զիս, եւ իբր առ հաւասար հետս

և Եջու շալեսիրտ աղնուականը խելքէ մտքէ չանցած
ն կը ցուցնէ ի՞նձի որ ես իսկ կ'ամչնամ:

Ա, Յիշիւթիւն. — Այո՛, քեզի փայտայանքներ կ'ընէ եւ
կերպ աղնուաւթիւններ կը ցուցնէ, այլ միեւնոյն ժա-
մանակներդ կը քաշէ:

Ա, ԺՈՒՐՑԵՆ. — Այդ ի՞նչ խօսք է. ի՞նձի համար պա-

տիւ չէ ատանկ բարձրաստիճան մէկու մը ստակ փոխ տալ այդշա վն ալ չընեմ այնպիսի բարձր ազնուականի մ'որ իր սիրելի բարեկամը կ'անուանէ զիս:

Տիկին ժՈՒՐՏէՆ. — Է՛ն, այդ բարձրաստիճան մարդք այդ ազնուականը քեզ համար ի՞նչ կ'ընէ:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Այնպիսի բաներ՝ որ եթէ գիտնաս դուն ալ պիտի գալումանաս:

Տիկին ժՈՒՐՏէՆ. — Է՛ն ի՞նչ է եղեր այդ ազնուականին քեզ ըրածը:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Ատիկայ չեմ կրնար խօսիլ Արդէն իրեն տուած ստակս քիչ տատենէն պիտի հատուցանէ:

Տիկին ժՈՒՐՏէՆ. — Վա՛յ խելքիդ որ պիտի հատուցանէ:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Անտարակոյս կը հատուցանէ. ի՞ո՞սք տուաւ:

Տիկին ժՈՒՐՏէՆ. — Այո՛, այո՛, խօսք տուաւ, այլ պիտի տեսնես թէ այդ խօսքը չպիտի բռնէ:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Իր ազնուականութեան վրայ երդուցցաւ թէ պիտի հատուցանէ:

Տիկին ժՈՒՐՏէՆ. — Սպասէ՛, եթէ բան չունիս:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Այդ ի՞նչ պինդգլուխ կնիկ ես եղեր. ես ապահով եմ որ անիկա իր խօսքը պիտի բռնէ:

Տիկին ժՈՒՐՏէՆ. — Ես ալ ապահով եմ թէ չպիտի բռնէ. բոլոր այդ փայփայանքը զքեզ խարել խարխելու համար է միայն:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Լո՛ւռ: Ահա կուգայ:

Տիկին ժՈՒՐՏէՆ. — Այդ այցելութիւնը պակաս էր. գալուն պատճառը գուցէ նոր փոխառութիւն մ'ըլլայ. սրտիս նեղութիւն կուգայ երբ սա կոմսիդ երեսը կը տեսնեմ:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Լո՛ւռ, կ'ըսեմ:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՏՕՐԱՆԴ. ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. Տիկին ժՈՒՐՏէՆ.

ՏՕՐԱՆԴ. — Սիրելի բարեկամս Պարոն Ժուրտէ՛ էք, ոինտ էք:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Աղէկ եմ, վա՛ռ ուսք Ար յարգութեան ծառայ:

ՏՕՐԱՆԴ. — Տիկին Ժուրտէնը ի՞նչպէս է, Տիկին ԺՈՒՐՏէՆ. — Տիկին Ժուրտէնը ի՞նչպէս կը տեսնէք՝ այնպէս է:

ՏՕՐԱՆԴ. — Այդ ի՞նչ սքանչելի մեկնոց հագած էք, Պարոն Ժուրտէն:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Ինչպէս կը աեսնէք:

ՏՕՐԱՆԴ. — Ձեր այդ մեկնոցով սուրովին աղնիւ ձեւ մը ունիք. երիտասարդ ազնուականները ձեզի չափ չնորհքով չեն:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Ի՞նչեր կ'ըսէք, ի՞նչեր կ'ըսէք, պարոն Տօրանդ:

Տիկին ժՈՒՐՏէՆ. — (Անկուսի.) Խաբերա՞ն էրկանս տկար կողմէն կը բռնէ:

ՏՕՐԱՆԴ. — Դարձէ՛ք անդամ մը որ տեսնեմ. խի՛ստ ընտիր, խի՛ստ վայելուչ:

Տիկին ժՈՒՐՏէՆ. — (Անկուսի.) Այո՛, որքան առջեւէն՝ նոյնքան եւ ետեւէն՝ յիմար ու անխելք:

ՏՕՐԱՆԴ. — Հաւատացէ՛ք պարոն Ժուրտէն, խիստ անհամբեր էի զձեղ տեսնելու: Աշխարհի մէջ չկայ մէկը որ այնքան յարգեմ. այս առաւօտ դարձեալ ձեր վրայօք կը խօսէի բարձր շվանակներու մէջ:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Մեծ պատիւ կ'ընէք ինձ, պարոն:

(Տիկին ԺուրտէՆ.) Լսեցի՛՛:

ՏՕՐԱՆԴ. — Գլխարկներ զըէ՛ք, պարոն Ժուրտէն:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Ոչ, պարոն, պէտք է պատշաճ յարգանքը լնեմ ձեզ:

ՏՕՐԱՆԴ. — Հոգ չէ՛, զըէ՛ք կ'ըսեմ. մեր մէջ այդպիսի ձեւերու հարկ չկայ:

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Ի՞նչ, պարոն, կարելի՞ է որ

ՊԱՐՈՒ ժՈՒՐՏէՆ. — Դըէ՛ք գլխարկներ զինելով.) Աւելի լաւ է անքաղաքավար ըլլալ քան նեղացուցիչ:

ՏՕՐԱՆԴ. — Գիտէք թէ պարտք ունիմ ձեզի:

Տիկին ժՈՒՐՏէՆ. — (Անկուսի.) Ո՛հ, այդ բանը շատ աղէ՛ վատենք:

ՅԱ. ՅԵՒ. — Շատ սկանդալական մէջ աղնուօրէն դրամ փոխ տառով՝ արդարիւ զիս պարտական թղղած էք:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Կ'աղաշեմ, պարոն կոմս, այդպիսի խօսքեր մի՛ ընէք:

ՏՕՐԱՆԴԻ.—Այլ ես թէ՛ առածս վճարող եւ թէ՛ մատուցուած ծառայութիւն մը ձանչցող մարդ եմ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Ատոր տարակոյս չունիմ, պարոն կոմս :

ՏՕՐԱՆԴԻ.—Կ'ուզիմ ձեզ պարտքս հատուցանել, եւ մեր հաշիւները աեսնելու գիտամամբ եկած եմ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Տիկին ժուրտենի.) Զէի՞ ըսեր քեզ:

ՏՕՐԱՆԴԻ.—Տեմինք հիմայ ի՞նչ է պարտքս:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Տիկին ժուրտենի.) Կը հասկնա՞մ թէ ո՛րքան ծաղրելի էին կասկածներդ:

ՏՕՐԱՆԴԻ.—Կը յիշէ՞ք ձեր տուած ստակները:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Միտքս է կարծեմ, ահա՛ անոնց ցուցակը: Անգամ մը ձեզ տրուած՝ երկու հարիւր ուղի՞:

ՏՕՐԱՆԴԻ.—Ճիշդ է:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Ուրիշ անգամ մը՝ հարիւր քսոն ոսկի:

ՏՕՐԱՆԴԻ.—Ճիշդ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Ուրիշ անգամ մ'ալ՝ հարիւր քսոն ոսկի:

ՏՕՐԱՆԴԻ.—Ճիշդ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Հնդամէնը կ'ընէ չորս հարիւր ոսկի:

ՏՕՐԱՆԴԻ.—Ամենաճիշդ հաշիւ, չորս հարիւր ոսկի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Ձեր փետրավաճառին հարիւր եօթւ սունըչորս ոսկի եւ քսանհինգ գրուշ:

ՏՕՐԱՆԴԻ.—Ճիշդ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Երկու հարիւր քսոնասուն եւ ինն ոսկի եւ եօթսուն զրուշ ձեր գերձակին:

ՏՕՐԱՆԴԻ.—Ճիշդ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Երեք հարիւր իննսուն ոսկի եւ երեսուն եւ կէս զրուշ ձեր զանազան իրեղէններու վաճառականին:

ՏՕՐԱՆԴԻ.—Շատ ճիշդ: Երեսուն եւ կէս աւ չըսուշ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Եւ հարիւր գալթուն եւ հինգ ոսկի, քառսուն երկու զրուշ ձեր թամբագալանին:

ՏՕՐԱՆԴԻ.—Եիստ ճիշդ բոլորն ալ: Ընդամենը ի՞նչ կ'ընէ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Ընդամենը կ'ընէ ինն հարիւր ութսուն եւ ութսուն ոսկի՝ լիրան հարիւր զրուշէն, եւ վաթսուն եօթ զրուշ քսան փարայ: Հարիւր ոսկի եւս զրէք՝ զոր եւ եօթ զրուշ քսան փարայ: Հարիւր ոսկի եւս զրէք՝ զոր սկար տաք ինձի, կ'ընէ ճշգիւ հազար ութսուն եւ ութսուն ոսկի:

ՏՕՐԱՆԴԻ.—Ընդհանուր զումարն ալ ճիշդ ինն հարիւր ութսուն եւ ութսուն ոսկի՝ լիրան հարիւր զրուշէն, եւ վաթսուն եօթ զրուշ քսան փարայ: Հարիւր ոսկի եւս զրէք՝ զոր սկար տաք ինձի, կ'ընէ ճշգիւ հազար ութսուն եւ ութսուն ոսկի:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Պ. ժուրտենի.) Ե՞ս, ի՞նչ պէս եղաւ հիմայ, հասկցա՞ր՝ ձիշը զուշակե՞ր էի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Տիկին ժուրտենի.) Լոէ՛:

ՏՕՐԱՆԴԻ.—Ի՞նչ, արդեօք այս հարիւր ոսկին ուղելով կը նեղե՞մ զծիլ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Զէ, ի՞նչո՞ւ նեղէք:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Պ. ժուրտենի.) Այս մարդը կովու նման կը կթէ զըիլ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Տիկին ժուրտենի.) Լոէ՛:

ՏՕՐԱՆԴԻ.—Եթէ այս ինդիքսն կը նեղէ ձեզ՝ ուրիշ կը դիմեմ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—Ի՞նչ խօսք է այդ, պարոն կոմս:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Պ. ժուրտենի.) Մինչեւ որ տունդ չքանդէ՝ միրտը չպիտի հանգչի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Տիկին ժուրտենի.) Լոէ՛:

Կ'ըսեմ: Եթէ այդպէս է՝ հոգ չէ, ըսէ՛ք բացար-

ԺՈՐԱՆԴԻ.—Եթէ այդպէս է՝ հոգ չէ, ըսէ՛ք բացար-

ԺՈՐԱՆԴԻ.—Ոչ, ուարոն կոմս:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Պ. ժուրտենի.) Կատարեալ խարեբայ մ'է այդ մարդը:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Տիկին ժուրտենի.) Լոէ՛:

Կ'ըսեմ, այս ի՞նչ կին ես զուն:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Պ. ժուրտենի.) Մինչեւ լերջին փողդ պիտի քամէ լինցնէ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ.—(մեղմիկ Տիկին ժուրտենի.) Զայնդ պիտի քաշե՞ս թէ ոչ:

ՏՕՐԱՆԴԻ.—Չեռքիս տակ շատ մարդկան ունիմ որք ուրա-

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ինձ մեծ պատիւ մը կ'ընէք, պարոն. երթամ բերեմ ձեր ուղած գումարը:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — (մեղմիկ՝ Պ. ԺՈՒՐՏԵԿՆ.) Ի՞նչ, այդ հարիւր ոսկի՞ն ալ պիտի տաս:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — (մեղմիկ՝ Տիկին ԺՈՒՐՏԵԿՆ.) Ի՞նչ կրնամ ընել: Կուզես որ չէ՞ ըսեմ այսպիսի բարձրաստիճան մարգու մ'որ այս առաւօտ իմ վրաս խօսեր է բարձր շրջանակներու մէջ:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — (մեղմիկ՝ Պ. ԺՈՒՐՏԵԿՆ.) Կատարեալ միամիտ մ'ես, այսքան միայն կ'ըսնմ:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՏՕՐԱՆԴ, ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ, ՆԻՔՈԼ

ՏՕՐԱՆԴ. — Ի՞նչ ունիք. Փոքը ինչ մելամաղոտ կ'երեւիք, Տիկին Ժուրտէն:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Կ'զգամ թէ գլխիս մէջ ըան մը կը դառնայ:

ՏՕՐԱՆԴ. — Իսկ օրիորդն ո՞ւր է չեմ տեսներ:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Օրիորդը եղած տեղը շատ լաւ է:

ՏՕՐԱՆԴ. — Ի՞նչպէս է որպիսութիւնը:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Շատ լաւ է, հոգը մի՛ տանիք:

ՏՕՐԱՆԴ. — Կը յօժարի՞ք, Տիկին Ժուրտէն, այս օրերէս մէկը օրիորդին հետ գալ ներկայացուած կատակերգութիւնը եւ պարանցիկը տեսնել:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ո՞հ, այո՛, այդ պակաս էք, կատակերգութիւն եւ պարանցիկ տեսնել շիտակը շա՛տ ախորժակ ունինք ինդալու, խնդալու շա՛տ ախորժակ ունինք:

ՏՕՐԱՆԴ. — Կարծեմ, Տիկին Ժուրտէն, որ ձեր զեղանի եւ քաղցրաբարոյ հանգամանքով շա՛տ հոմանիներ ունեցած էք ձեր երիտասարդ համար:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ի՞նչ ըսել կ'ուզէք, պարոն, տիկին Ժուրտէնը զառամես: կը կարծէք, իր գլուխը կ'երերտկա՞յ:

ՏՕՐԱՆԴ. — Ո՞հ Տիկին Ժուրտէն, ներկցէք կ'աղաչեմ. Զամածելի թէ դուք բիտասարդ համ կի մէջ էք, ստէպ կի բարբար մայում: Անձունութենս ներկցէ՞ք կ'աղաչիմ:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ, ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ, ՏՕՐԱՆԴ, ՆԻՔՈԼ

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — (Տօրանդի) Ահա ձեզ հարիւր ոսկի: ՏՕՐԱՆԴ. — Կ'աղաչեմ, պարոն Ժուրտէն, որ հաւատաք իմ բոլոր անձուերութեանս. մեծ փափաք ունիմ ձեզ ծառայութիւն մը մատուցանել:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ծնորհապարտ եմ ձեզ, պարոն կոմս:

ՏՕՐԱՆԴ. — Եթէ տիկին Ժուրտէն կը փափաքի մեծ մարքիպի մ'ապարանցին մէջ ներկայացուած պարու եւ երգի միջախաղերը տեսնել, կրնամ սրահին մէջ լաւագոյն տեղերը իրեն համար պահել տալ:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Տիկին Ժուրտէն փափաք չունի այդ խաղերը տեսնելու:

ՏՕՐԱՆԴ. — (մեղմիկ՝ Պ. ԺՈՒՐՏԵԿՆ.) Ինչպէս տոմսակէս իմացած էք՝ մեր գեղանի մարքիզունին ընդհուպ պիտի դայ հոս պարանցիկին եւ ինձոյքին. նաեւ միտքն ըրի որ ձեր տալիք նուէրն ընդունի:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Քիչ մը հեռուն երթա՞նք, պատճառը կը մակաբերէք:

ՏՕՐԱՆԴ. — Շաբաթ մը կայ որ զենք չեմ տեսած, եւ լուր ալ չկրցայ տալ այն ադամանդին վրայօք՝ զոր մարքիզունոյն նուէր մ'ըլլալու համար յանձնած էք ինձ: Պատճառը սա է որ, ամենամեծ զդուարութիւններ ունեցայ իր խղճմտութիւնը յաղթահարելու եւ ա՛յսօր միայն համոզուեցաւ զայն ընդունիլ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Եւ ի՞նչպէս գտաւ նուէրս:

ՏՕՐԱՆԴ. — Սքանչելի՛. այնպէս կը կարծեմ թէ այդ աղամանդի գեղեցկութիւնը ձեզ նկատմամբ ամենանպաստաւոր աղեցութիւն մը պիտի ընէ մարքիզունոյն մտաց վրայ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Ո՞ւր էք այնպէս ըլլար:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — (Նիքոլի) Մւ. մ'որ էրիկս գանէ՝ անկարելի բան է որ բաժնուի ան

ՏՕՐԱՆԴ. — Թէ՛ նուէրին ամէն կեռակ թէ զենց անութիւնը ամէն կեռակ թէ զենց:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԿՆ. — Անձունութենս ներկցէ՞ք կ'աղաչիմ: պատճառի անութիւնը գույք ու ամուլլութիւնը ամուլլութիւնը:

մնացած եմ տեսնելով որ ձեզ նման բարձր անձ մը ինձ համար կը խոնարհի այդ բաներն ընելու :

ՏՕՐԱՆԴ. — Այո՛, անտարակոյս, եւ բոլոր սրտովս կ'ընեմ.

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — (Նիշօղի.) Աս մարդը կարծես թէ լեռ մը՝ սրտիս վրայ նստած է :

ՏՕՐԱՆԴ. — Իմ մասիս բա՛ն մ'աչքիս չերեւիք՝ երբ բարեկամի մը ծառայելու վրայ է խնդիրը : Այն պահուն՝ որ խորհրդաբար ինձ հասկցուցիք ձեր հիացումը այդ չքնաղ մարդիւղունոյն համար՝ որու տունը կը մտնեմ կ'ելնեմ, տեսաք թէ առջի վայրկենէն ես ինքս աջակցութիւնս առաջարկեցի ձեր սիրոյն օգնելու :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Ճշմարիտ է, այսքան աղնուութեան համար յիբաւի ամօթով եմ ձեր առջեւ :

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — (Նիշօղի.) Ե՞րբ պիտի կորսուի երթայ սա անիծնալ մարդը :

ՆԻՔՈԼ. — Իրարմէ այնքան մեծ համ կ'առնուն՝ որ չեն կրնար զատուիլ :

ՏՕՐԱՆԴ. — Անոր սրախն ազդելու համար լաւ հնարք մը բանեցուցիք : Կանայք շա՛ա կախորժին որ մէկն իրենց համար ծախքերէ ելլէ . ձեր անդամ անդամ տուած ցայցանուագները, անպակաս ծաղկեփունջերը, սքանչելի հրախաղերը դետի վրայ, պարգևած գեղեցիկ աղամանդը, ինչպէս նաև նոր նուէր՝ զօր պատրաստած էք իրեն համար, այս ամէն բաներս աւելի քաջ կը խօսին ի նպաստ ձեր սիրոյն քան բոլոր այն խօսքերը՝ զոր կրնաք ուղղել իրեն :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Չկայ ծախք մ'որու առջեւ ընկըսկիմ, եթէ այդ կերպով անոր սրտի ձամբան կրնամ գտնել: Բարձրատոնմ կին մ'ինձի համար գերիվեր հրապոյըներ ունի, եւ չկայ զոհողութիւն՝ զոր չընեմ այսպիսի մեծ պատիւ մը զնոյ առնելու համար :

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — (Անդմիկ՝ Նիշօղի.) Այսքան երկար խօսելու ի՞նչ բան կրնան ունենալ. դնա՛ կամայուի մ'ականջ փ'ր սըսնց խօսքելուն :

ՏԶՐԱՆԴ. ... ի մօտոյ անոր տեսութեան գերազոյն համոքը պիտի այսելէք եւ ձե՛ս աչքերը լիուլի գոհացում: պիտի ունենան :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — Բոլորովին աղտառ ըլլալու համար զործն այնպէս մը շտկեցի որ կինս ճաշելու համար իր քրոջ տունը երթայ՝ ուր պիտի մեայ բոլոր օրը :

այնքառ

ՏՕՐԱՆԴ. — Խոհեմ զործ տեսեր էք, զի ձեր տիկինը կը ռնար մեզ նեղութիւն տալ: Զեր կողմէն պէտք եղած հրամանները տուած եմ խոհարարին, եւ պարանցիկին համար ալ ամէն բան կարգադրած: Այդ պարանցիկին ձեւերը իմ գիւտս են, եւ եթէ գործադրութիւնը գաղափարին համապատասխանէ՝ տարակոյս չունիմ թէ . . . :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. — (Դիտելով թէ Նիշօղ մտիկ կ'ընէ, եւ ապտակ մը տաղով.) Վա՛յ լիրը աղջիկ: (Տօրանդի.) Դուքս ելլենք ասկէ:

ՏԵՍԱՐԱՆ Է

Տիկին ԺՈՒՐՑԵՆ, ՆԻՔՈԼ,

ՆԻՔՈԼ. — Հետաքրքրութիւնս ապտակ մ'արժեց ինձ, բայց կարծեմ, տիկին, խաղ մը կը պատրաստուի կոր, եւ իրենց փափաքն այն է որ զուք ներկայ չգտնուիք:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Բաւական ժամանակ կայ, Նիքոլ, որ ամուսնոյս վրայ կասկածներ ծնած են սրտիս մէջ: Եթէ ուստալիր բանին տակ սիրոյ խնդիր մը կայ, զոր կաշխաչիմ ի վեր հանելու: Այլ թողո՛ւնք այս կէտը եւ աղջկանս տիմ ի վեր հանելու: Գիտես թէ Քէօնդ կը սիրէ զան, այդ երիտափայ խօսի՞նք: Գիտես թէ Քէօնդ կը սիրէ զան, այդ երիտափայ յարմար կը զատեմ ինձ փեսայ առնելու, ուստի պիտի սարգն յարմար կը զատեմ ինձ փեսայ առնելու, եւ եթէ կարելի է՝ կիսելը պիտի տամ օգնիմ իր նպաստակին, եւ եթէ կարելի է՝ կիսելը պիտի տամ անոր:

ՆԻՔՈԼ. — Ճշմարիտ, տիկին, սասափիկ ուրախ եմ զձեզ այս զգացմանց մէջ տեսնելով. վասն զի եթէ գուք ձեր աղջկան համար լաւ փեսայ մը կը սեպէք տէրը՝ ես ալ անոր սպասաւորը ինձ ոչ նուալ լաւ փեսայ կը սեպիմ, եւ կը փափաքիմ անոնց ամուսնութեան հովանուոյն տակ միը ամուսնութիւնն ալ կատարուի:

Տիկին ԺՈՒՐՑԵՆ. — Գնա՛ իմ կողմէս բարեւ ըրէ՝ իրեն, եւըսէ թէ գայ հիմայ գտնէ զիս՝ որպէս զի առաջարկը ի միասին ընկնք ամուսնոյս:

ՆԻՔՈԼ. — Ուրախութեամբ կը վաղեմ այդ բանին, վասի ինձ համար ատկէ հաձեւի յանձնարարութիւն չեր կը բայց առանձին: (Առանձին.) Արքան ուրախ պիտի ընեմ զի

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՔԼԻՕՆԻ, ՔՕՎԻԷԼ, ՆԻՔՈԼ

ՆԻՔՈԼ. — (ՔՂԵԿՈՆԴԻ) Ո՞հ, ճիշտ ժամանակին եկաք, պարոն Քլէօնդ. ուրախութեան բանքեր մ'եմ, եւ

ՔԼԻՕՆԴ. — Գնա՛ սըկէ, նենգուհի, եւ մի՛ խաբխրեր զիս քու սուտառմուն խօսքերով:

ՆԻՔՈԼ. — Ա՛յսպէս կ'ընդունիք

ՔԼԻՕՆԴ. — Գնա՛ սըկէ, կ'ըսեմ, եւ ըսէ՛ քու սիրաղրուժ տիրուհոյդ թէ այլ եւս միամիտ Քլէօնդը չէ կարող խաբել:

ՆԻՔՈԼ. — Ի՞նչ քմայք է այդ: Բաէ՛ ի՞նձ խնդրեմ, սիրելի Քօվիէլ, ի՞նչ կը նշանակէ այս:

ՔՕՎԻԷԼ. — Սիրելի Քօվիէլ, հա՛, ա՛զդա՛մ աղջիկ: Կորի՛ր աչքիս առջեւէն, բարեծաղի՛կ, եւ զիս հանդարտ թո՛ղ:

ՆԻՔՈԼ. — Ի՞նչ, զո՞ւն ալ

ՔՕՎԻԷԼ. — Գնա՛ աչքիս առջեւէն, կ'ըսեմ, եւ ա՛լ հետև մի՛ խօսիք:

ՆԻՔՈԼ. — (Մեկուսի) Ի՞նչ եղեր են ասոնք: Երթամ պատմեմ տիրուհոյս այս զարմանալի անցքը:

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՔԼԻՕՆԻ, ՔՕՎԻԷԼ

ՔԼԻӨՆԴ. — Ի՞նչ, հոմանոյ մը հետ ա՛յսպէս վարուի՛ որ ամենէ հաւատարի՛մը եւ ամենէ խանդակա՛թն է հոմանիներուն:

ՔՕՎԻԷԼ. — Արտառոց՝ քստմնելի բան մ'է այդ երկու քին ալ մեղ ըրածը:

ՔԼԻӨՆԴ. — Ամէն երեւակայելի հրայրք եւ կորով ցուցնե՛մ աղջկան մը, աշխարհի մէջ զի՞նք սիրեմ միայն . մտքիս մէջ զի՞նք ունենամ միայն, իմ բոլոր հոգածութեանցս, բոլոր ըղձանացս եւ բոլոր ուրախութեանս առարկան նա՛ լինի, իր վրա՛յ միայն խօսիմ, իր վրա՛յ միայն խորհիմ, իր վրա՛յ միայն եղագեմ, իրմո՛վ միայն չնչիմ, սիրտս ի նա՛ ապրի միայն, եւ ահա արժանաւոր տրիտուրը կ'ստանամ:

սիրոյ եւ անձնուիրութեան: Երկու օր երեսը չեմ տեսներ, երկո՛ւ ահազին գարեր ինձի համար: պատահմամբ կը հանգպիմ իրեն: զինք տեսնելով՝ սիրտս կը յափշտակուի հոգեզմայլ, ուրախութիւնը կը ճառագայթէ զէմքիս վրայ, զէպի իրեն կը վազեմ բերկրապատար: Եւ այդ սիրաղրուժ արարածը զէմքն անդին գարձնելով՝ այնպիսի կոչու կերպով մը կ'անցնի առջեւէս՝ որպէս թէ իր բովանդակ կեանքին մէջ զիս բնաւ տեսած չըլլար:

ՔՕՎԻԷԼ. — Զեր ըստածներն ե՛ս ալ կ'ըսեմ:

ՔԼԻӨՆԴ. — Սպաշնորհ կիւսկլի այս նենգութեան նմանը ո՞ւր տեսնուած է, Քօվիէլ:

ՔՕՎԻԷԼ. — Հապա այդ անզպամ Նիքոլի նենգութեան նմանը, տէր իմ:

ՔԼԻӨՆԴ. — Ի՞նչ սրտեռանդն զոհողութիւննիր եւ առաջադրութիւններ ըրած եմ այդ աղջկան, ո՛րքան հառաջած թառաչած եմ իրեն համար:

ՔՕՎԻԷԼ. — Ի՞նչ սրտազին մեծարանքներ եւ հոգածութիւններ ցուցած խորանոցին մէջ ի՞նչ ծառայութիւններ մատուցած եմ իրեն:

ՔԼԻӨՆԴ. — Իր ծնկուըներն ինկած՝ ո՛րքան արցունքներ թափած եմ:

ՔՕՎԻԷԼ. — Իրեն համար ո՛րքան եւ ո՛րքան ջուր քաշած եմ հորէն:

ՔԼԻӨՆԴ. — Ի՞նչ խանդ ու եռանդ յայտնած եմ՝ անձէս իսկ աւելի ցիրելով զինք:

ՔՕՎԻԷԼ. — Վառ կրակին առջեւ ո՛րքան այրած տապկուած եմ՝ իր տեղը շամփուրը դարձնելու համար:

ՔԼԻӨՆԴ. — Եւ այդ աղջիկը արհամարհանքով խո՛յս կուտայ ինձմէ:

ՔՕՎԻԷԼ. — Եւ այդ աղջիկը աներեսարար կոնա՛կը կը դարձնէ ինձ:

ՔԼԻӨՆԴ. — Դժոխքի արժանի նենգութիւն մ'է այս:

ՔՕՎԻԷԼ. — Բիւրաւոր ասլտակներու արժանի մատնութիւն մ'է այս:

ՔԼԻӨՆԴ. — Քօվիէլ, երթեք չելլես ի նպաստ ու որ բան չխօսիս ինձ:

ՔՕՎԻԷԼ. — Ե՛ս, տէր իմ: Աստուած՝ չընէ:

ՔԼԻӨՆԴ. — Այդ անհաւատարիմ աղջկան ընթացքը ջատառ չուլլու չփորձես երբէ՛ք:

ՔՕՎԻԵԼ. — Հո՛գս հատեր է որ այդ բանն ընեմ:

ՔԼԵՅՆԴ. — Գիտցի՞ր որ պաշտպանողական բոլոր խօսքերդ փուձը պիտի երթան:

ՔՕՎԻԵԼ. — Ո՞րու մաքէն կ'ամցնի պաշտպանել դան:

ՔԼԵՅՆԴ. — Ամէն յարաբերութիւն պիտի խզեմ եւ յափեան քէն պիտի պահեմ իր հետ:

ՔՕՎԻԵԼ. — Շատ լաւ կ'ընէք:

ՔԼԵՅՆԴ. — Այդ պարոն կոմար որ իրենց տունը կը մտնէ կ'ելնէ՝ գուցէ իր սիրոն յափշտակած ըլլայ. կ'երեւի թէ անոր աղնուականութենէն աչքը չլացեր է: Այլ իմ պատույս համար պէտք է որ իր անհաւասարմութիւնը կանխեմ: Ինք որքան քայլ որ կ'առնու փոխուելու համար՝ նոյնքանը ես ալ իմ կողմէս պիտի առնում, եւ ինձմէ հեռացած ըլլալու բոլոր փառքն իրեն չպիտի թողում:

ՔՕՎԻԵԼ. — Խի՛ստ իրաւացի. ես ալ ձեր այդ բոլոր զգացմանց հաղորդ եմ ըստ ամենայնի:

ՔԼԵՅՆԴ. — Դուն իմ սրանեղութեանս օգնէ՛, Քօվիէլ, եւ ուշադիր պաշտպանէ իմ որոշումս՝ եթէ երբէք սիրոյ մնացորդ մինպաստ այդ անսիրտ աղջկան խօսի: Խնդրեմ որքան կըրնաս՝ անոր զէշը խօսէ. այնպէս նկարագրութիւն մ'ըրէ, որ արհամարհեմ զինք, եւ ինչ պակասութիւններ որ տեսած ես իր վրայ, յայտնէ՛ ինձ համարձակ՝ սրպէս զի սիրուս պաղի իրմէ:

ՔՕՎԻԵԼ. — Այդ աղջի՞կը, տէր իմ. այդ բեկրեկուհի՞ն՝ այդ ծեքծեքուհի՞ն ձեր սիրտը պիտի ալրէ. ես իր վրայ աչքի զարնելիք բան մը չեմ տեսած. ձեզի տւելի արժանաւոր անթիւ աղջիկներ կըրնաք դանել, նախ՝ աչքերը մանր են:

ՔԼԵՅՆԴ. — Ճշմարիտ է խօսքդ, մանը են աչքերը, այլ ո՛րքան հրաբորքոք, ո՛րքան չողշողուն, ո՛րքան սուր, ո՛րքան սրտագրաւ. անոնց նմանը ո՞ւր աեմուած է աշխարհի վրայ.

ՔՕՎԻԵԼ. — Բերանը մեծ է:

ՔԼԵՅՆԴ. — Այո՛, այդ մեծ ըսած բերաններու ամենէն գեղեցիկն է ու չնորհալին. այդ բերանը՝ աշխարհի ամենէ յանկուցիչ՝ ամենէ սիրաշունչ բերանն է՝ որ տեսնողին եղձերն ու հիաց մը կը դրաւէ:

ՔՕՎԻԵԼ. — Հասակը կարճ է, դուք ալ գիտէք:

ՔԼԵՅՆԴ. — Այո՛, բայց ի՞նչ աղուս՝ ի՞նչ ձեւաւոր հասակ:

ՔՕՎԻԵԼ. — Իր խօսուածքին ու շարժումներն շինովի անթութեալ մը կը յայտնին:

ՔԼԵՅՆԴ. — Ճշմարիտ է, այլ ո՛րքան չնորհալի անփութութիւն. ի՞նչ յանկուցիչ ձեւեր՝ որք չզիտեմ ի՞նչ հրապոյր մ'ունին սրտերու մինչեւ խորը թափանցող:

ՔՕՎԻԵԼ. — Գալով մաքին . . .

ՔԼԵՅՆԴ. — Ո՞հ, Քօվիէլ, այդ մասին բան մը մի՛ խօսիր. ի՞նչ սուր՝ ի՞նչ բարակ միտք է այն:

ՔՕՎԻԵԼ. — Իր խօսակցութիւնը . . .

ՔԼԵՅՆԴ. — Իր խօսակցութիւնը պարզապէս հիանալի է:

ՔՕՎԻԵԼ. — Ծանր եւ լուրջ շարժուկացք մ'ունի միշտ:

ՔԼԵՅՆԴ. — Ի՞նչ, Քօվիէլ, կ'ուզէիր որ գոհ եւ ուրախ զուարթութի՞ւն մը միշտ սրտարաց ուրախութի՞ւն մը յայտնէր. ո՛րքան անձունի են այն կանայք՝ որք շարունակ կը խնդան:

ՔՕՎԻԵԼ. — Այլ վերջապէս այնպիսի քմշատութիւն մ'ունի՛ որու նմանը չկայ աշխարհի մէջ:

ՔԼԵՅՆԴ. — Այո՛, քմշու է լիւսի, ես տէ կ'ընդունիմ. բայց գեղուհւոյ մ'ամէն ինչ կը վայլէ. գեղուհւոյ մ'ամէն բանին կը տանի մարդ:

ՔՕՎԻԵԼ. — Ըստ որում գործերն այս վիճակի մէջ են՝ կը տեսնիմ, տէր իմ, որ կիւսիլը յաւիտեան սիրելու միտք ունիք:

ՔԼԵՅՆԴ. — Ե՞ս. աւելի լաւ կը սեպիմ մեռնիլ: Քան թէ սիրել զինք, որքան սիրեցի մինչեւ հիմայ՝ այնքան ալ պիտի ատեմ ասկէ ետք:

ՔՕՎԻԵԼ. — Ի՞նչպէս կարող պիտի ըլլաք ատել՝ երբ այդքան կատարեալ կը դանէք զինք:

ՔԼԵՅՆԴ. — Ստով ահա իմ վրէժինդրութիւնս աւելի փառաւոր պիտի ըլլայ. ատո՛վ իմ հոգւոյս ուժը լաւ եւս կը ցուցնեմ ատելով զինք, անդարձ հեռանալով իրմէ՛ որքան եւ գեղանի՝ որքան եւ հրապուրալի՝ որքան եւ ամենասիրուն ալ ըլլայ: Ահա կուզայ:

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

Լիիլիլ, ՔԼԵՅՆԴ, ՔՕՎԻԵԼ, Նիֆի

ՆիՔՕԼ. — (Լիւսի) Այդ բանին սիրտու շատ նեղ:

Լիիլիլ. — Ըստ մասին սիրտու շատ նուն ինք:

ՔԼԵՕՆԴ. — (Քօվիկիլի.) Խօսք մ'իսկ չպիտի ուղղեմ անոր:
ՔՅՎԻԿԻԼ. — Ես ալ ձեզ նման ըերան չպիտի բանամ:
ԼԻՒՍԻԼ. — Ի՞նչ է այդ, ՔԼԷԾՆԴ. ի՞նչ ունիս:
ՆԻՔՈԼ. — Ի՞նչ ունիս, Քօվիկիլ:
ԼԻՒՍԻԼ. — Ի՞նչ է սրափ նեղութիւնը:
ՆԻՔՈԼ. — Ինչո՞ւ դէմքդ այդպէս խոժոռ է:
ԼԻՒՍԻԼ. — Համ մը ես, ՔԼԷԾՆԴ:
ՆԻՔՈԼ. — Լեզուդ կապուե՞ր է, Քօվիկիլ:
ՔԼԵՕՆԴ. — Ի՞նչ անգպայ ընթացք:
ՔՅՎԻԿԻԼ. — Ի՞նչ յուղայի ընթացք:
ԼԻՒՍԻԼ. — Կը անսնեմ որ պահ մը յառաջ մեր հանդիպու-
մը միտքդ յուղեր է:

ՔԼԵՕՆԴ. — (Քօվիկիլի.) Կը տեսնես ըրածն ի՞նչպէս ի՞նքն
ալ կը հասկնայ:

ՆԻՔՈԼ. — Մեր այս առառւան ընթացքէն սիրտդ նեղա-
ցած կ'երեւի:

ՔՅՎԻԿԻԼ. — (Քլիօնդի.) Պատճառն ինքնին կը գուշակէ:

ԼԻՒՍԻԼ. — Սրանեղութեանդ պատճառն այդ է, այնպէս
չէ, ՔԼԷԾՆԴ:

ՔԼԵՕՆԴ. — Այո՛, նենգուհի՛, այդ է սրանեղութեանս պատ-
ճառը, որովհետեւ պէտք կ'ըլլայ որ խօսիմ: Աս չափը պիտի
ըսեմ քեզ թէ զործած անհաւատարմութեամբդ չպիտի պահ-
ծամ՝ ինչպէս կը կարծես. ես քեզմէ յառաջ յարաբերութիւնս
պիտի խղեմ քեզի հետ, եւ զիս վոնտած ըլլալու փառքը
չպիտի՛ ունենաս: Անտարակոյս ինձ համար գժուարին պիտի
ըլլայ յաղթել սիրոյս. սիրոս պիտի մորմոքի եւ ժամանակ մը
պիտի տառապիմ, բայց պիտի յաջողիմ վերջապէս, զի աւելի
լաւ ունիմ զաշոյնը մնաել սրախմ՝ քան թէ քեզ վերագառնալու
տկարութիւնն ունենալ:

ՔՅՎԻԿԻԼ. — (Նիխօլի.) Ես ալ ձիշդ նսյնպէս:

ԼԻՒՍԻԼ. — Փուժ բանի մը համար ա՛յդքան աղմուկ ու
շնկոց: Բաեմ քեզ, ՔԼԷԾՆԴ, թէ ի՞նչու այս առաւոտ քեզմէ
հեռու փախայ:

ՔԼԵՕՆԴ. — (Լիւսիլի) Տովիկն հեռանալ ուզելով.) Ո՛չ,
խօսք մտիկ չեմ ըներ:

ՆԻՔՈԼ. — (Քօվիկիլի.) Քեզ հասկցնեմ թէ ի՞նչու շուտով
որ քովիչն անցանք:

ՔԻԿԻԼ. — (Առյնակն հեռանալ ուզելով Նիխօլի ժուամ.)
Մտիկ չեմ ըներ:

ԼԻՒՍԻԼ. — (Քլիօնդի ետևին երրաշով.) Պատճառն այն է
որ այս առաւոտ . . . :

ՔԼԵՕՆԴ. — (առանց Լիւսիլի նայելու յակելով միշտ.) Ո՛չ
կ'ըսիմ:

ՆԻՔՈԼ. — (Քօվիկիլի ետևին երրաշով.) Լսէ՛ անդամ
մը . . . :

ՔՅՎԻԿԻԼ. — (առանց Նիխօլի նայելու նոյնակն խալելով
միշտ.) Ո՛չ, անդգամ աղջիկ:

ԼԻՒՍԻԼ. — Մտիկ ըրէ՛:

ՔԼԵՕՆԴ. — Ամենեւին:

ՆԻՔՈԼ. — Թո՛ղ որ խօսիմ:

ՔՅՎԻԿԻԼ. — Մտիկ իսկ չեմ ըներ:

ԼԻՒՍԻԼ. — Քլէ՛նդ:

ՔԼԵՕՆԴ. — Ո՛չ:

ՆԻՔՈԼ. — Քօվիկիլ:

ՔՅՎԻԿԻԼ. — Ամենեւին:

ԼԻՒՍԻԼ. — Կեցի՛ր, ՔԼԷԾՆԴ:

ՔԼԵՕՆԴ. — Բաջաղուա՞ք այսուհետ Ուզ:

ՆԻՔՈԼ. — Լսէ՛, Քօվիկիլ, ի՞նչ պիտի ըսնմ:

ՔՅՎԻԿԻԼ. — Ոչի՞նչ խօսքեր:

ԼԻՒՍԻԼ. — Վայրկեա՞ն մը, ՔԼԷԾՆԴ:

ՔԼԵՕՆԴ. — Եւ ոչ իսկ վայրկեան մը:

ՆԻՔՈԼ. — Համբերէ՛ քիչ մը:

ՔՅՎԻԿԻԼ. — Բա՛ բա՛ բա՛:

ԼԻՒՍԻԼ. — Բաելիքու երկու խօսք է:

ՔԼԵՕՆԴ. — Ո՛չ, ա՛լ մնդաւ ամէն բա՛:

ՆԻՔՈԼ. — Խօսք մը միայն ոիտի ըսեմ:

ՔՅՎԻԿԻԼ. — Ա՛լ հետս մի՛ խօսիր, չիմ ուզեր:

ԼԻՒՍԻԼ. — (կանկ առնելով.) Է՛հ, չե՞ս ուզեր մարիկ ընել.

Հա՛ւ, կարծիքիդ վրայ մնացի՛ր, եւ սիրտդ ինչ կ'ուզէ՛ այն
բրէ՛:

ՆԻՔՈԼ. — (նոյնակն կանկ առնելով.) Քանի որ այդպէս
կը վարուիս՝ ինչպէս կ'ուզես՝ ա՛յնպէս կարծէ:

ՔԼԵՕՆԴ. — (դեպի Լիւսիլ դառնալով.) Է՛հ, ըսէ նայինք
այն ձեր համովիկ ընթացքին պատճառը:

ԼԻՒՍԻԼ. — (իր կարգին հեռանալով Քլիօնդ.) Ա՛լ չեմ
ըսի:

ՔԻԿԻԼ. — (դեպի Նիխօլ դառնալով.) Բանը պատմէ՛
տսեմ:

Նիքօլ. — (Առյնպիս հեռանալով Քօվիկէլ.) Ա՛ւ չպիտի
պատմեմ:
 Քլէօնդ. — (Լիւսիլի ետեւեն երբալով.) Խօսէ՛, Լիւսիլ...
 ԼիիՍիլ. — (առանց Քլէօնդին նայելու ժաղելով միշտ.) Զէ՛,
բա՛ն մը չպիտի խօսիմ:
 Քօվիկէլ. — (Նիգոլի ետեւեն երբալով.) Պատմէ՛, Նիքօլ...
 Նիքօլ. — (առանց Քօվիկէլի նայելու նոյնպիս ժաղելով
միշտ.) Զէ՛, բա՛ն մը չեմ պատմեր:
 Քլէօնդ. — Կ'աղաչեմ, Լիւսիլ:
 ԼիիՍիլ. — Ո՛չ, ըսի:
 Քօվիկէլ. — Խնզիւմ Նիքօլ:
 Նիքօլ. — Ա՛ւ մտիկ իսկ չեմ ընկր:
 Քլէօնդ. — Կը պաղատիմ:
 ԼիիՍիլ. — Թո՛ղ զիս:
 Քօվիկէլ. — Աստծու սիրոյն, Նիքօլ:
 Նիքօլ. — Գնա՛ աշքիս առջեւէն:
 Քլէօնդ. — Լիւսիլ:
 ԼիիՍիլ. — Ո՛չ
 Քօվիկէլ. — Նիքօլ:
 Նիքօլ. — Ամենեւի՞ն:
 Քլէօնդ. — Աստծու սիրոյն, Լիւսիլ:
 ԼիիՍիլ. — Չեմ ուզեր:
 Քօվիկէլ. — Երեսդ զարձո՛ւր, խօսէ՛ ինձ, Նիքօլ:
 Նիքօլ. — Բերան իսկ չեմ բանար:
 Քլէօնդ. — Փարատէ՛ տարակոյմներս, Լիւսիլ:
 ԼիիՍիլ. — Ո՛չ, չպիտի փարատեմ:
 Քօվիկէլ. — Միտքս հանդարտեցո՛ւր, Նիքօլ:
 Նիքօլ. — Ո՛չ, չպիտի հանդարտեցնեմ:
 Քլէօնդ. — Լաւ ուրեմն. քանի որ հոգդ չէ ամենեւին որ
զիս մատանջութինէս աղատես, եւ ինձ ցոյց տուած անար-
ժան վարմունքի արդարացնես, զիս այս վերջին անդամս կը
տեսնես, ապաշնորհ քարսիրտ արարած. քեղմէ հեռու՝ վշտէս
ու տարփէս մեռնիմ պիտի:
 Քօվիկէլ. — (Նիգոլի.) Ես աւ տիրոջս պիտի հետեւի՛
 Նիքօլ:
 ԼիիՍիլ. — (Քլէօնդի ու զուզէ հեռանալ.) Քլէօնդ...
 Նիքօլ. — (Քօվիկէլի ուր իր ուսուց ետեւեն կ'երայ.)
 Քօվիկէլ:
 Քլէօնդ. — (Կանկ առնեկով.) Ի՞նչ կայ:

ՔՕՎԻԿԷԼ. — (Կանկ առնեկով.) Ի՞նչ պիտի ըսես նայիմ:
 ԼիիՍիլ. — Ո՞ւր կ'երթաս:
 Քլէօնդ. — Ուր որ ըսի:
 Քօվիկէլ. — Մեռնելու կ'երթանք:
 ԼիիՍիլ. — Մեռնելո՞ւ կ'երթաս, Քլէօնդ:
 Քլէօնդ. — Սյո՛, անխիղճ աղջիկ, քանի որ կուզես որ
մեռնիմ:
 ԼիիՍիլ. — Ե՞ս կ'ուզեմ որ մեռնի՞ս: |||
 Քլէօնդ. — Սյո՛, գո՛ւն կ'ուզես:
 ԼիիՍիլ. — Ո՞վ ըսաւ այդ բանը:
 Քլէօնդ. — (Լիւսիլի մօտենալով.) Կասկածներս փարատել
չուզելը մահս ուզել չէ:
 ԼիիՍիլ. — Ե՛՛տոոր յանցանքն ի՞մսէ է, եթէ մտիկ ընել
ուզէիք՝ պիտի ըսէի թէ այս առտուան ձախորդ անցքին՝ որու
վրայ կը զանդատիս, պատճառն պառաւ մօրաքրոջս ներկայու-
թիւնն էր: Սյո՛ երանելինս միտքը զբած է թէ մարդու մը մօ-
տենա՛լը միայն աղջկան մ'անպատուութիւն կը բերէ, այս
մասինս անվերջ եւ անդարրում քարոզներ կը կարգայ մեր
զլուխը, եւ այնպէս կը ներկայացնէ բոլոր այր մարդիկը՝
որպէս թէ մէյմէկ զգուշանալի սատաններ եղած ըլլան:
 Նիքօլ. — (Քօվիկէլի.) Բանին դաղանքն այդ է ահա:
 Քլէօնդ. — Զիս չե՞ս խարեր, Լիւսիլ:
 Քօվիկէլ. — (Նիգոլի.) Սուտ մը չէ՞ այդ, Նիքօլ, զոր
կ'ուզես կլլեցնել ինձ:
 ԼիիՍիլ. — (Քլէօնդի.) Խօսքս ամենաձշմարիտ է, Քլէօնդ:
 Նիքօլ. — (Քօվիկէլի.) Բանին էութիւնն այս է, Քօվիկէլ:
 Քօվիկէլ. — (Քլէօնդի.) Հաւասա՞նք այդ պատմութեան:
 Քլէօնդ. — Ա՛լս, Լիւսիլ, ի՞նչպէս զիտես քու մէ՛կ խօս-
քովի միայն սրտիս բոլոր ալեկոծութիւնը հանդարտել. մար-
դու իր սիրածին խօսքերուն ո՛րքան զիւրաւ կը համոզուի:
 Քօվիկէլ. — Սյո՛ չարաձնիները ի՞նչպէս մարդուս սիրաը
կ'ողուան զիւրաւ:

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

Տիկին, ԺՈՒՐԺԻՆ, Քլէօնդ, ԼիիՍիլ, Քօվիկէլ, Նիքօլ

Տիկին, ԺՈՒՐԺԻՆ. Ես զձեզ տեսնելուս
կը դանուիք: Ամ-

Նըս կուգայ ահա, ժամանակի չկորսնցնելով կիւսիւը ուղեցէ՛ք իրմէ :

ՔԱՅՈՒԹԻՒՆ. — Ո՞հ, տիկին, ի՞նչ անոյշ խօսք էր այդ՝ զոր
խօսեցաք, եւ ո՞քան կը համապատասխանէ, իմ ըղձանաց։
Աւելի գեղեցիկ հրաման՝ աւելի թանկագին չնորս կրնայի՞
երբէք ընդունիլ։

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ՔԼԵԹՆԴ, ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԸՆ, ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԸՆ, ԼԻՒՅԻՆ,
ՔՈՎԻԵԼ, ՆԵՐՈՒ,

ՔԸԵՅՆԴ. - Տիւա՛ր ժուրաէն, Երկար տակնէ ի վեր խոր-
հուրդ մը յղացած եմ՝ զոր ձեզ յայտնելու համար չուզեցի
իմ կողմէս մէկը գնել։ Ինձ համար ա՛յնքան կարեւորութիւն
ունեցող խնդիր մ'է որ ես անձամբ կը ներկայացնեմ զայն,
եւ առանց պատ ի պատ խօսքերու։ կը խոստովանիմ թէ ձեզ
փեսայ ըլլալը՝ մեծ պատիւ՝ մեծ շնորհ մ'է՝ որու մասին ձեզ
հաւանութիւնը կը հայցեմ։

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԻԿԻՆ. — Որ եւ է պատասխան տալիք յառաջ՝
կը խնդրեմ սա՛ զրուցէք,թէ աղնուակա՞ն էք թէ ոչ :

Յ ՔԷՅ ՈՆԴ. — Այսպիսի հարցման մը պատասխանելու համար, տիմար ժուրատէն, շատ մարդկի երկար չեն տատամնիր, իրենց սրտին ուղածը կ'ըսեն ամենայն յօժարութեամբ, բնաւին խիզք չեն ըներ այդ անունը վրանին առնելու, եւ սովորութիւնն այսօր կարծես այս գողութիւնը ներելի ըրած ըլլայ: Իմ մասիս կը խոստովանիմ թէ այս նիւթի մէջ զգացումներս աւելի փափուկ են: Ես կը կարծեմ թէ որ եւ է խարէութիւն պարկեցտ մարդու մ'անարժան է, եւ թէ վատութիւն ըրած կ'ըլլանք քնութեան մեղ ուռած ծնունդը ծածկելով, աշխարհի առջեւ գողունի տիտղոսով մը զարդարուելով, չեղած բանը եղածի պէս ցուցնելով: Ես առանց ստութեան՝ պատռաւոր պաշտօններ վարած ծնողացմէ սերած՝ եւ վեց տարի յութեան զինւոր ըլլալու պատիւն ունեցած եմ. ասկէ առ աշխարհի մէջ սանկ նանկ զիրք մը բռնելու համար աւական հարստութիւն ունիմ, այւ այս ամէն բաներոց մէկտեր ուղեր աղնուականութեան տիտղոս առնուլ էտ իմ տեղս շատ էր պիտի յաւախնէին այդ բանին:

ուստի անկեղծօրէն կը յայտնեմ թէ ես ազնուական տոհմի
զաւակ չեմ:

ՊԱՐՈՒՆ ՃՈՒՐՏԵԿՆ. — ԻՆՑ ԿԱյէ, Պարուն ՃՈՒՐՏԵԿՆ.

ՔԱՅՈՒԹԻՒՆ. — Եւ ինչու :
ՊԱՐՈՒՆԱԿԱԿՑՈՒՄ. — Ազնուական գարմէ չես, հետեւա-

սլէս աղջկիս չես կրնար առնուլ։
Տիկին ժՈՒՐՏէՆ. — Այդ աղնուական խօսքով ի՞նչ ըստ
մասնաւունքուն ն ենք կամ . . .

կ'ուզես. միթէ մնաք ալ Մօնմօրանսորմէն, և առ ՊղԱՐՈՆ ԺՈՒՐՑԵՆ. - Լուէ, կին. կը հասկնամ թէ խօսքն

ո՞ւր պիտի բերես։
Տիկին ժՈՒՅՑԵՆ. - Միթէ մենք ալ էմսափ ընտանիքներ

լէ սերած չե՞նք :
ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. - Հիւածդ զրախոսութիւն չէ հիմայ :

Տիկին ՃՈՒՐՏԵՆ. — Ըստ՝ հայում, այլու և առաջարկ մարդ չէ՞ւ:

ՊԱՐԱՆԻ ԺՈՒԾԵԼՈՒՆ. — Ի՞նչ անհռունի կրու ու լու շփամցներ այսպէս ափեղցիեղ խօսելու։ Եթէ քու հայրդ շու կայի մարդ էր՝ քարը գլուխը, ևս ի՞նչ ընեմ. հօրս համա այդպէս ըստղներն իրենց բերնէն ելածը շեն զիտեր։ Ե առաջին եւ վնրջին խօսքս այս է թէ ես աղնուական փես լուսեմ։

Տիկին ժղութէն. — Աղջկանի յուրաքանչ հարուստ ենին համար աւելի լաւ է պարկէշտ մարդ մը՝ հարուստ ենին անարծաթ եւ անճռանի:

Հարսի քան աղջուռական և առավելութ
չնորհքով, քան աղջուռական և առավելութ
Նիթօկ, — Այդ ձշմարիս խօսք է: Մեր դիւզի Յո
մենական պատճենին մէկն է:

19. *Uma-pibqmi-5p°*

ՏԵՐԱ - ՊՈՒՐԻՑԵՆ - 0.50, ԱՐԴՎԵԼ - 1
ՏԵՐԱ - ՊՈՒՐԻՑԵՆ - 1 ՏԱ Այդ Խանին Բառ. Հաճութիւն
ՏԵՐԱ - ԿԸՆԱՄԱՅԹԽԱՆԻՆՔՐԵ մՆՃԱՄԵԾ ան

աղջկանս իրեսը՝ արդիք ի՞նչ ըստամբէց
աշճելու ծնած զա ալիսիր զիս մհծ-մայր կոչելու ամէ

Ձո՞ւ ամեկնո՞վ մէ հագուստ և կապաւած է

եկած ատեն՝ եթէ անուշազրութեամբ թաղեցիներէն մէկուն բարեւ չտայ՝ հաղար կերպ ափեղցիեղ խօսքերու գուռ բացած պիտի ըլլայ. «Կը տեսնէք, պիտի ըսեն, մեծութիւն ծախող սա տիկին մարքիղուհին. պարոն ժուրտէնի աղջիկն է՝ որ պղտիկութեան ատեն մեծ-տիկնութիւն խաղալով կը զուարձանար. Սյս բարձր դիրքը հիմայ ունի. իր երկու մեծ-հայրերը չուխայ ծախող թանգարներ՝ մեռած ժամանակի իրենց դաւակներուն հարստութիւն թողուցին, հարստութիւն՝ որու մեղքը ծանր կերպով միւս աշխարհի մէջ թերեւս կը քաւեն հիմայ. պարկեշա ընթացքով այնքան հարստութիւն չժողվուիր»: Ես այս տեսակ բամբասանքներու չեմ ուզեր ասիթ տալ. մէկ խօսքով այնպիսի մարդ կ'ուզեմ որ աղջիկս առնելու համար ինձ չնորհապարտ ըլլայ, եւ որու ըսեմ. «Նստի՛ր փեսայ մեղ հետ հաց ուտես»:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԻՑ. — Փոքրոզի անձի մը զդացումներ եւ ատոնք՝ միշտ զձնութեան մէջ մնալ ուզեւ. Խօսք մտիկ չե՞ ըներ. ի՞նչ որ աւ ըսէք՝ աղջիկս մարքիղուհի պիտի ըլլայ. եւ եթէ զիս աւելի բարկացնէք՝ զան դքսուհի կ'ընեմ.

ՏԵՍԱՐԱՆ ԺԴ.

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԻՑ, ԼԻՎՍԻԼ, ՔԼԵՅՆԻ, ՆԻՔՈԼ, ՔՈՎԻԼ

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԻՑ. — Քլէօնդ, յոյսդ մի՛ կտրեր տակաւին. (Լիւսիլի.) Աղջիկս, հետո եկուր եւ աներկիւղ ըսէ՛ հօրդ որ սիրոդ Քլէօնդի հետ է, եւ եթէ զան չանուս աշխարհի մտնել չես ուզեր.

ՏԵՍԱՐԱՆ ԺԴ.

ՔԼԵՅՆԻ, ՔՈՎԻԼ.

ՔՈՎԻԼ. — Շիտակը, տէր իմ, աղէ՛կ գործ տեսաք ձեր այդ յայտնած բարձր զգացումներով:

ՔԼԵՅՆԻ. — Ի՞նչ ընեմ. ուրիշներուն օրինակներով խըզճամութիւն չկրնար փարատիլ:

ՔՈՎԻԼ. — Միթէ իսհօք է այդպիսի մէկու մը հետ լրջօրէն

խօսիւ. չէ՞ք տեսներ որ խենթին մէկն է, իր ցնորքներուն յարմարելով ի՞նչ կը կորանցնէիք: ՔԼԵՅՆԻ. — Իրաւունք ունիս, այլ չէի կարծեր թէ պարոն ժուրտէնի վեսան ըլլալու համար պէտք էի աղնուականութեան ապացոյցներ տալ:

ՔՕՎԻԼ. — (Ծիծաղելով.) Ա՛հ, ա՛հ, ա՛հ:

ՔԼԵՅՆԻ. — Ի՞նչ բանի կը խնդաս:

ՔՕՎԻԼ. — Մեր մարզը խարելու եղաղձեղ ձեր նպատակին հասցնելու համար բան մ'ինկաւ միտքս:

ՔԼԵՅՆԻ. — Ի՞նչ բան:

ՔՕՎԻԼ. — Տարօրինակ զաղափար մը:

ՔԼԵՅՆԻ. — Խօսէ՛ նայիմ, ի՞նչ զաղափար է:

ՔՕՎԻԼ. — Սյս վերջին ժամանակներս զանաղան տարազներով ծպտուն խումբ մը կայ կաղմուած՝ որ խիստ յարմար կուգայ այս պարագալիս: Մեր ծալրելի մարդուն խաղ մը ուուզեմ խաղալ եւ այդ ծպտեալ խումբը խաղիս պիտի ծառայց այդ մարդուն հետ ամբն տեսակ փորձ կրնայ ըլլալ՝ տուանց այնքան բարակը վնասելու: Այնպիսի ոչին է՝ որ իր գերը ըստ ամենայնի պիտի կատարէ խումբին մէջ, եւ իրեն ուղղուելիք ամէն խենթումնիթ խօսքերը կատարելապէս պիտի կլէ: Դերասաններն ու հազուստներն պատրաստ են:

ՀԵՐԱՄԱՆ առուե՛ք որ զործեմ: ՔԼԵՅՆԻ. — Այլ բանը հասկցուր նայիմ, ՔՕՎԻԼ:

ՔԼԵՅՆԻ. — Այլ բանը հասկցուր նայիմ, ՔՕՎԻԼ:

ՔՕՎԻԼ. — Այս մեր մարզը կուգայ, քաշուինք ասկէ:

Կաթէն ամէն ինչ կը հասկցնեմ:

end of Act

ՏԵՍԱՐԱՆ ԺԵ.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԻՑ

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԻՑ. — (առանձին.) Ի՞նչ բան է այս: Շառակակ երեսիս կը զանեն մեծ-աղաները. իսկ ես ամենէն գեղեցիկ բանը եւ գանեմ այդ մեծ-աղաներուն հետ տեսութիւն ըլլալ. որոնց քով միայն պատիւ. ու քաղաքակարութիւն կայ. է ասկէ կոմս կամ մարքիլ ճնած ըլլալ. ուսկեցածս կուտայի:

ՏԵՍԱՐԱՆ ԺԶ.

ՊՈՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ, ԼԱԶ ՄԸ

ԼԱԺԲ.— Տէր իմ, պարոն կոմսը կուգայ՝ կնոջ մը ձեռքէն բռնած:

ՊՈՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ.— Քանի մը հրամաններ ունիմ տալիք, ըսէ՛ իրեց թէ պահեկէ մը պիտի գամ:

ՏԵՍԱՐԱՆ ԺԷ.

ՏՕՐԻՄԵՆ, ՏՕՐԱՆԴ, ԼԱԶ ՄԸ

ԼԱԺԲ.— Տէրս պահեկէ մը պիտի դայ:

ՏՕՐԱՆԴ.— Շատ լաւ:

ՏԵՍԱՐԱՆ ԺԸ.

ՏՕՐԻՄԵՆ, ՏՕՐԱՆԴ

ՏՕՐԻՄԵՆ.— Զգիտեմ, Տօրանդ, այլ այս անդամ եւս տարօրինակ ընթացքի մը մէջ կը գտնուիմ ձեզ հետ դալով տուն մ'ուր ծանօթ մը չունիմ:

ՏՕՐԱՆԴ.— Զեր հոռանին ի պատիւ ձեզ սեղան մը տալու համար ո՞ւր կրնար ընտրել, քանի որ գայթակղութիւն չպատճառիլու համար ո՛չ ձեր տունը կ'ուզէք եւ ոչ իմո:

ՏՕՐԻՄԵՆ.— Այլ չէք ըսեր թէ ամէն օր անդգալի կերպիւ ձեր սիրոյն հարկ եղածէն աւելի մեծ յօյցերը ընդունելու, ձամբ մէջ կը մտնեմ. կան բաներ՝ զորս չեմ ուզեր ընել այլ ճար չկայ, կը յաղթէք ընդդիմութեանս. քաղաքավար յամառութեամբ մ'ի փերջոյ ամէն ձեր ուզաններն ընել կուտաք: Յոլովակի այցելութիւններով սկսանք, յետոյ սիրոյ յայտարարութիւններ և եկան՝ որոնց հեաեւանքն եղան ցայդանուազներ եւ փոքր նուերներ, եւ ասոնցմէ ալ եւաք՝ մեծապին պարզեւներ: Այս բոլոր բաներուն գէմ դրի, այլ դուք խրաչն չէք դիտեր, եւ ոտն առ ոտն կը տիրանաք իմ որոշմանց: Ա՛յ իս ինք իրմէս վատահ չիմ, եւ կը կարծիմ հուսուր առ առ առ:

մուսնութեան ջուրերուն պիտի բերէք զիս՝ որմէ սակայն հեռու մնալ կ'ուզէի:

ՏՕՐԱՆԴ.— Ճշմարիտ, տիկին, գուք պէտք էիք արդէն ամուսնացած ըլլալ: Այրի էք, եւ մէկէ մը կախում չունիք. իս իմ անձիս տէր եմ, եւ զձեղ անձէս իսկ աւելի կը սիրեմ. ի՞նչ արգելք ունիք որ նոյն իսկ այսօր զիս գերերջանիկ չընէք:

ՏՕՐԻՄԵՆ.— Ի՞նչ ըսեմ, Տօրանդ, երկու կողմէ ալ չա՛տ եւ չա՛տ յատկութիւններ պէտք են միատեղ երջանիկ ապրելու համար, եւ աշխարհիս երկու ամենէ խոհական անձերը ստէպ զժուարութիւն կը կրեն կազմելու միութիւն մ'որմէ դոհ մնան:

ՏՕՐԱՆԴ.— Լուրջ մտածում մը չէ, տիկին, ամուսնութեան մէջ այդքան զժուարութիւններ երեւակայել, եւ ձեր անձնական փորձառութիւնը ուրիշ ամուսնութեանց նկատմամբ բան մը չեղակացներ:

ՏՕՐԻՄԵՆ.— Վերջապէս միշտ իմ խօսքիս կուգամ: Ինձ համար ըրած ձեր մեծամեծ ծախսերը երկու պատճառներով ինձ մտաստանջութիւն կը պատճառեն. մին այն է որ ուզածէս աւելի կը կաշկանդեն հնառուն կը տանին զիս. իսկ միւսը՝ աւելի կը կաշկանդեն հնառուն կը թողուն զձեղ, եւ այդ բանը չեմ դժուար դիրքի մը մէջ կը թողուն զձեղ, եւ այդ բանը չեմ ուզեր ամենիւին:

ՏՕՐԱՆԴ.— Ո՛չ, տիկին, ասոնք պդտիկ բաններ են, եւ այս տեսակ ծախսերով չէ որ . . . :

ՏՕՐԻՄԵՆ.— Ես ըսածս գիտեմ. եւ մանաւանդ ձեր ինձ բոնի տուած պատճառն այնպիսի մեծապին բան մ'է . . . :

ՏՕՐԱՆԴ.— Ո՛չ, տիկին, կը խնդրեմ, բանն այնքան մի՛ մնացնէք. ձեր սիրահարը ձեզ անարժան իսկ կը գանէ զայն, եւ . . . : Տան տէրը կուզայ:

ՏԵՍԱՐԱՆ ԺԹ.

ՊՈՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ, ՏՕՐԻՄԵՆ, ՏՕՐԱՆԴ

ՊՈՐՈՆ ԺՈՒՐՏՅԵՆ.— (որ երկու խոհարհութիւն ընելի ախազանց մօս կը գտնուի Տօրիմէնի) Քիչ մը հեռուն ակիլին:

ԱՐԱՐՔ ՉՈՐԴՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՏՕՐԻՄԵՆ, ՊԱՐՈՆ ԺՈՒԲՏԵՆ, ՏՕՐԱՆԴ, ԵՐԵԲ ԵՐԱԺԻՇՑՆԵՐ,
ԼԱԶ ՄԲ

ՏՕՐԻՄԵՆ.—Աս ի՞նչ ամենաճռխ սեղան է, Տօրանդ:
ՊԱՐՈՆ ԺՈՒԲՏԵՆ.—Չեր աղնուութիւնն է այդ, աթկին.
Կ'ուզէի որ ձեզ աւելի արժանի բան մ'ըլլար.

(Տօրէն, Պ. Ժուբտեն, Տօրանդ, և եւեւ երաժիշտ եւշն իւնարին.)

ՏՕՐԱՆԴ.—Պարոն Ժուբտենը այսպէս խօսելու իրաւունք
ունի, տիկին, և զիս չնորհապարա կը թողու զձեղ այսօրի-
նակ պերձութեամբ ընդունելով: Ես ալ իրեն համամիտ հմ
թէ սեղանը ձեզի արժանի չէ: Բայ որում ե՞ս ըրի կարգա-
գրութիւնները, և մեր բարեկամներուն պէս հարկ եղած
հմտութիւնը չունիմ: ոչ այնքան արուեստով պատրաստուած
սեղան մը կը տեսնէք ձեր ասցեւ՝ ուր անյարմար ուտելիքներ
և կիրթ ձաշակի գէմ բաներ պիտի գանուին հարկաւ: Եթէ
Տամիս ըլլար այս խրախճանին կարգագրիչը՝ ամէն ինչ հըմ-
տալից ու վայելուչ պիտի ըլլար, և ինքն ալ իր կողմէ
չպիտի մոռնար իր տուած սեղանին մէն մի կիրակութները
չափաղանց լեզուով մը փառաւորել, և լաւ պատասներու
մասին իր բարձր կարողութիւնը ձեզ ճանչցնել: Առ ու

գովէր ձեզ ոսկեղոծ շեղեղրով եւ ամէնուստ ուսուցաւոր
կեղեւով հաց մը՝ ակռայի տակ անուշիկ մը շաջող: մուկի
կարմրագոյն եւ անկծու զինի մ'որու նոր պատրաստուածի
թթուութիւնը ոչ այնչափ տիրական ոյժ ունի: աղաաքեղով
զարգարուն ոչխարենի մը, նորմանտական հորթի մ'ապիտակ
երկրնեկ մէջքը՝ որ նշաղանգուածի փափկութիւնն ունի
ակռայի տակ: անոյշ սքանչելի հոտ մ'առած կաքաներ, եւ
իբր իրեն մէկ գիւտը՝ նուշի ջուրով սպիտակեալ արգանակէ
ապուր մ'աղաւնեակներով զարգարուն խոշոր հնդկահաւէ մը
ոյժ առած, որու վրայի կողմը եղերդով միացած սպիտակ
սոխեր կը տեսնուին վ Այլ իմ մասիս՝ կը խոստովանիմ տղի-
տութիւնս, եւ ինչպէս խիստ լաւ խօսեցաւ պարոն Ժուբտէն՝
կ'ուզէի որ խնմոյքը ձեզ աւելի արժանաւոր բան մ'ըլլար:

ՏՕՐԻՄԵՆ.—Սյա պատուասիրական խօսքերուն ուրիշ
պատասխան չիմ տար՝ բայց եթէ ախորժիւ ուտելով, ինչպէս
կ'ընեմ իսկ:

ՊԱՐՈՆ ԺՈՒԲՏԵՆ.—Ո՞հ, ի՞նչ զեղեցիկ ձեռքեր:

ՏՕՐԻՄԵՆ.—Չեռքերը բան մը չեն, պարոն Ժուբտէն,
այլ ադամանդին վրայ կ'ուզէք խօսիւ՝ որ յոյժ զեղեցիկ է
իրոք:

ՊԱՐՈՆ ԺՈՒԲՏԵՆ.—Ե՞ս, տիկին: Աստուած չընէ որ
ադամանդին վրայ խօսիւ ուզեմ: կնամեծար մարդու խօսք չէ
այդ, ադամանդը չնչին բան մ'է:

ՏՕՐԻՄԵՆ.—Խիստ դժուարահած էք: պարոն Ժուբտէն:

ՊԱՐՈՆ ԺՈՒԲՏԵՆ.—Չեր աղնուութիւնն է տիկին, որ ...:

ՏՕՐԱՆԴ.—(Պ. Ժուբտէնի նշան մ'ընկեկ եսֆ.) Հազար,
գինի տուէք պարոն Ժուբտէնի եւ միւս պարոններուն՝ որք
պիտի բարեհամին, մեղ սեղանի երդ մ'երգել:

ՏՕՐԻՄԵՆ.—Կերպվուումի երաժշտութիւն խառնելը սքանչուում
չելի կերպիւ համեմել է զայն: Եղած պատուասիրութիւններն
սառուցիւ մեծ են:

ՊԱՐՈՆ ԺՈՒԲՏԵՆ.—Տիկին . . .

ՏՕՐԱՆԴ.—Սա պարոններուն երգերը մտիկ ընենք, պա-
րոն Ժուբտէն, անոնց ըսելիքները մեր խօսքերէն լաւազոյն
են:

Ա. ԵԻ Բ. ԵՐԱԺԻՇՑՆԵՐՆ ՄԻԱՋԱՅՅՆ.—(Բաժակ ի ձեռին.)

Ըկըսելու համար, Շուշան, մատ մի գինի.
Քու ձեռաց մէջ գաւաթն ի՞նչ լեծ նրապոյը ունի:

Դուն եւ գինին կ'օգնէց իրար,
Երկուընուղ վրայ իմ սրտի սէրն կ'աւելնայ յար.
Իմ, քու, իր մէջ, երդնո՛ւնք, ուխտե՛նք, սիրուիիդ իմ.
Մէր հարազատ, հաւատարիմ:

Թրջելով քու բերանդ՝ ո՛րջան կ'աղուղնայ նա,
Նոյնպէս բերանդ իրմով ո՛րջան գեղեցկանայ.

Մէկը միւսին փափաք կ'ազդէ,
Ու ես ձեզմով յափշտակուած՝ կ'արջուիմ խանդէ.
Իմ, քու, իր մէջ, երդնունք, ուխտե՛նք սիրուիիդ իմ.
Մէր հարազատ, հաւատարիմ.

Բ. ԵՒ Գ. ԵՐԱԺԻՇՏՆԵՐ ՄԻԱՅԱՅՆ. —

Խմե՞նք, խմենք, ո՛ բարեկամք,
Զի ժամանակ կը փախչի՛ շո՛ւտ.
Խմե՞նք, այո՛, որքան կրնամք,
Կեամքէն յաւէտ սաղե՞նք օգուտ.

Մէյ մ'որ անցնինք Ստիւրս գետէն՝
Զը մընար սէր, ոչ ալ գինի:
Խմե՞նք ուրեմն առատօրէն,
Զի միշտ խմել չէ կարելի:

Դարտակ յիմարն թող մտածէ՝
Երջանկութիւն ո՞լն է կեանքի:
Մէր հաստատուն կարծիլն է թէ
Գինւոյ մէջ այն կը գտնուի:

Գեղ, փառք, պատիւ ու մամնայն
Հոգ ու թախիծ չեն փարատեր.
Խմելով մենք կրնանք միայն
Անցընել լաւ կեանքի ժամեր:

ԵՐԵՔՆԻՆ ՄԻԱՅԱՅՆ. —

Գինի, գինի. ո մանչ, լեցո՛ւր գեղուն գաւած.
Լեցո՛ւր, լեցո՛ւր, մինչեւ ըսենք՝ բաւ է եւ շատ.

ՏՕՐԻՄԷՆ. — Խիստ գեղեցիկ է այս. ասկէ գեղեցիկ Կր-
գել ըլլար.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԷՆ. — Հոս աւելի գեղեցիկ բան մ'ալ կը
տեսնեմ, տիկին:

ՏՕՐԻՄԷՆ. — Ո՛հ, տիար ժուրտէնը կարծածէս աւելի կնա-
մեծար է եղեր:

ՏՕՐԱՆԴ. — Այդ ալ իսօ՞սք է, տիկին. դուք ո՞րու տեղ
դրած էք տիար ժուրտէնը:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԷՆ. — Կը փափաքիմ որ տիկինն ըսելիքիս
համեմատ կարծիք կազմէ իմ վրաս:

ՏՕՐԻՄԷՆ. — Նորէ՞ն ձեր գովանքները կ'սկսիք.

ՏՕՐԱՆԴ. — (Տօրիմէնի.) Դուք, տիկին, տիար ժուրտէնի
ի՞նչ մարդ ըլլալը չէք ճանչնար:

ՏՕՐԻՄԷՆ. — Ո՛հ, ի՞նչպէս կարող ըլլամ անոր խօսքերուն
պատասխան հասցնել:

ՏՕՐԱՆԴ. — Եւ իրօք պատասխանը տիար ժուրտէնի շըր-
թանց վրայ միշտ պատրաստ է: Այլ կը դիտէ՞ք, տիկին,
ո՛րքան կնամեծար է նա. ձեր մատերուն դպած բոլոր կտոր-
ները կ'ուտէ:

ՏՕՐԻՄԷՆ. — Տիար ժուրտէնը կատարելապէս հրապուրալի
մարդ մ'է:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԷՆ. — Եթէ կարենայի, տիկին, հրապուրել
ձեր սիրտը, իրաւցնէ . . .

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Տիկին ԺՈՒՐՏԾԷՆ, ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԷՆ, ՏՕՐԻՄԷՆ, ՏՕՐԱՆԴ,
ԵՐԱԺԻՇՏՆԵՐ, ԼԱՃԵՐ

Տիկին ԺՈՒՐՏԾԷՆ. — Ո՛հ, ո՛հ, պատուական ընկերութիւն
մը կը գտնեմ հոս. յայնի է թէ իմ զալուստոս չէր սպասուեր:
Այս գեղեցիկ գիտումով ուրեմն, իմ պատուակա՞ն ամուսինս,
Այս աշխափ հոդ տարիք որ երթամ քրոջս տունը ճաշեմ: Քիչ
մը յառաջ թատրոն տեսալ, հոս ալ ուրախութեան սեղան կը
տեսնեմ: Այսպէս ուրեմն քու ինչքդ կը վատնես. հոս չեղած
միջոցիս խնջոյք կուտաս կիներու. եւ զիս տունէն ճամբելով՝
երդ եւ նուագ կը հրամցնես անոնց:

ՏՕՐԱՆԴ. — Ի՞նչ ըսել կ'ուղէք, տիկին ժուրտէն. այդ
ի՞նչ ցնորք է ձերինը. մտքերիդ դրեր էք որ ձեր ամուսինը

իր ինչքե՞րը կը վատնէ, եւ թէ այդ խնձոյքը տուողն ի՞նքնէ: Ցուողը ինք չէ, ե՛ս եմ. ինք միայն իր տունը նուիրեց այս հացկերոյթին: Պէտք էք, տիկին, լաւ ուշաղրութիւն ընել ձեր բերնէն ելած խօսքերուն:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Այս՝ սեւերս կի՞ն, պարոն կոմսն է սեղան տուողը այս ազնուատոնմ նազելի տիկնոջ: Խնձ պատիւ ըրաւ տունս ընտրելով եւ զիս ալ մէկտեղ առնելով:

ՏԻԿԻՆ ԺՈՒԻՐՏԵՆ. Պարա՛պ խօսքեր բոլորն ալ. ես ըսածս գիտե՛մ:

ՏՈՐԻՄԴ. — Լաւ ակնոցներ զրէ՛ք, տիկին ԺՈՒԻՐՏԵՆ, որ քաջ տեսնէք:

ՏԻԿԻՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Ես ակնոցի պէտք չունիմ, պարոն, եւ եղածները քաջ կը տեսնեմ: Վաղուց բանին հոտը կ'առնէի, մի՛ կարծէք թէ տիմար մէկն եմ: Զեղի պէս մեծ ազնուականի մը համար խիստ անվայել ընթացք է այդպէս շահագործել ամուսնոյս յիմարութիւնները: Խոկ գուք, տիկին, մեծ խութունի մը համար ոչ չնորնքով եւ ոչ վայելուչ բան է ընտանիքի մը մէջ դժուութիւն ձգել, եւ հանդուրժելով որ ամուսինս ձեր սիրահարն ըլլայ:

ՏՈՐԻՄԵՆ. — Ի՞նչ խօսքեր են ասո՞ք: Զեր ըրածը լաւ բան չէր, Տօրանդ զիս այսպէս նշաւա՛կ ընէք այս այլանդակ կնոջ յիմարական ցնորդներուն:

ՏՈՐԱՆԴ. — (Տօրիմենի ետեւին երթաղով որ դուրս կ'եղի.) Տիկին, տիկի՞ն, ո՞ւր կը վազէք այդպէս:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Տիկի՞ն . . . պարոն կոմս, իմ կողմէս ներում խնդրեցէք, եւ ջանացէք զինք ետ բերելու:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՏԻԿԻՆ ԺՈՒԻՐՏԵՆ, ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ, ԼԱՅԵՐ

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Հանեցա՞ր ըրածդ, սեւերս կի՞ն: Եկար ամէնուն առջեւ ինձ զէմ նախատինքներ թափեցիր, ազնուական անձեր տունէս դուրս վոնացիք:

ՏԻԿԻՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Եկե՛րն եմ անիծեր անոնց աղնուաթիւնն:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Զեմ զիտեր ի՞նչպէս կը համբերեմ

ու տակնուվրայ ըրած սեղանիդ պնակներով դլուխդ չորս
կտոր չեմ ըներ, գարշելի կի՞ն: (Լուսեւ եւ հերացնելու հետոնին:)

ՏԻԿԻՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — (դուրս եղիղով.) Քանի՛ կ'առնեմ
այդ սպանալիքդ, Ես իմ իրաւունքներս կը պաշտպանեմ, եւ
բոլոր կանանց սեռն իմ կողմս ունիմ: ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Կորի՛ր առջեւէս, կնիկ, եթէ ոչ
գէշ կ'ընեմ:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — (առանձին.) Թշուառական կի՞նս
խիստ ձախող ժամու մը հասաւ: Աղուոր խօսքեր զբուցելու
տրամադիր էի, եւ երբէք այսքան սրախօսութիւնս բռնած
չէր: Ո՞վ է այս մարդը:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ, ՔՅՈՎԻԵԼ,

ՔՅՈՎԻԵԼ. — Զիս ճանցա՞ր, պարո՞ն: ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Ո՞չ, պարո՞ն, չիմ ճանչնար,
ՔՅՈՎԻԵԼ. — (գետնին մեկ ոտնաշակ բարձրութեամբ իշեցնելով ձեռիլ) Զձեզ սաչափ պղախ եղած ժամանակնիդ ճանչ-
ցած եմ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Այշշափ ողջոկ եղած ժամանակն:

ՔՅՈՎԻԵԼ. — Այս՝ Ամենուղեղեցիկ տղայ մ'էիք եւ ամէն
կիներ իրենց թեւերուն վրայ առած կը պազնէին զձեղ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Իրենց թեւերուն վրայ առած կը
պազնէի՞ն զիս:

ՔՅՈՎԻԵԼ. — Այս՝ Ես ձեր հանգուցեալ հօրը մեծ ըաբե-
կամն էի:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Իմ հանգուցեալ հօրս բարեկա՞մը:

ՔՕՎԻԵԼ. — Այո՛, խիստ պարկեշտ աղնուական մ'էր ձեր հայրը:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Հա՞յրս պարկեշտ աղնուական մ'էր ՔՕՎԻԵԼ. — Այո՛:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Աղէկ ճանչցա՞ք զի՞նք:

ՔՕՎԻԵԼ. — Ճանչնալն ալ խօ՞սք է:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — իբր աղնուակա՞ն մը ճանչցաք:

ՔՕՎԻԵԼ. — Բուն աղնուական մը:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Այս ի՞նչ տեսակ անձոռնի աշխարհ է:

ՔՕՎԻԵԼ. — Ի՞նչ ըսել կ'ուզէք, պարո՞ն:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Կան յիմարներ՝ որք կ'ըսեն թէ նա առուտուրի մարդ մէ եղեր:

ՔՕՎԻԵԼ. — Նա՞, առուտուրի մարդ. կատարեալ զբարտութիւն, նա երբէք առուտուրի մարդ չէ եղած: Իբ բոլոր ըրածն ա'յն էր որ ինք խիստ աղնիւ ըլլալով ու խիստ պատրաստական, եւ պաստառներէ ալ լաւ տեղեկութիւն ունենալով ամէն կողմէ կ'երթար ու տեսակներ կ'ընտրէր եւ իբ խանութը բերելով ստկի փոխարէն բարեկամներու կուտար գանոննք:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Մեծապէս ուրախ եմ, պարո՞ն, զձեզ ճանչնալուս որպէս զի այս վկայութիւնս տաք թէ հայրս աղնուական մ'էր:

ՔՕՎԻԵԼ. — Ամէնուն առջեւ հաստատելու պատրաստ եմ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Զեղ չնորհապարտ պիտի մնամ: Եւ ի՞նչ պատճառով կուզաք հոս, պարո՞ն:

ՔՕՎԻԵԼ. — Զեր ողորմած-հոգի հայրը՝ ինչպէս ըսի՞ պարկեշտ աղնուական մը ճանչնալէս ի վեր՝ ըոլոր աշխարհ դարձայ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Բոլո՞ր աշխարհ դարձաք, կ'ըսէք:

ՔՕՎԻԵԼ. — Այո՛, բոլոր աշխարհ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Կարծեմ այդ ըոլոր աշխարհը իրստ հեռու է ասկէ:

ՔՕՎԻԵԼ. — Անտարակո՞յս Զորս օր կայ որ այս երկար ուղեւորութիւններէն դարձայ, եւ ըստ որում ձեր անձին վերաբերեալ ամէն ինչ կը շահազրդոէ զիս՝ մեծ աւետիս մը տալու կուզաք:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Ի՞նչ աւետիս

ՔՕՎԻԵԼ. — Իմացա՞ք թէ չինաստանցի աղնուական մը հոս կը գանուի:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Ե՞ս այդպիսի բան չիմացայ:

ՔՕՎԻԵԼ. — Զարմանալի՛ բան ա'յնքան պերճ կազմածներ՝ ձիեր ու ծառաներ ունի՝ որ ամէնքը տեսնելու կը վազեն. իբր պերճաշուք իշխան ընդունուեցաւ քաղաքիս մէջ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Իբաւ որ լսած չէի այդ լուրը:

ՔՕՎԻԵԼ. — Զեղի համար կարեւոր կէտն այն է որ ձեր աղջկան գարնուեր է:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Չինաստանցի աղնուականը:

ՔՕՎԻԵԼ. — Այո՛, եւ կ'ուզէ ձեզ փեսալ ըլլալ:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Ինձ փեսա՞յ, չինաստանցի աղնուական մը:

ՔՕՎԻԵԼ. — Այո՛, զինք տեսնելու գացեր էի, եւ որովհետեւ չիներէն քաջ զիտեմ՝ ինձ հետ երկարօրէն խօսեցաւ, եւ մէկ շատ զրոյշներէ ետք ըսաւ. «Աքսիամ որօք սօներ օնզ ալլա Սուսթաֆ Պիտէլում ամանահիմ վարահիմնի ուսէր քարպուլամ.» որ ըսել է. Տեսա՞ծ ես խիստ գեղեցիկ աղջիկ մը որու հայրը պարոն ժուրտէն կը կոչուի եղեր, նոյն ինքն Բարիզցի աղնուական մը:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Չինաստանցին ա՞յսպէս խօսեցաւ իմ վրայօքս:

ՔՕՎԻԵԼ. — Այո՛: Երբ պատօսիսանեցի իրեն թէ մասնաւոր կերպիւ կը ճանչնամ զձեղ եւ թէ ձեր աղջիկը տեսած եմ՝ Ա՛խ, ըսաւ, մարապապա սահիմ», որ ըսել է «Ո՛քան զարնուած եմ այդ աղջկան:»

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Մարապապա սահիմ. Ա՛խ, ո՛քան զարնուած եմ այդ աղջկան ըսել է:

ՔՕՎԻԵԼ. — Այո՛:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Եիտակը աղէկ որ ըսիր. վասն զի իմ մասիս չպիտի հաւտայի բնաւ թէ մարապապա սահիմ «Ա՛խ, իմ մասիս չպիտի հաւտայի բնաւ թէ մարապապա սահիմ» ըսել ըլլալ: Ի՞նչ զարո՞քան զարնուած եմ այդ աղջկան ըսել ըլլալ: Ի՞նչ զարմանալի լեզու է եղեր այս չիներէնը:

ՔՕՎԻԵԼ. — Կարծուածէն աւելի զարմանալի: Գիտէ՞ք ինչ ըսել է զարարացամուշէն:

ՊԱՐՈՒՆ ԺՈՒԻՐՏԵՆ. — Քաջարաշամուշէ՞ն. ո՛չ, չեմ զիտել:

ՔՕՎԻԵԼ. — Կը նշանակէ սիրակա՞ն հոգիս:

ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. — Քաջարաջամուշէն՝ սիրական հոգի՞ս
կը նշանակէ :

ՔՕՎԻԵԼ. — Այո՛ :

ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. — Զարմանալի՞ բան : Քաջարաջամուշէն՝ Սիրական հոգիս ըսել է եղեր : Այդպիսի խօսք կ'ըլւա՞յ . դարմանալի՞ , զարմանալի՞ :

ՔՕՎԻԵԼ. — Վերջապէս՝ իմ գեսպանութիւնս կատարեալ կ'ընեմ ըսելով թէ չինաստանցի ազնուականը ձեր աղջիկը կնութեան կ'ուզէ , եւ իրեն արժանի աներ մ'ունենալու համար՝ միաջը գրած է մամամուշի ընել զձեղ՝ որ մեծ աստիճան մ'է իր երկրին մէջ :

ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. — Մամամուշի մեծ աստիճան :

ՔՕՎԻԵԼ. — Այո՛ , մամամուշի , այսինքն մեր լեզուով ըարձր տսպետ պալատինոս Պալատինոսը այն հին . . . վերջապէս պալատինոս : Բոլոր երկրի ամենէ պահճալի աստիճանն ա'յու է , որով աշխարհի ամենաբարձր ազնուականներուն հաւասար պիտի ըլլաք :

ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. — Մեծ պատիւ կ'ընէ ինձ , եւ կաղաչն որ դիս իր քով տանիք՝ չնորհակալութիւններս յայտնելու :

ՔՕՎԻԵԼ. — Ի՞նչ կ'ըսէք . ինքը հիմայ հոս պիտի դայ :

ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. — Հո՞ս պիտի դայ :

ՔՕՎԻԵԼ. — Այո՛ , եւ աստիճանատուութեան հանդէսին ամէն պէտք եղածներն իր հետ պիտի ընթէ :

ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. — Այդ ո՛րքան կ'աճապարէ :

ՔՕՎԻԵԼ. — Ինք սիրահարած է ու ամէն բան շուար կ'ուզէ :

ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. — Զիս անհանգիստ ընող միակ կէտը սու է որ աղջիկս՝ պինդ-զլուխին մէկը՝ Քլէօնդ անունով մէկու մը խելք տուեր է , եւ կը պնդէ ու կ'երդնու թէ անորմէ զատ ուրիշ մէկու հետ չպիտի կարգուի :

ՔՕՎԻԵԼ. — Եթի չինաստանցի ազնուականը աեսնէ՝ կարծիքն իսկոյն պիտի փոխէ . առկէ զատ զարմանալի բան մը կայ . չինաստանցի այս ազնուականը մեծ նմանութիւն ունի այդ Քլէօնդին՝ զոր հիմայ զիպուածով ինձ ցոյց տուին . Զեր աղջկան սէրը կրնայ դիւրաւ Քլէօնդէն չինացի իշխանին անցնիլ . ի՞նչ կը տեսնեմ . ահա կուզայ իշխանը :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՔԼԻՇՆԴ՝ Զինացիկ հագուստով . Եթեք ՄԱՆԿԱ ԱԼԻԿԻՆԵՐ՝ ՔԼԻՇՆԴի պատմուածանը բանագ են . ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. ՔՕՎԻԵԼ. Բլեստիդի պատմուածանը բանագ են . ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. ՔՕՎԻԵԼ.

ՔԼԻՇՆԴ. — Սմալուսաթին օքի պօրամֆ . Ճօրտինա մասալէքի . ՔՕՎԻԵԼ. — (Պ. Ժուրտինի) Ըսել կ'ուզէ . « պարո՞ն ժուր-

տէն , սիրտ ծաղկաւց վարդենիի մը պէս ըլլայ բուրութին , իր երկրին քաղաքավարական ձեւերն են ասոնք :

ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. — Սմենախունարհ ծառայ եմ նորին չինական բարձրապատուութիւն :

ՔՕՎԻԵԼ. — Քարիկար քամպօդո ուսմին մօրամֆ :

ՔԼԻՇՆԴ. — Ուսմին եօջ քադամալէքի պազում պաշ ալամօրսն :

ՔՕՎԻԵԼ. — « Աստուած քեզ առիւծի ոյժ եւ օձի խոհեմու-

թիւն չնորհէ » կ'ըսէ :

ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. — Նորին չինական բարձրապատուութիւնը մեծ պատիւ կ'ընէ ինձի , եւ ես կը մաղթեմ իրեն ամէն կերպ բարօրութիւն :

ՔՕՎԻԵԼ. — Բոսա պինասէն սատօք պապալի օրաքափ ուրամ :

ՔԼԻՇՆԴ. — Պել - մէն :

ՔՕՎԻԵԼ. — կ'ըսէ թէ շուար իրեն հետ երթաք արարողութիւն պատրաստուելու , որպէս զի անկէ հոտք ձեր աղջկան հետ ամուսնութիւնը կատարէ :

ՊԱՐՈՂՆ ԺՈՒԻՐՏԵԿՆ. — Այդքան բան երկո՞ւ բառով միայն :

ՔՕՎԻԵԼ. — Այո՛ , չիներէն այդպէս է . քիչ խօսքով շատ

բան կը բացատրէ . Շուտով դոցէք իրեն հետ՝ ուր ու տանի :

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՔՕՎԻԵԼ.

ՔՕՎԻԵԼ. — (առանձին) Ա՛հ , ա՛հ , ա՛հ . Աստուած վկայ . Հո՞ս պիտի բան : Ի՞նչ զիւրախար միամիտ մարդ է սա շո՞տ զուարձաւի բան : Իր գերը բերնուց սիրտած իսկ ըլլար պարո՞ն ժուրտէնը : Իր գերը բերնուց սիրտած իսկ ըլլար այսքան լաւ . չպիտի ներկայացնէր : Ա՛հ , ա՛հ :

ՉԻՆԱՑԻՔ. — Ո'չ :

ՔՐՄԱՊԵՏ. — Հուսեա՞ն մը : Մորավեա՞ն մը :

ՉԻՆԱՑԻՔ. — Ո'չ, ո'չ :

ՔՐՄԱՊԵՏ. — Պրահմայակա՞ն մը :

ՉԻՆԱՑԻՔ. — Ո'չ :

ՔՐՄԱՊԵՏ. — Պուտոտայակա՞ն մը ուրեմն :

ՉԻՆԱՑԻՔ. — Այո՛, այո՛, պուտոտայական մը :

ՔՐՄԱՊԵՏ. — Եւ ի՞նչպէս կը կոչուի . ի՞նչ է անունը :

ՉԻՆԱՑԻՔ. — Ճիռլտինա, Ճիռլտինա :

ՔՐՄԱՊԵՏ. — (ցատկեղով) Ճիռլտինա, Ճիռլտինա :

ՔՐՄԱՊԵՏ. —

Ճիռլտինայի համար՝ Չիներ՝,

Կ'ըլլան ինձի աղաշանքներ .

Այդ Ճիռլտինան կ'ուզեմ ես հոս

Ընել մէկ մեծ պայատինոս .

Տալ սաղաւարտ՝ նոյնպէս եւ թուր՝

Որ ցուցնէ իր ոյժի հուր .

Ճիռլտինայի համար . Չիներ,

Կ'ըլլան ինձի աղաշանքներ :

(Չինացիներուն :)

Ըսէք նայիմ մեր ճիռլտինան

Պիտ' ըլլայ լաւ պուտոտայական :

ՉԻՆԱՑԻՔ. —

Այո՛, այո՛, պիտ' ըլլայ լաւ պուտոտայական :

ՔՐՄԱՊԵՏ. — (երգեղով ու պարեղով) Հա լա պա, պա լա
շու, պա լա պա, պա լա տա :

ՉԻՆԱՑԻՔ. — Հա լա պա, պա լա շու, պա լա պա, պա լա
տա :

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

Երգող պարող Չինացիներ

Երկրորդ ՊԱՐԱԽԱՂ

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ

ՔՐՄԱՊԵՏ. ՔՈՒՐՄԵՐ, ՊԱՐՈՆ ՃՈՒՐՏԵԼՆ, պարող ու երգող
Չինացիներ

(Քրմապետ եւ կը բառուական հեղացով՝ ու առաս-
պայական կերպին ենուր՝ յարու հինգ վարդ շարժ ուղղուած է .
Էրեւ կ'ընկերուած երկու ուսումնական խանիուրը) (Պատուայական անուննեան
ու բանական անուններու հասաւոյն) բաւած . Քւանին ուղարկու ենու-
րով՝ վար ճրացներով զարդարուած :

Միւս երկու ուսումնական գործելով՝ շահուական կու-
տան յեւածը քենաւած, այսպէս ու իր կուտանիք՝ ուրու վրայ խանիուրը
ուղարկուած է, իբր քրակալ կը ծառայէ քրապուելուն : Այս երկուր ծառա-
յակ ուժուած ըլ կ'ընկ յանեւը պարուելով՝ սուն սուն խանիուրին վրայ
դարելուն, և ուսումնական անու թերի երը նղնաւելով՝ որդ եւր զարդելուն
երկին բարձրացնելով Հու : Իս ժուկ բարձրացնուած :

Այս երկուր ուժուած միջուկն ընթերական յիշացներու դուին է դու
խանիուրով ու կանքներով՝ նշուղեն կ'երեւան :)

Հու, հու, հու :

ՊԱՐՈՆ ՃՈՒՐՏԵԼՆ. — (Խանիուրը կոնկին վրայիկ վեր-
ցուելի եսֆ .) Եօ՛ֆ :

ՔՐՄԱՊԵՏԸ. (Պ. Ճուրտելնի .)

Դուն չե՞ս նենգող,

ՉԻՆԱՑԻՔ. —

Ո'չ, ո'չ, ո'չ :

ՔՐՄԱՊԵՏԸ. —

Պարծուկ կամ գող .

ՉԻՆԱՑԻՔ. —

Ո'չ, ո'չ, ո'չ :

ՔՐՄԱՊԵՏԸ. — (Չինացիներուն .)

Այս սաղաւարտը կը թող .

ՉԻՆԱՑԻՔ. —

Դուն չե՞ս նենգող,

Ոչ, ոչ, ոչ .

Պարծուկ կամ գող,

Ո'չ, ո'չ, ո'չ.

Սաղաւարտին ըլլաս կրող:

ԵՐՐՈՐԴ ՊԱՐԱԽԱՂ

(Պարու Զինայի + Նուաքարաւաներու յայնով Մանուրինի Քեշարը Պ.
Ժառարբենի Քըսենը և դնեն:)

ԲՐՄԱՊԵՏՀ. — (Թուրք Պ. Ժուրժինի տաղով.)

Դուն չես գուեթիկ, դուն ազնիւ ես,
Թուր կուտամ քեզ:

ԶԻՆԱՑԻՔ. — (Թուրք ձեռից տաղով.)

Դուն չես գուեթիկ, դուն ազնիւ ես,
Թուր կուտամ քեզ:

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՐԱԽԱՂ

(Պարու Զինայի + Նուաքարու Սէ-է Բուրի հարաւան
Պ. Ժառարբենի:)

ԲՐՄԱՊԵՏՀ. —

Տուէ՛ջ անոր
Հարուածջ գամի նուագաւոր:

ԶԻՆԱՑԻՔ. —

Տուէ՛ջ անոր
Հարուածջ գամի նուագաւոր:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՐԱԽԱՂ

(Պարու Զինայի + Նուաքարու Հարժուանի հարաւան
Լուսուն Պ. Ժառարբենի:)

ԲՐՄԱՊԵՏՀ. —

Մի՛ ամշնար, փայտի հարուած
Ա՛ւ վերջինն է անարգանաց:

ԶԻՆԱՑԻՔ. —

Մի՛ ամշնար, փայտի հարուած
Ա՛ւ վերջինն է անարգանաց:

(Բրաղաւուն երրորդ ուժուն է ակու Բարբերն ըլեւուն դուկն
Հարժուան է բաւեն զն, որք եղաւ պարաւ առ երբու զիւցիւ՝ ուշապետ
առ շարջը շարժուանելու անոր հետ է հետանան՝ Պ. Ժառարբենը Քարեղ
առնելով:)

ԱՐԱՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՊԱՐՈՆ ՃՈՒՐՑԻՆ, ՏԻԿԻՆ ՃՈՒՐՑԻՆ,

ՏԻԿԻՆ ՃՈՒՐՑԻՆ. — Տէ՛ր ողորմիա, Աստուած համնի
մեղի, ի՞նչ է այս, ի՞նչ կը տեսնեմ, ի՞նչ կերպարանք,
ի՞նչ վրայ գլուխ է այս, բարեկենդասն կը կարծես, երկի:
ի՞նչ է այս, ո՞վ այդպէս հաղուեցուց զքեղ,
ՊԱՐՈՆ ՃՈՒՐՑԻՆ. — Տէ՛ս անդամ մը սա լիրը կինը՝ ո՞վ
մամամուշի մ'այս կերպ կը խօսի:

ՏԻԿԻՆ ՃՈՒՐՑԻՆ. — ի՞նչ խօսք է այդ, ի՞նչ կ'ըսես:

Երիկ: ՊԱՐՈՆ ՃՈՒՐՑԻՆ. — Սյո՛, զիս պատուել մեծարել պէտք

Եր. Իս հիմա մամամուշի եղայ:

ՏԻԿԻՆ ՃՈՒՐՑԻՆ. — Մամամուշի ըսելով ի՞նչ ըսել կ'ու-

զնու: ՊԱՐՈՆ ՃՈՒՐՑԻՆ. — Մամամուշի եղայ, կ'ըսեմ, մամա:

մուշի. կը հակնա՞ս:

ՏԻԿԻՆ ՃՈՒՐՑԻՆ. — ի՞նչ անձոռնի խօսք է այդ, ի՞նչ

ըսել է մամամուշի:

ՊԱՐՈՆ ՃՈՒՐՑԻՆ. — Մամամուշի մեր լեզուով կը նշա-

նակէ պալատին, պալատինս:

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — Այդ ի՞նչ խոսք է, պալատին,
պալատինոս :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Տգէ՛տ խեղճ կին, պալատին, պա-
լատինոս բարձր աստիճան մ'է որու քիչ մը յառաջ արարո-
դութիւնը կատարուեցաւ:

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — Ի՞նչ արարողութիւն :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ճուրտինայի համար, չինե՛ր:

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — Ի՞նչ ըսել է այդ անձունի խոսքը :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ճուրտինա, այսինքն ժուրտէն ըսել
կ'ուղէ:

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — Է՛հ, աղէկ, հասկցանք, ժուրտէն.
Ի՞նչ եղեր է ժուրտէնը :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Այդ ճուրտինան կ'ուզեմ ես հոս-
ւնել մէկ մեծ պալատինոս :

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — Ի՞նչ խոսք է աղ :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Տալ սաղաւարտ նոյնպէս եւ թուր:

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — Ի՞նչ ըսել է այդ խոսքը :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Որ ցուցնէ իր ոյժի հուր :

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — Է՛հ, ի՞նչ ըսել կ'ուղես :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Տուէք անօր՝ հարուածը գանի նուա-
գաւոր:

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — Այդ աղաւաղ խոսքերուն իմաստն
ի՞նչ է :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Մի՛ ամէնար. փայտի հարուած՝ ա՛լ
վերջինն է անարդանաց :

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — Այլ վերջապէս ի՞նչ կը հշանակին
այս ամէն բաները :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — (պարելով ու երգելով.) Հու լս պա,
պա լս շու, պա լս պա, պա լս տա: (Գետին կ'ինայի)

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — Ձք՛ւն ու կարկուտ. երիկս կատա-
րելապէս փախուցեր է :

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — (ոսք եղելով ու հեռանալով.) Լոէ՛,
ափեղցին կին, եւ յարգանոք վարուէ՛, մեծալատիւ մեծա-
շուշ մամանուշին հետ:

Տիկին ԺՈՒՐՏԵԼՆ. — (առանձին.) Ի՞նչ բանով արդեօք
իր խելքն այսպէս կորոնցուց: Ետեւէն վաղեմ, չթողում
որ գուրս ելլէն (Տօրինեն ու Տօրանիղը տեսնելով.) Վայ՛,
վայ՛, ասոնք պակաս էին. ո՛ր կողմ դասնամ՝ փորձանք կը
տեսնեմ:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՏՕՐԱՆԴ, ՏՕՐԻՄԵՆ,

ՏՕՐԱՆԴ. — Այո՛, տիկին, ասանկ զուարձալի բան ոչ կայ
եւ ոչ կրնայ ըլլալ. չեմ կարծեր որ բոլոր աշխարհի մէջ այս
աստիճան յիմտր մէկը դանուի: Ասկէ զատ, տիկին, պէտք է
օգնել Քլէօնդի սիրահարութեան, եւ դիմակաւորներուն ոյժ
տալ: Խիստ չնորհքով համակրելի երիտասարդ մ'է Քլէօնդ:

ՏՕՐԻՄԵՆ. — Իրօք, լաւ բազգի արժանի մէկն է, ու ես ալ
մեծապէս կը յարդեմ զինք:

ՏՕՐԱՆԴ. — Ասկէ զատ, տիկին, պարանցիկ մ'ունինք որ
մեր բանին կուզայ, պէտք չէ այս առիթը փախցնել. տեսնենք
խորհուրդս պիտի կրնա՞յ յաջողիւ:

ՏՕՐԻՄԵՆ. — Այո՛, չքեզ հանգերձանքներ տեսայ, Տօրանդ:
եւ ա՛լ այս բանիս չեմ կրնար աչք զոցել: Կ'ուզեմ արգիլել
այդ բոլոր մախումները, եւ ինձ համար ձեր ըրած մեծամեծ
ծախքերը գաղրեցնելու համար որոշեցի ձեղ հետ շուտով
պատկը կատարել: Գաղտնիքն ա'յս է. այս ամէն բաներս ա-
մուսնութեամբ կը լմնան:

ՏՕՐԱՆԴ. — Իրա՞ւ, տիկին, այսպիսի ուրախալի որոշում
մ'ըրա՞ծ էք:

ՏՕՐԻՄԵՆ. — Այո՛, որպէս զի ձեր հարստութիւնը չփա-
ցնեք, զի կը տեսնեմ որ եթէ ամուսնութիւնը չկատարուի:
շատ չանցած մօխրի վրայ պիտի նստիք:

ՏՕՐԱՆԴ. — Ո՛րքան չնորհապարտ պէտք է ըլլամ ձեզ
տիկին, որ այսչափ հոգածութիւն կը յայտնէք իմ ընչից
պահպանութեան Արդէն սրախս հետ՝ բոլոր ունեցածս շունե-
ցածս ալ ձերն է, տիկին, եւ ձեր ուզած ձեւով պիտի գործա-
ծէք զայն:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ, ՏՕՐԻՄԵՆ, ՏՕՐԱՆԴ

ՏՕՐԱՆԴ. — Տիկինն ու ես տիար ժուրտէն, կուզանք
ձեր ստացած նոր աստիճանին առթիւ մեր անկեղծ չնորհաւո-

բութիւններն ընկել եւ ձեզ հետ խնդակից ըլլալ որ ձեր աղջիկը չինաստանի աղնուականին հետ կը կարգէք:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (չինական ձեւով խոճարհուրիւններ ընկել ես.) Տիար Տօրանդ իմ բարեկամս, կը մաղթեմ ձեզ օձի ոյժ եւ առիւծի խմասութիւն:

ՏՕՐԻՄԵՆ. — Խիստ ուրախ եմ, ախար ժուրտէն, որ ձեր ստացած փառաւոր աստիճանին առթիւ առաջին անդամ շնորհաւորողներէ մէկը կ'ըլլամ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Տիկին, կը մաղթեմ որ ձեր վարդենին տարին բոլոր ծաղկալից ըլլայ. Յանհունու շնորհապարտ իմ ձեղ որ ինձ եղած պատիւներուն այս աստիճան ուրախ կ'ըլլաք: Ես ալ խիստ ուրախ եմ որ բարեհաճեցաք նորէն մեր տունը հրամմել, որով պիտի կարենամ կնոջս այլանդակ վարմունքին համար խոնարհարաք ձեր ներողութիւնը ինդրել:

ՏՕՐԻՄԵՆ. — Սյդ բան մը չէ. Ես կը ներեմ իր անվայել ընթացքին, ձեր սէրը պէտք է իրեն համար թանկալին եղած ըլլայ, զարմանալի չէ որ ձեզ նման մարզու. մը տիբացումը երբեմն իրեն սիրաք գող հանէ.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Սրախ սէր՝ գուշք եղած էք, աղնուաշուք տիկին:

ՏՕՐԱՆԴ. — Կը տեսնէք, տիկին, որ պարոն ժուրտէն պէտքութիւններէ շլացող մարդ չէ, եւ իր մեծութեանը մէջ աւ իր բարեկամները կը ճանչնայ միշտ:

ՏՕՐԻՄԵՆ. — Մեծանձն հոգիի մը նշան է այդ:

ՏՕՐԱՆԴ. — Եւ ո՞ւր է նորին չինական բարձրապատուութիւնը. իբր ձեղ բարեկամներ՝ կը փափաքինք մեր յարգանքները մատուցանել իրեն:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Ահա կուզայ, մարդ դրկեցի որ աղջիկս երթան բերեն որպէս զի նորին չինական բարձրապատուութեան հետ կարգեմ զինք:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ, ՏՕՐԻՄԵՆ, ՏՕՐԱՆԴ, ՔԼԻՇԻ¹
չինական հազուստով, ՔՅՈՒՀԵԼ, Ժպտած

ՏՕՐԱՆԴ. — (Քլիօնի) Տէր իմ, իբր ձեր աներոջ բարեկամներ՝ կուզանք մեր խորին յարգանքն ու մեծա-

րանիքը մատուցանել ձեր գերամհծար բարձրապատուութեան:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Ո՞ւր է թարգմանը որ ձեր ո՞վ ըլլալ հասկցնէ ու միանգաման ձեր ըսամները բացատրէ նորին բարձրապատուութեան: Տեսնէք թէ ձեր պատասխանը պիտի տայ, զի չիներէնը քաջ գիտէ: Ծօ՛, ո՞ւր է, ո՞ր ծակը մտեր է այդ թարգմանը: (Քլիօնի) Սդրութ, սդրիթ, սդրօթ, սդրաթ: Պարոնը մեծ աղայ մ'է, մեծ չէլէպի մ'է, մեծ վինեօր մ'է, Պարոնը մեծ անուն մը, մեծ հանուն մը, մեծ մատար իսկ տիկինը՝ մեծ խաթուն մը, մեծ հանուն մը, մեծ մատար իսկ տիկինը որ իր միտը չկրնար հասկցնել:) Այս ի՞նչ մը: (Տեսնելով որ իր միտը չկրնար հասկցնել:) Պարոնը՝ գժուար բան է: (Քլիօնի) Տօրանդը ցուցնելով:) Պարոնը՝ պատար բան է: Պարոնին աղամամուշին տիկինն ալ՝ նոյնպէս ֆրանսացի մաքրանուշին աղամամուշին աղամամուշին աղամուշի: Ասկէ աւելի հասկանալի կերպով չէ կարելի խօսիլ: Հա՛, ահա թարգմանը եկաւ:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ, ՏՕՐԻՄԵՆ, ՏՕՐԱՆԴ ՔԼԻՇԻ¹ չինական
հազուստով, ՔՅՈՒՀԵԼ, Ժպտած

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Ո՞ւր գացիք աներեւոյթ եղաք: Ա-
ռանց ձեզի բառ մը իսկ չենք կրնար խօսիլ: (Քլիօնի ցուց-
նելով:) Հասկցուցէք նորին բարձրապատուութեան որ այս
պարոնն ու տիկինն աղնուազարմ անձինք են՝ որք իբր ինձ
պարեկամներ կուզան իրենց յարգանքն ու մեծարանքը նուի-
բարեկամներ պիտի հասկցնէ իսկոյն:

ՔՅՈՒՀԵԼ. — Ալապալա քրօսիամ աքսի պօրամ ալապա-
մէն:

ՔԼԻՇԻ. — Քաղալեցի դիւպալ ուրին սօդեր ամալու-
շան:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — (Տօրիմենի և Տօրանդի) Կը տես-
նէք:

ՔՅՈՒՀԵԼ. — Կըսէ թէ բարեկամտութեան անձիւով ձեր
ընտանեաց բութաստանը ուռոգուի միշտ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԾԵՆ. — Զըսի² թէ չիներէն կը խօսի:

ՏՕՐԻՄԵՆ. — Սքանչելի՛ է այս:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԼԻՒՄԻԼ, ՔԼԵՇՆԻ, ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ, ՏՈՐԻՄԵՆ,
ՏՈՐԱՆԻ, ՔՈՎԻԵԼ,

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — ԵԿՈ՛ՎՐ աղջիկս, մօտեցի՛ր եւ տո՛ւք
ձեռքդ պարոնին՝ որ զքեզ կնութեան ուղելու պատիւք
կ'ընէ:

ԼԻՒՄԻԼ. — Ի՞նչ է այդ, հայրիկ, ի՞նչպիսի մարդ էք զուք.
ի՞նչ, կատակերգութիւն կը խաղաք:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ո՛չ, ո՛չ. կատակերգութիւն չէ՛,
ընդհակառակն խիստ լուրջ դործ մ'է քեզի համար, երեւա-
կայութենէդ անցածէն աւելի պատուաւոր ու փառաւոր գործ
մը: (Քիոնդը ցուցնելով.) Ահա՝ այս ամուսինը կուտամ-
քեզ:

ԼԻՒՄԻԼ. — Ինձի՞ հայրիկ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Այո՛, քեզի: Հապա՛, ձեռքդ երկն-
ցո՛ւք իրեն, եւ փառք տո՛ւք Աստուծոյ որ այսպիսի երջան-
կութեան մ'արժանի եղաք:

ԼԻՒՄԻԼ. — Ես կարգուիլ չեմ ուզեր, հայրիկ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ես հայրդ եմ, եւ կ'ուզեմ որ կար-
դուիս:

ԼԻՒՄԻԼ. — Ո՛չ, չեմ կարգուիր:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ինձ նայէ՛, երկայն խօսք պէտք չէ՛.
տո՛ւք ձեռքդ, կ'ըսեմ:

ԼԻՒՄԻԼ. — Ո՛չ, հայրիկ. քեզ ըսած եմ թէ որ եւ է իշխա-
նութիւն չկրնար ստիպել զիս Քլէօնդէն ուրիշ ամուսին մը
առնելու, եւ աւելի աղէկ ունիմ ամէն տեսակ վիշտ ու նե-
ղութիւն քան թէ . . . : (Քիոնդը ճանալով.) Այլ սակայն
կը մտածեմ թէ հայր էք, եւ ես կատարեալ հնազանդութիւն
կը պարախմ ձեզի. ինչպէս կ'ուզէք՝ այնպէս անօրինե-
ցէք:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ուրախ եմ որ պարտականութիւնդ
ճանչցար չուտով. ես կ'ուզեմ որ աղջիկս ինձ հնազանդ
ըլլայ:

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԼՆ, ՔԼԵՇՆԻ, ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ, ԼԻՒՄԻԼ,
ՏՈՐԱՆԻ, ՏՈՐԻՄԵՆ, ՔՈՎԻԵԼ

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ի՞նչ կը տեսնեմ, ի՞նչ է այս.
Կ'ըսեն թէ աղջիկդ զիմակաւորի՞ մը տալ կ'ուզես եղեր:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Զայնդ քաշէ՛ ժպիրն կի՞ն. ամէն
բանի մէջ այլանդակութիւնդ կը ցուցնես, խելքդ զլուխդ
գալիք չունի:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Այդ քու խելքդ է որ ամենեւին
գլուխդ չպիտի գայ, եւ արդէն երթալով ալ կը պակսի:
Միտքդ ի՞նչ է. ի՞նչ է այս բազմութիւնը որ հոս ժողվուեր է:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Կ'ուզեմ մեր աղջիկը չինացի ազ-
նուականի մը հետ ամուսնացնել:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ի՞նչ, չինացի ազնուականի հետ
պիտի ամուսնացնի աղջիկդ:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — (Քովիելը ցուցնելով.) Այո՛: Ահա՝
թարգմանը. անոր միջոցաւ մեծարանքներդ յայտնէ՛ իրենց:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ես թարգմանի պէտք չունիմ. Աս-
ինքս երեսին պիտի ըսեմ թէ աղջիկս իրեն համար չէ՛:

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Զայնդ պիտի քաշե՞ս թէ ո՛չ:

ՏՈՐԱՆԻ. — Ի՞նչպէս, տիկին ժուրտէն, ասանկ մեծ պատ-
ուօյ մը գէ՞մ կը գնէք, կը մերժէ՞ք նորին չինական բարձրա-
պատուութիւնը ձեզ փեսայ ունենալ:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Դուք ձեր գործին խառնուեցէ՞ք,
պարո՞ն:

ՏՈՐԻՄԵՆ. — Այսպիսի մեծ պատիւ մը մերժել խելք չէ:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Զեզ ալ կ'աղաչեմ, տիկին, որ ձեզ
չվերաբերող գործի չխառնուիք:

ՏՈՐԱՆԻ. — Մենք մեծ համակրութիւն ունինք ձեր վրայ,
եւ ձեր օգուտը միայն կ ուզենք:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Ես ձեր համակրութիւնը չեմ ուզեր:

ՏՈՐԱՆԻ. — Ահա ձեր աղջիկը կը հաւանի հօրը յայտնու
կամքին:

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵԼՆ. — Աղջիկս կը հաւանի՞ չինացի մ՛առ-

ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵՔՆ. — Լա՛ւ գաղափար : Օ՞ն , մեր տեղերը
բռնե՞նք :

ՏԻԿԻՆ ԺՈՒՐՏԵՔՆ. — Հապա նիքօ՞լը :


ՊԱՐՈՆ ԺՈՒՐՏԵՔՆ. — Զան ալ թարգմանին կուտամ , իսկ
կինս՝ ով որ ուզէ՝ անոր :

ՔՕՎԻԿԻԼ. — Շնորհակալ եմ . պարոն : (Մեկուսի.) Մարդ
չկոչեն զիս՝ եթէ սա պարոն ժուրտէնէ աւելի խենթ մէկը կը
գտնուի աշխարհի վրայ :

(Կույսի երգ կոմիտաս պատրուճութեան ու կույսի աշխարհի վրայ)

ՍՔԱԲԵՆԻ ՆԵՆԳՈՒԹԻՒՆԵՐԸ

(LES FOURBERIES DE SCAPIN)



ԿԱՏԱԿԵՐԳ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՎԾ



ԱՆՁԻՆՔ

— 3000 —

ԱՐԿԱՆԴ	Հայր Օքդավի և Զերպինեկի:
ԺԵԲՈՆԴ	Հայր Լեանտրի և Հիասինեի:
ՕԲՐԱՎ	Որդի Արկանդի՝ Հիասինեի սիրահար:
ԼԵԱՆԴՐ	Որդի Ժերօնդի՝ Զերպինեկի սիրահար:
ԶԵՐՊԻՆԵԿ	Գնչուհի կարծուած Արկանդի աղջիկ ձանցուած, և սիրուհի Լեանդրի:
ՀԻԱՍԻՆԴ	Ժերօնդի աղջիկ՝ Օքդավի սիրուհի:
ՄՔԱԲԷՆ	Սպասառոր Լեանտրի, խարերայ մեկը:
ԿԻՐԱԿՈՍ	Սպասառոր Օքդավի:
ՆԵՏԻՆ	Շժմայր Հիասինեի:
ՔԱՐԼ	Խարերայ:
ԵՐԿՈՒ ԲԵՌՆԱԿԻՐՆԵՐ	

ՏԵՍԱՐԱՆՆ Ե Ի ՆՈՅՈԼԻ



ԱՐԱՐՔ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՕԲԴԱՎ, ԿԻՐԱԿՈՍ

ՕԲԴԱՎ. — Սիրահարի մը համար ի՞նչ գէշ լուր, այս ի՞նչ
ամենագժուար զիբքի մէջ կ'ինամ: Ուրեմն Միլիթագը նաւա-
հանդիսաէն լուր առիր թէ հայրս կը վերադառնա:

ԿԻՐԱԿՈՍ. — Այո՛:

ՕԲԴԱՎ. — Թէ այս առաւօտ կը համնի:

ԿԻՐԱԿՈՍ. — Այո՛, այս առաւօտ:

ՕԲԴԱՎ. — Եւ թէ զիս կարգելու մաքով կուզայ:

ԿԻՐԱԿՈՍ. — Այո՛:

ՕԲԴԱՎ. — Տիար ժերօնդի մէկ աղջկան հետ:

ԿԻՐԱԿՈՍ. — Այո՛, ամար ժերօնդի մէկ աղջկան հետ:

ՕԲԴԱՎ. — Եւ թէ աղջիկը այս քանի համար մշալանթէ:

Հո՞ս կանչուած է:

ԿԻՐԱԿՈՍ. — Այո՛:

ՕԲԴԱՎ. — Այո՛, լուրերը հօքեղքօրմէս իմացար:

ԿԻՐԱԿՈՍ. — Այո՛, ձեր հօքեղքօրմէս:

ՕԲԴԱՎ. — Հա՞յրս համակով այս տեղեկութիւնները տուած

է հօրեղքօրմէ:

ԿՈՐԱԿԱՆ. — Այո՛, ձեր հայրը՝ հոգակով:

ՕԲԴԱՎ. — Եւ կ'ըսես թէ հօրեղբայրս բոլոր մեր քաջութը
դիմում:

ԿԻՐԱԿՈՒՄ. — Այո՛, բոլոր մեր քաջութը զիտէ:

ՕԲԴԱՎ. — Է՛ն, խօսէ՛ ամէն բան, բառերն աքանո՞վ
պէտք է հանել բերնէդ:

ԿԻՐԱԿՈՒՄ. — Ատկէ աւելին ի՞նչ կրնամ խօսիլ: Դուք ոչ
մի պարագայ կը մոռնաք, եւ գործերն ճիշտ եղածին պէս կը
խօսիք:

ՕԲԴԱՎ. — Գոնէ խորհուրդ մը տուր ինձի, կիրակոս,
ըսէ՛ թէ ի՞նչ ընել պէտք եմ այս իմ ամենադժնդակ դիրքիս
մէջ:

ԿԻՐԱԿՈՒՄ. — Ի՞նչ ըսեմ, ես ալ ձեղ նման շփոթեր մնացեր
եմ, ես ինքս խորհուրդ տուղի մը պէտք ունիմ:

ՕԲԴԱՎ. — Հօրս այս անիծեալ վերադարձը մէջքս կոտրեց:

ԿԻՐԱԿՈՒՄ. — Իմ ալ մէջքս կոտրեց:

ՕԲԴԱՎ. — Ուժգին սաստերու ի՞նչ յանկարծահաս փոթո-
րիկ մը պիտի գոռայ գլխուս երբ հայրս բանն իմանայ: ի՞նչո՞ր
ԿԻՐԱԿՈՒՄ. — Սասար բան մը չէ, ո՞ւր էր թէ ես ալ
սաստեր լսելով աղասէի, բայց կարծեմ թէ ձեր խենթու-
թիւններն աւելի սուղի պիտի նստին ինձի, հեռուէն ծեծ ու
փայտի ամպ մը ձեւացած կը տեսնեմ՝ որ գանկիս վրայ պիտի
պայթի սաստկօրէն:

ՕԲԴԱՎ. — Տէ՛ր Աստուած, ո՞ր ճամբով գուրս ելլեմ գըտ-
նուած տագնապալի վիճակէս:

ԿԻՐԱԿՈՒՄ. — Այդ բանը տագնապալի վիճակի մը մէջ ինք-
զինքդ նետելէ յառաջ պէտք էիք մտածել:

ՕԲԴԱՎ. — Քու տարաժամ խրատներով զիս կը մեռցնես,
կիրակոս:

ԿԻՐԱԿՈՒՄ. — Դուք ձեր խենթումնթ գործերով զիս շատ
աւելի կը մեռցնէք, տէր իմ:

ՕԲԴԱՎ. — Ի՞նչ ընեմ հիմայ, ի՞նչ ճամբայ բռնեմ, ի՞նչ
միջոցի դիմեմ:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՕԲԴԱՎ, ՍՔԱԲԵՆ, ԿԻՐԱԿՈՒՄ

ՍՔԱԲԵՆ. — Ի՞նչ է այդ, տիար Օքդավ, ի՞նչ ունիք, ի՞նչ
կայ, մեծ վրդովի մեծ շփոթութեան մէջ կը տեսնեմ:

ՕԲԴԱՎ. — Ա՛խ, կորսուած եմ, սիրելիդ իմ Սքարէն,
ամենայուսահատ վիճակի մը մէջ կը զտնուիմ, մարդիկներու
ամենէդժմաղդն եմ ես:

ՍՔԱԲԵՆ. — Ի՞նչպէս, ի՞նչ կայ:

ՕԲԴԱՎ. — Ինձ մերաբերութեամբ բան մը չլսեցի՞ր:

ՍՔԱԲԵՆ. — Ո՛չ:

ՕԲԴԱՎ. — Հայրս քաղաքս կը հասնի տիար Ժերօնդի հետ՝
զիս ամուսնացնելու խորհուրդով:

ՍՔԱԲԵՆ. — Է՛ն, այդ բանին մէջ ի՞նչ կայ այդքան
գէշ:

ՕԲԴԱՎ. — Բարէ, չեն զիտեր, Սքարէն, հանուքիս պատ-
ճառը:

ՍՔԱԲԵՆ. — Զէ, չեմ գիտեր, այլ ձեր ձեռքն է որ շուտով
իմանամ զայն. միմիթարիչ մ'եմ ես, երիտասարդներու զոր-
ծերուն շահազրգուուղ մէկը:

ՕԲԴԱՎ. — Ա՛խ, Սքարէն, եթէ կարենայիր միջոցը գտնել,
հնարք մը մտածել գտնուած տագնապէս զիս ազատելու հա-
մար՝ կեանքս եւ անկէ աւելին իսկ պարտաւոր պիտի մնամ
քեզ:

ՍՔԱԲԵՆ. — Զեզի խօսք մ'ըսե՞մ, տիար Օքդավ. երբ բանի
մը մէջ խառնուիմ՝ քիչ գործք կայ որ ձեռքէս փալսի. ես
ի վերուստ յատուկ հանճար մ'ստացած եմ վարպիտ եւ բարե-
պատուղ հնարքներ երեւակայելու, որոնց ուսմիկը նենգութիւն
անունը կուտայ, եւ առանց մնափառութեան կրնամ ըսել
թէ չէ տեսնուած ինձ նման ճարտար. եւ սատանորդի մէկը՝
որ այս ազնիւ արուեստի մէջ աւելի փառք ու դափնիներ
շահած ըլլայ: Բայց հաւատացէք, արժանիքի պատիւ չկայ
այսօր. զործի մը պատճառաւ այնքան մեծ սրտնեղութիւն
մ'ունեցայ՝ որ ալ ամէն բանէ ձեռք քաշեցի:

ՕԲԴԱՎ. — Ի՞նչպէս, ի՞նչ գործք էր այդ, Սքարէն:

ՍՔԱԲԵՆ. — Պատահար մ'ուր արդարութեան հետ աւրուե-
ցայ:

ՕԲԴԱՎ. — Սըդարութեան հետ:

ՍՔԱԲԵՆ. — Այո՛, սկզբի կոիւ մ'ունեցանք միատեղ:

ԿԻՐԱԿՈՒՄ. — Դուն եւ արդարութիւնը:

ՍՔԱԲԵՆ. — Այո՛, եւ ինձ դէմ խիստ անարժան ընթ
մ'ունեցաւ եւ որմէ այնքան նեղացաւ սիրու՝
ասկէ եաք բան մը չընել: Սակայն պատմի
ձեր գործը:

ՕԲԴԱՎ. — Դիտես, Սքաբէն, թէ երկու ամիս յառաջ հայրս ու տիար ժերօնդ առևտրական գործի մը համար՝ որումէջ շահակից էին, մրատեղ նաւ նստան:

ՍՔԱԲԷՆ. — Գիտեմ զայդ:

ՕԲԴԱՎ. — Եւ թէ Լէանար ու ես մեր հայրերէն հոս թողուեցանք, ես՝ կիրակոսի առաջնորդութեան տակ, իսկ լէանար՝ գու:

ՍՔԱԲԷՆ. — Այո՛, եւ պաշտօնս խնասա լաւ կատարեցիր:

ՕԲԴԱՎ. — Ժամանակ մը վերջը լէանար նորահնամակ գընչութ մը հանդիպելով՝ սիրահարեցաւ անոր:

ՍՔԱԲԷՆ. — Զայդ աւ զիտեմ:

ՕԲԴԱՎ. — Բայց ուրամ իրարու մեծ բարեկամներ ենք իսկոյն սէրը պատմեց ինձի, ու միանգամայն զիս առաւ տարաւ այդ աղջիկը տեսնելու: Իրաւ զեղեցիկ զայ զան, բայց ոչ այն աստիճան՝ որքան կ'ուզէր որ գտնէի: Ամէն օր այդ աղջկան վրաւ կը խօսէր միայն, անոս զեղեցկութիւնն ու վայելչութիւնը կը գովէր ու կը գովէր՝ միանգամայն անոր խելքը կը գրուատէր՝ խօսակցութեանցը հրատոյրը երկինք հանելով, որոնց ամենափոքը հատակուրներն անգամ կը պատմէր ինձի, աշխատելով որ հաւաքանոնք իրին ամենամացի զրոյցները երենին կը կոռւրտէր ինձ հետ թէ ինչու անոր ըսած բաներուն յարզը չէի ճանչնար, և միանգամայն կը մեղադէր զիս անգամը որ սիրոյ մասին անտարբերութիւն կը յայտնէի:

ՍՔԱԲԷՆ. — Չեմ հասկնար տակաւին թէ այս խօսքերուն ծարը ուր պիտի յանդի:

ՕԲԴԱՎ. — Օր մը որ իրեն հետ մրատեղ սիրուհոյն պահապահութիւնն ընող մարդոց տունը կ'երթայի՛ մեկուսի փողոցի մը պիտի տան մը մէջէն հեծկուտանոն ոզրուկուներ լուցինք, պատճառը կը հարցնեմ, կին՝ մը հառաջանոք կ'ըսէ մեղ թէ լողալի քան մը պիտի տեսնեինք հոն՝ թէպէս անձերը մեզ օտար ըլլային եւ թէ պիտի զգածուէինք հարկաւ՝ եմէ անզգայ սիրո չէինք կրեր:

ՍՔԱԲԷՆ. — Ե՞ն, մեզ համար ի՞նչ քան կայ այդ ձեր պատճաներուն մէջ:

ՕԲԴԱՎ. — Հետաքրքրուած թախանձեցի լէանարէն որ տեսնենք: Արան մը մտնելով՝ մահամերձ պատճենը քովը սպասուէի, մը կար որ կ'ողբար աղջիկ մ'որ ողիկ ողիկ կուզար, ամենէ

հրաշագեղ եւ ամենէ զրաւիչ աղջիկը՝ որ տեսնուած է երբէք աշխարհի վրայ:

ՍՔԱԲԷՆ. — Ա՛հ, ա՞հ:

ՕԲԴԱՎ. — Ուրիշ մ'իր գտնուած վիճակին մէջ ամենատպեղ պիտի երեւէր, իր վրայ զանուած բոլոր հագուստը անշահ պզտի շրջազգեստ մ'էր՝ պարզ տիմիթօյէ շինուած կարառւկ քաթանակով մը, զեղին տանզղակ մը զրած էր՝ զիսուն վերեւը հանգրիծուած, որուն տակէն վարսերը ուսերուն վրայ կրթափէին խառնիխուուն, եւ սակայն՝ այս վիճակի մէջ գեղովու չնորհով կը փայլէր, իր բոլոր անձը հրաշոյր ու սիրանք էր միայն:

ՍՔԱԲԷՆ. — Կը հասկնամ թէ բանը ուր պիտի զայ:

ՕԲԴԱՎ. — Եթէ տեսնէիր զինք Սքաբէն, դուն ալ հիացած պիտի մնայիր:

ՍՔԱԲԷՆ. — Ո՞ն ատոր տարակոյս չկայ առանց տեսնելու իսկ կը հասկնամ թէ աղջիկ մ'էր սքանչելագեղ:

ՕԲԴԱՎ. — Իր թափած արցունքներն այն անախորժ արցունքներէն չէին որ մարդուս երեսը կը տգեղցնեն, արտասուած միջոցին գրաւիչ չնորհ մը կ'սունար, անպիսի սիրուն թափիծ մը կը յայտնէր՝ որու նմանը աշխարհի մրած չէ ափանուած:

ՍՔԱԲԷՆ. — Կը հասկնամ այդպէս ըլլալը:

ՕԲԴԱՎ. — «Մայրիկ, սիրելի մայրիկ», ըսելով օրհասական պառաւին մարմնոյն վրայ ինկած ժամանակ՝ ամենուն արտասուածքը կը շարժէր, ի տես այսքան բարի ծնողասիրութեանը մը բոլոր զանուողներուն սիրաը կտոր կտոր կ'ըլլալ:

ՍՔԱԲԷՆ. — Ստուգիս սրտաշարժ բան մ'է այդ ձեր պատճանը կը հասկնամ թէ այդ բարի ծնողասիրութիւնը մէր ազդած ըլլայ ձեր սրտին:

ՕԲԴԱՎ. — Ո՞ն Սքաբէն ապառած սիրտ մ'անգամ պիտի սիրէր զանի:

ՍՔԱԲԷՆ. — Անչուչտ, կարելի բա՞ն էր չսիրել:

ՕԲԴԱՎ. — Վշտարեկ սիրուն օրիորդին քանի մը միսիթաւարկան խօսքեր ուղղելէ ետք գուրս ելանք: Հարցուցի լէանեարի թէ ինչպէս զտած էր այդ աղջիկից նա ցուրտ կերպով մը պատօպախանեց թէ բաւական սիրուն էր, այդ զուրս կերպը նեղացուց վիզ եւ չուղեցի յայտնել: թէ օրիորդին զեղն ու չնորից սրտիս վրայ ի՞նչ աղջեցութիւն ըրած էին:

ԿիրԱԿՈՍ. — (Օվալին) Եթէ այդ պատմաթիւնը կարծ

չկապէք՝ մինչեւ վաղը առտու պիտի քշէ. թողուցէք որ երկու խօսքով լմնցնեմ զայն. (Միաբենի.) Այն վայրկենէն բուռն սիրով յափշտակուած՝ կ'ուզէք երթալ չարունակ միսի թարել իր վշտահար սիրուհին. Սպասուհին՝ մօր մահուամբ խնամակալ եղած աղջկան՝ կը մերժէ այդ յաճախակի այցելութիւնները. Տէրս յուսահատութեան մատնուած՝ կ'աղաչէ կը պաղատի, կը թախանձէ, այլ ի զուր. Միշտ սա պատասխանը կ'ընդունի թէ աղջիկը՝ թէպէտ անինչ եւ անսպաշտպան պարկեցտ ընտանիքի զաւակ է, եւ ամուսնութեան պայմանով միայն իր հետապնդութիւնք կ'ընդունուին. Խնդիրեն բանը կը քննէ, կը յառաջէ, կը դատէ, կը կշռէ եւ վերջապէս իր որոշումը կուտայ. ահա այս կերպով երեք օրէ հետէ պատկուած է այդ աղջկան հետ:

ԱՔԱԲԻՆ. — Կը հասկնամ կատարելապէս :

ԿիրԱԿՈՍ.— Հիմա զի՞ր ատոր հետ հօրը անակնկալ վերադարձ՝ որ ամիսէ մը կ'սպասուէք, զի՞ր նաեւ զինք տիար ժերօնիի աղջկան հետ կարգելու խորհուրդը՝ որ մէջտեղ կայ: Տիար ժերօնդ այդ զաւակը երկրորդ կնոջմէ մ'ունեցեր է՝ որու հետ թարանթի մէջ ամուսնացեր է եղեք:

ՕԲԴԱՎ. — Եւ ասոնց վրայ աւելցո՞ւր այդ սիրուն օրիորդին չքաւորութիւնը եւ իրեն նախատելու անկարող վիճակս :

Ս.ԲԱԲԵՆ. — Ա՞յս է եղեր ձեր նեղութիւնը, այսպիսի չնշին
ինդրոյ մը համար այդ ո՞րքան տափնապի մատնուած էք եր-
կուքըդ ալ, այդպէս իրար անցնելու ի՞նչ կայ: Զե՞ս ամշնար,
Կիրակոս, որ այսպիսի ոչինչ բանի մը համար շու արիս մնաս,
ամօթ չէ՞ այդ քու ահազին հասակիդ՝ որ բան մը չգտնես
գլխուդ մէջ, մտքիդ մէջ չզարբնես, չհնարես չնորհքով վար-
պետութիւն մը, ընտիր հնարք մը՝ ձեր գործը շտկելու հա-
մար: Մե՛զք քեղի, այդ ի՞նչ անխելք ես եղեր: Ո՞ւր էր որ
ասկէ առաջ այդ երկու ծերունիները ձեռքս տային զիրենք
խարել խաբիքելու համար անանկ խաղեր պիտի խաղայի՛ որ
իրենք ալ զարմաղած մնային. սանկ՝ պղտիկ էի տակաւին՝
եւ հազար տեսակ վարպետութիւններով ու խորամանկու-
թիւններով արդէն նշանաւոր եղած էի:

ԿԻՐԱԾԿՈՒՄ. — Ի՞նչ ընեմ, Աստուած քու ձիրքերդ ինձի չէ շնորհեր, ես քեզ նման ատեաններու հետ գմտելու տաղանդը հունիմ:

ՕՔԴԱՎ. — Ահա իմ սիրուն Հիասինդս :

ՏԵՍԱՐԱՆ Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՕԳԴԱՎԱԼ, ՄԹԱԲԻՆ, ԿԻՐԱԿՈՍ

ՕթղԱվ.— Այո՛, սիրուն Հիասինդ, եւ այս լուրերը դառն
հարուած մը տուին սրտիս։ Այլ ի՞նչ կը տեսնեմ, կուլա՞ս։
ի՞նչու այդ արցունքները, ըսէ՛, կը կասկածի՞ս վրաս թէ
քեզ անհաւատարիմ գտնուիմ, իմ սիրոյս վրայ վատահ չե՞ս
միթէ։

ՕքԴԱՎ. — Ե՞ն, քեզ սիրողը, Հիասինդ, կընայ բոլոր
կենացը մէջ չսիրել:

ՕՐԴԱՎ.—ԱՇ, սիրելիդ իմ Հիասխնչ՝ ըստ թէ ամ սիրտս ուրիշ մարդոց սրովին չնմանիր, ես իմ մասիս կ'զգամ թէ մինչեւ գերեզման պիտի սիրեմ զքեղ:

ՀիԱՍԻՆԴ. — Սիրելի է ինձ հաւատալ թէ ինչ որ կ'ըսեմ
քու սրտէդ է, եւ խօսքերուդ անկեղծութեան վրայ չեմ տա-
բակուսիր, այլ կը վախնամ ծնողական իշխանութենէ՝ որ
վրաս ունեցած զողոտրիկ զգացումներուդ պիտի հակառակի ի-
դուն հօր մ'ազդեցութեան տակ ես՝ որ զգեղ ուրիշ ազգկան-
մը հետ ամուսնացնել կ'ուզէ, եւ եթէ այս դժբաղդութիւնը
երօք պատահի՝ աներկբայ եմ որ սրտիս ցաւէն պիտի մեռնիմ:

ցունքներդ կը մեսցնեն զիս, քու լալդ տեմնելով սիրոս
կտոր կտօր կ'ըլլայ:

ՀիԱՍԻՆԴՐ. — Կը սրբեմ արցունքներս՝ քանի որ այդպէս
կ'ուզես, եւ անյօղգողի սրախ. կ'ապանեմ երկնից ընելիք
տնօրինութեան:

ՕՐԴԱՎ. — Սյուն երկինք նպաստամատոյց ոլիտի ըլլայ մեղ:

ՀիԱՍԻՒԴԻ - Անշուշտ՝ եթէ դուն հաւատարիմ մնաս
ՕՐԴԱՎ - Ո՞հ, հաւատարմութիւնս աներկրաց է

ՕՐԵԴՅՎ: (Միարեն ուղանեալով.) Աս մարդո՞ եթէ ուզէ

Ա Ր Ի Ւ Վ : (Ելաբույ ցուցանակով) Օ ա ս ա ր դ ը մ ը չ ա զ է կ ր ն ա յ ի ս ե լ ք է մ ա ք է զ ու ր ս ո գ ն ո ւ թ ի շ ն ս ե ր ը ն ե լ մ ե ր ա մ է ն ն ե ղ ո ւ թ ե ա ն ց մ է ջ :

ուրիշներու գործերուն չխառնուելու, այլ եթէ երկուքդ զիս
առաջէն թախանձէք՝ պուզէ

ՕՐԴԻՆԱԿ — Ո՞՛Վ, ԵԹԵ ՔՊՈ ՕԳՆՈՒԹԻՒՆԴ ՎԱՅԵԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ
աղաչելու թափանձելու վրայ է՝ զործը՝ համար կը սպազատիմ
քեզի բոլոր սրտով որ մեր գործին առաջնորդութիւնը ձեռք
առնեն և

ԱՐԱԲԻՆ - (Հիասինդի) եւ գուք օրիսրդ բան մը չէք
բակա.

ՀԱՅԱՍՏԻՆԴ. - Ես այլ Օքտավի հետ կը պաղամտիմ յանուն
քեզ սիրելի եղած ամէն բաներուն որ մեր սիրոյն թանկագին
օճնու թիւնու տուանաս:

ՍՔԱՐԲԻՆ. - Պէտք է մարդասիրաբար տեղի տալ ձեր աղածանառ անհոգ երիք, իս ձեւի ակտի օննեմ:

Ophrys — οφρυς, οφρυνται, οφρυνται, οφρυνται.

ԱԳՈԲԻՆ. — (Միղավոր) ԷՌ ԵՎԻ (Հրապանական) ՄԵՐՄՈՒ ՊԱՅ
ԿԱՆԴԱՐՄԱ ԱՐՏՈՎ ՃԵՐ ԹԱՅԻԹԻ ԿԱՅԵՔ)

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՕՐԴԻՎ, ԸՔԱԲԵՐ, ԿԵՐԱԿՈՍ

ՍՔԱՅԻՆ. - (Օֆավի.) Եւ գուք պատրաստուեցէք անյողառութեա անմշակի ձեր հօր դիմաց ելլիկուս.

ՕթքԱՎզ - Խնչ-ըսեմ, հօրս դիմաց ելիշիքքն մասնձելով հիմակութնէ կը զողամ, բնական վեհերոտութիւն մ'ունիմ որու չեմ. կազող յաղթել

ՍԲԱԲէՆ. — Սակայն պէտք է որ առաջին բախումին ան-
յողդող երեւիք, եթէ ոչ՝ տկարութիւն տեսնելով զձեզ
տղու մը պէս դարձնելու առիթ պիսի՞ առնու: Հա՛, տեսնեմ:
աշխատեցէք ձեր գէմքն յերիւրելու, համարձակ ձեւ մ' առէք
եւ նայեցէ՛ք որ ամէն ըսածներուն աներկիւղ պատասխաններ
տաք:

ՕՔԴԱՎ. - Ամէն ջանք պիտի ընկեր համարձակ երեւա-

ՍԲԱԲԵՆ. — Հապա, տեսնեմ, զձեղ վարժելու համար փորձ մը ըսե՞նք: Զեր կատարելիք գերը փորձենք, նայինք պիտի յաշալի՞ք: Օ՞ս, ձեր զէմքը ցուցէ՞ք անվիճելո՞ւ ձեր գլուխը՝ բարձր ու նայուածքն աներկիւդ:

ՕԲԴԱՎ. - Այսպէ՞ս :

ԱՐԱԲԵԼ. - Քիչ մը

ՕԲԴԱՎ. — ԱՅԽԱԳԻՆ :

ՍՔԱԲԻՆ. — Լաւ է Ենթաղբեցէք թէ ես ձեր հայրն եմ ու
կը համսիմ, համարձակ պատասխանեցէք ինձ՝ որպէս թէ
բուն իսկ ձեր հօր պատասխանէիք: Ի՞նչ՝ անպիտա՞ն, գարշե-
լի՛, ստահա՛կ, ինձ նման հօր մ անարժա՞ն, զաւակ, այնքան
անառակութիւններէ եաք: Իմ հոս չեղած մքջոցիս խաղացած
վատ խաղէդ ետք՝ կը համարձակի՞ս դիմացս ելլելու: Իր
տարած այնքան եւ այնքան խնամոց պատուին այդ է, անպի-
տան, այդ յարգանքը կը ցուցնես ինձ: (Օ՞ն անզի) Դուք
անառակ, առանց քու հօրդ հաւանութեան գացեր խօսք - կապ-
ըրեք: Գաղանի՛ ամուսնութիւնն մ' ես կնքեր: Պատասխան
տուր, զարշելի՛, պատասխան տուր: Նայինք քու փուճու-
մուն պատճառներգ . . . : Տէր ողորմեա՛, այդ ի՞նչ է, չփօթա-
կը մնա՞ք այդպէս: Օ՞ՐԴԱՎ. — Կ' ենթաղբեմ թէ բուն իսկ հայրս է որ կը
խօսի:

ՍԲԱԾԵՆ. — Ե՞ս, ձեր հայրն ըլլալուն պատճառա՛ւ այդ աէս աէտք չէ որ յուռ մնաք միամիտի մը նման

ՕՐԴԻՆԱԿ. Ուրեմն աւելի արիութիւն պիտի առնում են անվեհեր պիտի պատասխանեմ:

ՍՔԱԲԵՆ. — Պիտի ընէ՞ք այդ բանը

ՕԲԴԱՎ - Պիտի ընկ'մ :

Begin

ԿԻՐԱԿՈՍ. — Զեր հայրը, ձեր հայրը կը տեսնեմ որ կուզայ:

ՕՐԴԱԿ. — Տէ՛ր Աստուած, բանս լմնցաւ, հոս չեմ կենար:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՄՔԱՐԵՆ, ԿԻՐԱԿՈՍ

ՄՔԱՐԵՆ. — Ինձ նայեցէք, Օքդավ, կեցի՞ք, մի՛ երթաք:
Կծկը դրաւ փախաւ: Այս ինչ վախկոտ խեղճ մէկն է եղեր,
մենք սպասենք ծերունւոյն:

ԿԻՐԱԿՈՍ. — Ես ի՞նչ պիտի ըսեմ:

ՄՔԱՐԵՆ. — Խօսիլն ինձ թո՛ղ, ինձ հետ եկո՛ւր միայն:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՐԿԱՆԻ, ՄՔԱՐԵՆ, ԿԻՐԱԿՈՍ՝ տէսարանին խորը

ԱՐԿԱՆԻ. — (ինֆղինֆ առանձին կարծեղով.) Ո՞ւր լսուեր
է այսպիսի սրիկայ ընթացք:

ՄՔԱՐԵՆ. — (Կիրակոսի.) Գործն իմացեր է արդէն, եւ
ա՛յնքան բարկացած է՝ որ այդ նիւթին վրայ ինքնիրեն կը
խօսի բարձրածայն:

ԱՐԿԱՆԻ. — (ինֆղինֆ առանձին կարծեղով.) Այս ի՞նչ
յանդգնութիւն, ի՞նչ լրութիւն:

ՄՔԱՐԵՆ. — (Կիրակոսի.) Մտիկ ընենք, նայինք ի՞նչ կը
խօսի:

ԱՐԿԱՆԻ. — (ինֆղինֆ առանձին կարծեղով.) Տեսնե՛մ,
ի՞նչ պիտի ըսէ կնքած սա խենթ ամուսնութեանը վրայ:

ՄՔԱՐԵՆ. — (մեկուսի.) Ի՞նչ ըսեւիքը մենք մտածած ենք
արդէն:

ԱՐԿԱՆԻ. — (ինֆղինֆ առանձին կարծեղով.) Ի՞նչ, կը
կարծեն թէ սուտաւմուտ խօսքերով պ՛տի խարխրե՞ն զիս:

ՄՔԱՐԵՆ. — (մեկուսի.) Գուցէ:

ԱՐԿԱՆԻ. — (ինֆղինֆ առանձին կարծեղով.) Իրենց բոլոր
խօսքերը օդը պիտի ցնդին:

ՄՔԱՐԵՆ. — (մեկուսի.) Տեսնենք:

ԱՐԿԱՆԻ. — (ինֆղինֆ առանձին կարծեղով.) Ոչ, չպիտի
խարեն զիս:

ՄՔԱՐԵՆ. — (մեկուսի.) Այդ յայտնի չէ:

ԱՐԿԱՆԻ. — (ինֆղինֆ առանձին կարծեղով.) Իմ անառակ
զաւակս տեղ մը փակեմ որ եւ է վախ չունենալու հա-
մար:

ՄՔԱՐԵՆ. — (մեկուսի.) Ատոր ճարը կը նայինք:

ԱՐԿԱՆԻ. — (ինֆղինֆ առանձին կարծեղով.) Եւ այդ ոչ-
ու փուշ կիրակոսն ալ ծեծի տակ պիտի սատկեցնեմ:

ԿԻՐԱԿՈՍ. — (Սարքենի.) Զարմանք պիտի ըլլար՝ եթէ
մոռնար զիս:

ԱՐԿԱՆԻ. — (Կիրակոսը նշմարեղով.) Վա՛յ, հո՞ս ես ե-
ղեր, ընտանիաց իմաստո՛ւն դաստիարակ, երիտասարդներու
առարինի՛ առաջնորդ:

ՄՔԱՐԵՆ. — Պարոն Արկանդ, խիստ ուրախ ևմ զձեղ վերա-
դարձած տեսնելով:

ԱՐԿԱՆԻ. — Բարե՛ւ, Մքարէն, (Կիրակոսին.) Շիտա՛կը,
խիստ լաւ հետեւեր ես տուած պատուէրներու, եւ զաւակս
խիստ իմաստուն ընթացք ունեցեր է բացակայութեանս մի-
ջոցին:

ՄՔԱՐԵՆ. — Զեր առողջութիւնը լա՞ւ է, պարոն Արկանդ,
ինչպէս կը առանեմ:

ԱՐԿԱՆԻ. — Բաւական լաւ: (Կիրակոսին.) Բան չես խօ-
սիր, անպիտա՛ն, ըսածներու չես պատասխաներ:

ՄՔԱՐԵՆ. — Զեր ճամբորգութիւնը հանդի՛ստ էր, պարոն
Արկանդ:

ԱՐԿԱՆԻ. — Է՛հ, հանգիստ էր, ի՞նչ կ'ըլլայ: Թո՛ղ որ
հանգիստ կոփս ընեմ:

ՄՔԱՐԵՆ. — Ի՞նչ, կոռի՞ւ կոռզէք, պարոն Արկանդ:

ԱՐԿԱՆԻ. — Այո՛, կոռի՞ւ կոռզէմ:

ՄՔԱՐԵՆ. — Եւ որո՞ւ հետ:

ԱՐԿԱՆԻ. — (Կիրակոսը ցուցնեղով.) Սա անպիտանին
հետ:

ՄՔԱՐԵՆ. — Եւ ի՞նչո՞ւ կոռուիք:

ԱՐԿԱՆԻ. — Իմ հոս չեղած ատենս եղածը չլսեցի՞ր:

ՄՔԱՐԵՆ. — Այո՛ սանկ պղտի ըան մը լսեցի:

ՄՔԱՐԵՆ. — Ի՞նչպէս սանկ պղտի ըան, այսպիսի՛ ընթացք
մը,

ՍՔԱԲԻՆ. — Զեր որդին այդ բանը չպիտի ընդունի:
Ա.ԲԿԱՆԴ. — Չպիտի ընդունի:

ՍՔԱԲԻՆ. — Ո՞չ:

Ա.ԲԿԱՆԴ. — Որդին չպիտի ընդունի:

ՍՔԱԲԻՆ. — Այո՛, ձեր որդին, ի՞նչ, կուղէք խոստովանի թէ ինք վախցո՞ղ մէկն է եւ թէ բոնի՞ ամուսնացուցեր են զինք: Զայդ չպիտի խոստովանի բնաւ, քանդի անպատճութիւն մ'է իրեն, եւ այդ ընթացքով ձեղ նման հօր մ'անարժան զաւակ եղած պիտի ըլլայ: / Հ այ այդ խոսքութէ Ա.ԲԿԱՆԴ. — Քանիի՞ կառնում այդ խօսքերը:

ՍՔԱԲԻՆ. — Թէ՛ ձեր եւ թէ իր պատռոյն համար պէտք է ամէնուն ըսէ թէ իր յօժար կամօք կարգուած է այդ աղջկան հետ:

Ա.ԲԿԱՆԴ. — Ես ալ թէ՛ իմ եւ թէ իր պատռոյն համար կ'ուղեմ որ հակառակն ըսէ:

ՍՔԱԲԻՆ. — Ո՞չ: վսահ եմ թէ այդ բանը չպիտի ընէ:

Ա.ԲԿԱՆԴ. — Ես պիտի բռնադատե՛մ որ ընէ:

ՍՔԱԲԻՆ. — Չպիտի՞ ընէ, կ'ըսեմ:

Ա.ԲԿԱՆԴ. — Պիտի ընէ՛, ապա թէ ոչ զինք ժառանգութենէ կը զրկեմ:

ՍՔԱԲԻՆ. — Դո՞ւք:

Ա.ԲԿԱՆԴ. — Այո՛, ես:

ՍՔԱԲԻՆ. — Աղէկ ա՛:

Ա.ԲԿԱՆԴ. — Ի՞նչ աղէկ ա՛:

ՍՔԱԲԻՆ. — Դուք զինք ժառանգութենէ չէք զրկեր:

Ա.ԲԿԱՆԴ. — Չպիտի զրկեր:

ՍՔԱԲԻՆ. — Ո չ:

Ա.ԲԿԱՆԴ. — Ո չ:

ՍՔԱԲԻՆ. — Ո՞չ:

Ա.ԲԿԱՆԴ. — Իրաւ որ, զուարձալի խօսք: Ես զաւակս ժառանգութենէ չեմ զրկեր կ'ըսեմ:

ՍՔԱԲԻՆ. — Ո՞չ, չէք զրկեր:

Ա.ԲԿԱՆԴ. — Ո՞վ պիտի արգիլէ վիս:

ՍՔԱԲԻՆ. — Դուք զծեզ պիտի արգիլէք:

Ա.ԲԿԱՆԴ. — Ե՞ս:

ՍՔԱԲԻՆ. — Այո՛, Զեր սիրաը չպիտի ներէ ձեզ այդ բանն ընել:

Ա.ԲԿԱՆԴ. — Շա՛տ աղէկ պիտի ներէ:

ՍՔԱԲԻՆ. — Լըօթէն չէք խօսիր:

Ա.ԲԿԱՆԴ. — Խի՛ստ լրջօթէն կը խօսիմ: ՍՔԱԲԻՆ. — Հայրական զորով իր դերը ուիսի կա-
տարէ:

Ա.ԲԿԱՆԴ. — Բա՛ն մ'ալ չպիտի կատարէ:

ՍՔԱԲԻՆ. — Պիտի կատարէ՛: Ա.ԲԿԱՆԴ. — Ես, կ'ըսեմ որ ժառանգութենէ սիւտի զրկեմ
Ա.ԲԿԱՆԴ. — Ես կ'ըսեմ:

ՍՔԱԲԻՆ. — Պարա՛պ խօսք:

Ա.ԲԿԱՆԴ. — Պարապ խօսք մի՛ բակը, Սքարէն: ՅԱՀ
ՍՔԱԲԻՆ. — Ալոօ՛ պիտի հանչնով գնել թէ բարի մարդ

Քք: ԱՀ
Ա.ԲԿԱՆԴ. — Ես բարի մարդ չեմ, ընդհակառակն ուղած
ժամանակս, չար մարդ եմ. Այլ վերջացնենք, այս խօսքերս
բարկութիւնս կը շարժեն: (Կիրակոսին.) Գնա՛, անպիտան,
գնա՛ անառակ զաւակս գտի՛ր հոս բեր, ես ալ երթամ տիար
գնա՛ անառակ զաւակս գտի՛ր հոս բեր, այս ձիւնը պատմեմ:

Ժէրօնդի գլուխս եկած այս ձիւնը պատմեմ: Ա.ԲԿԱՆԴ. — Եթէ բանի մը կրնամ օգտակար ըլլաւ, տիար
ՍՔԱԲԻՆ. — Եթէ բանի մը ծառայելու:

Ա.ԲԿԱՆԴ. — Շնորհակալ եմ: (Մեկուսին.) Ա.'իս, ինչո՞ւ մէկ
հատիկ զաւակս ըլլար, եւ աղջիկս չաղլէր՝ որ զինք միակ
ժառանգս ընէի:

ՏԵՍԱՐԱՆ Է:

ՎՔԱԲԻՆ, ԿԻՐԱԿՈՒ

ԿԻՐԱԿՈՒ. — Իրաւ որ մեծ մարդ ես, Սքարէն, գործը ար-
դին լաւ ճամփու մէջ է քու նորհիւ, բայց միւս կողմէ սափ-
պական պէտք ունինք ստկի, ամէն կողմէ ետևնէս ինչեր՝
զմեզ կը ներեն:

ՍՔԱԲԻՆ. — Բանն ինծի թո՛ղ, ճամբան գտած եմ արդէն,
մոքիս մէջ հաւատարեմ մէկը կը վնասեմ միայն՝ կարեւոր
գեր մը կատարելու համար, միտքս բան մը եկաւ: Կեցի՛ր
նայիմ մէջ մը: Խիզախ մէկու մը պէս վար իջեցուր զգակդ:
Մէկ սաքի վրայ կայնե՛: Զեռքդ կուշտիդ զի՛ր: Կատաղի
նայուածք մ'ա՛ռ, Բայէ՛ անդամ մը՝ որպէս թէ բեմին վրայ
մեծ մարդ մ'եղած ըլլայիր: Լաւ: Հետս եկուր, երեսդ ու
ձայնդ ծպտելու միջոցները պիտեմ ես:

ԿԻՐԱԿՈՂՈ. — Սա բանը կ'աղաչեմ քեզ, Աքարէն, որ
չելես տտեաններու հետ զործ բանաս գլուխս:

ՍՔԱԲԻՆ. — Հոգ մի՛ ընկր, Կիրակոս, երկուքս իբր եղբայր
վտանգներէ մեր բաժինը պիտի ունենանք, երեք տարի աւելի
կամ պակաս թիապարտութիւն չկրնար վեհողի սիրտ մը կա-
սեցնել:

end of 1st act



ԱՐԱՐՔ ԵՐԿՐՈՂԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԺԵՐՈՆԻ, ԱՐԿԱՆԻ

ԺԵՐՈՆԻ. — Այս՝ անշուշտ, այս օդով մեր մարդիկները
այսօր կը հասնին, թարէնթէ եկած նաւաշ մը ինձ հաստա-
տեց թէ իմ մարդու նաւ մտնելու վրայ տեսեր էր: բայց
աղջկան հասած ժամանակը՝ գործերը մեր խորհրդին նկատ-
մամբ աննպաստ վիճակի մը մէջ դանուած պիտի ըլլան, *այսինքն*
տեղեկութիւնները՝ զոր ձեր որդւոյն վրայ տուիք: մեր որո-
շումները կը խանդարեն բոլորովին:

ԱՐԿԱՆԻ. — Դուք հոգ մի՛ ընէք, ախար ժերօնի, ևս հի-
մակուլնէ պէտք եղածները պիտի ընեմ ամէն արդեւք վերցնե-

լու համար:

ԺԵՐՈՆԻ. — Բան մը ըստ՞մ, ախար Արկանդ, պէտք է մեծ
ջանք՝ մեծ փոյթ ունենանք զաւակներու դաստիարակութեան
համար:

ԱՐԿԱՆԻ. — Անշուշտ այդպէս է, այլ ի՞նչ բանի համար
այդ խօսքը կը զբուցէք:

ԺԵՐՈՆԻ. — Այս բանին համար որ երիտասարդներու ան-

կարգ բարուց պատճառ՝ *առէպէտի իրենց ընդունած յոսի դաստի-*

արակութիւնն է:

ԱՐԿԱՆԻ. — Այս՝ այդպէս կ'ըլլայ երբեմն, այէ ի՞նչ ըստէ
կ'ուզէք:

ԺԵՐՕՆԴ. — Ի՞նչ ըսել կուզեմ:

ԱՐԿԱՆԴ. — Այո՛:

ԺԵՐՕՆԴ. — Էսել կ'ուզեմ որ եթէ իրը իմաստուն հայր լաւ կրթութիւն մը տուած ըլլայիք ձեր զաւկին՝ այս ձիւնը ձեր գլուխը չէր բերեր:

ԱՐԿԱՆԴ. — Իիսու լաւ: Դուք ուրեմն ընտիր կրթութիւն մը տուած կ'ըլլաք ձեր զաւկին:

ԺԵՐՈՆԴ. — Անշուշտ, եւ խիստ դժուարս պիտի զար եթէ ասոր մօտ բան մ' ընէլ ելլիք:

ԱՐԿԱՆԴ. — Եւ եթէ այդ զաւակը՝ զոր իրը իմաստուն հայր լաւ կրթած էք եղեր, իմինէս աւելի զէշ բան մ' ըրած ըլլար, ի՞նչ կ'ըսէք անոր:

ԺԵՐՕՆԴ. — Ի՞նչ խօսք է այդ:

ԱՐԿԱՆԴ. — Ինչ խօսք է այս:

ԺԵՐՈՆԴ. — Այո՛, ի՞նչ ըսել կ'ուզէք:

ԱՐԿԱՆԴ. — Սա ըսել կ'ուզեմ, տիար ժերօնդ, որ պէտք չէ արնքան շուա ուրիշներու ընթացքը դասավարտել, եւ թէ բան խօսիլ ուղղողները պէտք է լաւ մը նային իրենց շուրջ թէ գէշ բան մը կա՞յ թէ չկայ:

ԺԵՐՕՆԴ. — Այդ հանելուկէն բան չեմ հասկնալ:

ԱՐԿԱՆԴ. — Այդ հանելուկը ձեզի բացատրողներ պիտի գտնուին:

ԺԵՐՕՆԴ. — Ի՞նչ, արդեօք բա՞ն մը լսած էք որդոյս վրայօք:

ԱՐԿԱՆԴ. — Կարելի է:

ԺԵՐՕՆԴ. — Ի՞նչ լսեցիք, խնդրեմ:

ԱՐԿԱՆԴ. — Զեր Սքարէնը բարկութեանս միջոցին՝ գործ հակիրճ կերպով մը խօսեցաւ, պարագաները իրմէն կամ ուրիշէ մը կրնաք իմանալ, ես կերթամ փաստաբանի մը խորհուրդ հարցնելու, թէ ի՞նչ միջոցներ պէտք է ձեռք առնում: Յտեսութիւն, տիար ժերօնդ:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԺԵՐՈՆԴ

ԺԵՐՕՆԴ. — (առանձին.) Ի՞նչ ուան է արդեօք, իրենէն աւելի գէշ գործ մը ի՞նչպէս կ'ըլլայ, ինձ այնպէս կ'երեւի

թէ առանց հօր հրամանին կարգուիլը ամէնէ յուի ընթացքն է որ կրնայ երեւակայուիլ:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԺԵՐՈՆԴ, ԼԵԱՆՏԻ

ԺԵՐՕՆԴ. — Հա՛, եկա՞:

ԼԵԱՆՏԻ. — (Կերպու ժերօնդ վազելով՝ զան գրկելու համար.) Ո՞հ, հայր իմ, քանի՛ ուրախ եմ զնիլ վերադարձած ակնելով:

ԺԵՐՕՆԴ. — (յուգելով գրկել Լեանտը) Մի՛ աճապարեր, քիչ մը գործի վրայօք խօսինք:

ԼԵԱՆՏԻ. — Թողէք, հայր, որ գրկեմ զձեզ, եւ . . . :

ԺԵՐՕՆԴ. — (դարձեալ մերժելով) Մի՛ աճապարեր, կ'ըսեմ:

ԼԵԱՆՏԻ. — Ի՞նչ, հայր, կը մերժէ՞ք, չէ՞ք հաւանիր որ գրկախանութեամբ սրախ ուշախութիւնը յայտնեմ:

ԺԵՐՕՆԴ. — Այո՛, լուսաբանուելիք բան մը կայ մեր միջեւ:

ԼԵԱՆՏԻ. — Ի՞նչ բան, հայր:

ԺԵՐՕՆԴ. — Շիտակ կեցի՞ր, որ դէմ առ դէմ տեսնեմ զքեղ:

ԼԵԱՆՏԻ. — Ի՞նչ կայ:

ԺԵՐՕՆԴ. — Աչքիս մէջ նայէ՛:

ԼԵԱՆՏԻ. — Բայց ի՞նչ կայ, հայր:

ԺԵՐՕՆԴ. — Ի՞նչ անցք անցեր է հոս:

ԼԵԱՆՏԻ. — Ի՞նչ անցք անցեր է, կը հարցունէ՞ք:

ԺԵՐՕՆԴ. — Այո՛, ի՞նչ ըրիբ հոս չեղած միջոցիս:

ԼԵԱՆՏԻ. — Ի՞նչ կ'ուզէք, հայր, որ ըրած ըլլամ:

ԺԵՐՕՆԴ. — Ձէ թէ կ'ուզեմ որ ըրած ըլլաս, այլ կը հարցնեմ թէ ի՞նչ ըրիբ:

ԼԵԱՆՏԻ. — Ե՞ս գանգատի առիթ տալիք բա՞ն մը չըրի:

ԺԵՐՕՆԴ. — Ամենեւին բան մը չըրի՞ր:

ԼԵԱՆՏԻ. — Ո՞չ:

ԺԵՐՕՆԴ. — Կը կենա՞ս այդ խօսքիդ վրայ:

ԼԵԱՆՏԻ. — Ես անմեղութեանս վրայ վստա՞ն եմ:

ԺԵՐՕՆԴ. — Սակայն Սքարէն քու բաներդ իմացուց ինձ:

ԼէԱՆՏՐ. — Աքաբէն :

ԺԵՐԾՈՒԴԻ. — Ա՛հ, ահ, այս անունը լսելով երեսներդ կարմրցան :

ԼէԱՆՏՐ. — Իմ վրայօքս բա՞ն մ՞րսու Աքաբէն :

ԺԵՐԾՈՒԴԻ. — Սյս զործս կարգադրելու տեղը չէ հոս, այլուր երթանք հարկ եղած քննութիւնն ընելու : Տուն զնա՞ հիմայ, ես ալ կուգամ ընդ հուպ: Ա՛յ, անզգամ զաւակ, եթէ անուանս անպատութիւն բերես՝ զքեզ զաւակութենէ կը հանեմ եւ միտքդ գի՞ր որ յաւիտեան երեսս չես տեսներ:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԼէԱՆՏՐ

ԼէԱՆՏՐ. — (առանձին.) Այսպէս մատնէ՛ զիս Աքաբէն: Սյդ անզգամը որ հազար պատճառներով զազանիքներս պահել պէտք էր, ասածի՞նն ըլլայ, երթալ զանոնք հօրս յայտնելու: Ո՛հ, վկա՞յ երկինք, այս մատնութիւնս անպատիժ չպիտի մնայ:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՕԲԴԱԼ, ԼէԱՆՏՐ, ՄՔԱԲԵՆ

ՕԲԴԱԼ. — Քու խնամածութեանցդ քանի՛ պարտական եմ, սիրելի իմ Աքաբէն: Այդ ի՞նչ սրանչելի մարդ ես զուն, եւ քանի՛ շնորհակալ եմ Աստուծոյ որ զքեզ իմ օգնութեանս խրկեց:

ԼէԱՆՏՐ. — Ա՛հ, ա՛հ, հոսս ես, պարոն անդդամ, խիստ ուրախ եմ զքեզ զտնելուս:

ՄՔԱԲԵՆ. — Զեր ամենախոնարհ ծառան եմ, աէր իմ, չաշ փաղանց պատիւ մ'է այդ զոր կ'ընէք ինձ:

ԼէԱՆՏՐ. — (սուրը բաշելով.) Ինձ անշահ խաղեր խաղա ըպիտի սորվեցնեմ քեզ, անպիտան:

ՄՔԱԲԵՆ. — (ծունը դնելով.) Տէ՛ր իմ:

ՕԲԴԱԼ. — (երկուին սկաշելով.) Ի՞նչ է այդ, Լէանտր:

ՕԲԴԱԼ. — (երկուին սկաշելով.) Ի՞նչ է այդ, Լէանտր:

ԼէԱՆՏՐ. — Ո՛չ, Օքավկ, թո՞ղ զիս, կ'աղաչեմ:

ՄՔԱԲԵՆ. — (Լէանտրի.) Զեր ի՞նչ ըրի տէր իմ:

ՕԲԴԱԼ. — (Լէանտրը բռնելով.) Կ'աղաչեմ, Լէանտր:

ԼէԱՆՏՐ. — (ուղելով Աքաբէնը ծեծել.) Թո՞ղ որ վրէժս լուծեմ:

ՕԲԴԱԼ. — Յանուն մեր սիրոյն, Լէանտր, մի՛ զարներ:

ՄՔԱԲԵՆ. — Այլ ի՞նչ է յանցանքս, տէր իմ, ի՞նչ ըրի ձեզի:

ԼէԱՆՏՐ. — (ուղելով Աքաբէնը ծեծել.) Ի՞նչ ըրի, Կը հարցնես, անզգամ:

ՕԲԴԱԼ. — (Լէանտրը բռնելով.) Մի՛, մի՛ զարներ, Լէանտր:

ԼէԱՆՏՐ. — Ո՛չ, Օքավկ, կ'ուղեմ որ ինք անձամբ այս ժամուս խոստովանի իւր գործած նենգութիւնը: Այո՛, ապի-րատ ծառայ, զիտեմ ինձ ըրած չարութիւնդ, թերեւս չէիր կարծեր որ այս գաղտնիքն յայտնեն ինձ, այլ ես իմացայ, եւ կ'ուղեմ որ քու բերնովդ խոստովանիս, ապս թէ ոչ՝ հիմա սուրս փորդ կը խօթեմ:

ՄՔԱԲԵՆ. — Ո՛հ, տէր իմ, ձեռքդ յառաջ կ'երթա՞յ այդ բանն ընելու:

ԼէԱՆՏՐ. — Խօսէ՛ ուրիմն, չո՞ւտ:

ՄՔԱԲԵՆ. — Զեր բա՞ն մ'ըրեր եմ, տէր իմ:

ԼէԱՆՏՐ. — Այո՛ անպիտան, խիզճդ քեզ իմաց կուտայ թէ ի՞նչ ըրած ես ինձի:

ՄՔԱԲԵՆ. — Իրաւ որ, չեմ զիտեր քրածս:

ԼէԱՆՏՐ. — (Աքաբէնը ծեծելով) համար յառաջ անցնելով: Զե՞ս զիտեր, կը սիս:

ՕԲԴԱԼ. — (Լէանտրը բռնելով.) Լէանտր:

ՄՔԱԲԵՆ. — Է՛հ, տէր իմ, քանի, որ կ'ուղեք որ ըսկէ կը խոստովանիմ թէ քանի մ'օր յառաջ ձեզ նուէր զրկուած պակառ մը. սպանիքական զինին բարեկամներու հետ խմեցի, ես էի տակառին ճեզք մը բացողը եւ չուրից ջուր թափողը: որպէս զի կարծուի թէ զինին զուրս վազեր էր:

ԼէԱՆՏՐ. — Դո՞ւն ես, անզգամ, իմ սպանիկ զինիս խմողը եւ սպասուհոյն հետ կոռւելուս պատճառ եղողը, կարծելով թէ ա՛ն էր այս խաղը խաղացողը:

ՄՔԱԲԵՆ. — Այո՛ պարոն, թողութիւն կը խնդրեմ ծեզմէ:

ԼէԱՆՏՐ. — Աղեկ որ հասկցայ այդ բանը, այլ ատոր հա-

մար չէ:

ՍՔԱՐԵՆԻ.— Ասոր համար չէ՞, տէր իմ :

ԼԵԱՆՏՐ.— Ոչ, ուրիշ գործի մը համար է որ ինձ համար շատ աւելի կարեւորութիւն ունի, եւ կ'ուղեմ որ խօստովանիս:

ՍՔԱՐԵՆԻ.— Ուրիշ բան ըրած ըլլալս չեմ յիշեր: աէր իմ:

ԼԵԱՆՏՐ.— (ուզելով Սյարենը ծեծել) Զալիսի՞ խօսմիս:

ՍՔԱՐԵՆԻ.— Ի՞նչ խօսմի:

ՕԲԴԱՎ.— (բռնելով Լեանտրը) Հանդարտէ, Լէանտր:

ՍՔԱՐԵՆԻ.— Այո՛, պարոն, սաոյդ է որ ասկէ երկու-երեք շաբաթ յառաջ պղտի ժամացոյց մը տուիք ինձ, որ զիշերայն տանիմ ձեր սիրուհոյն: Տղմաթաթաւ հագուստներով եւ արինլուայ երեսով առւն դարձայ եւ ըսի թէ զողերու հանդիպեր էի՞ որք զիս լաւ մը ծեծելէ ետք՝ ժամացոյցն ալ յափշտակեր էին: Ժամացոյցին գողը ես էի, տէր իմ, ես պահեցի զայն:

ԼԵԱՆՏՐ.— Դո՞ւն գողցար, դո՞ւն պահեցիր ժամացոյցս:

ՍՔԱՐԵՆԻ.— Այո՛, տէր իմ, ժամս զիշենալու համար:

ԼԵԱՆՏՐ.— Ո՞հ, ո՞հ, այս ի՞նչ գեղեցիկ բաներ է որ կը լսեմ, այս ի՞նչ հաւատարիմ ծառայ ունիմ եղեք, այլ հարցուցածս այդ ալ չէ:

ՍՔԱՐԵՆԻ.— Ա՞յդ ալ չէ:

ԼԵԱՆՏՐ.— Ո՞չ, սրիկայ, ուրիշ բան մը կ'ուղեմ որ խօսովանիս:

ՍՔԱՐԵՆԻ.— (մեկուսի) Այս ի՞նչ փորձանք էր եկաւ գլուխս:

ԼԵԱՆՏՐ.— Իսոէ՛, շո՛ւտ, կորսնցնելու ժամանակ չունիմ:

ՍՔԱՐԵՆԻ.— Բոլոր ըրածներս ձեզ ըսի, տէր իմ, ուրիշ բան չեմ ըրած:

ԼԵԱՆՏՐ.— (ուզելով Սյարենը ծեծել) Ուրիշ բան չեմ ըրած:

ՕԲԴԱՎ.— (Լեանտրի առջին անցնելով) Է՛յ, է՛յ, Լէանտր:

ՍՔԱՐԵՆԻ.— Է՞՞հ, այս ալ զրուցեմ քանի որ կ'ուղեք: Ասկէ վեց ամիս մը յառաջ կը յիշէ՞ք այն մարդադայլը (լուից շրջու) որ զիշերով լաւ ծեծ մը քաշեց ձեզի, եւ փախած ժա-

մահակնիդ գետնափոր շտեմարանի մը մէջ իյնալով՝ քիչ միաց որ գլուխնիդ պիտի պատռէիք:

ԼԵԱՆՏՐ.— Է՛հ, ի՞նչ ըսել կ'ուղես:

ՍՔԱՐԵՆԻ.— Մարդագայլն ե՛ս էի, տէր իմ:

ԼԵԱՆՏՐ.— Դո՞ւն էիր կ'ըսիս, անպիտան թշուառական:

ՍՔԱՐԵՆԻ.— Այո՛, տէր իմ, միտքս զձեղ վախցնել էր որպէս զի զիշերները զմեղ վաղվատել չտաք, ինչպէս սովոր էիք բնել:

ԼԵԱՆՏՐ.— Տեղւոյն եւ ժամանակին պիտի յիշեմ այս բոլոր քաջագործութիւններդ, այլ զոբջին զանք, խոստովանէ՛ նայիմ ի՞նչ ըսեր հօրս:

ՍՔԱՐԵՆԻ.— Ձեր հօ՞ը:

ԼԵԱՆՏՐ.— Այո՛, անդգամ, ի՞նչ ըսիր անոր:

ՍՔԱՐԵՆԻ.— Ես ձեր հօր վերադառնալէ հետէ երեսն իսկ

տեսած չեմ:

ԼԵԱՆՏՐ.— Երեսը տեսած չե՞ս:

ՍՔԱՐԵՆԻ.— Ո՛չ, տէր իմ:

ԼԵԱՆՏՐ.— Վստա՞հ ես:

ՍՔԱՐԵՆԻ.— Եիստ վստահ: Այսպէս ըլլալն իր բերնով իսկ ձեզ ըսել պիտի տամ:

ԼԵԱՆՏՐ.— Ես ալ բուն իսկ իր բերնէն լսեցի բաներ:

ՍՔԱՐԵՆԻ.— Ներեցէ՞ք ինձ, տէր իմ, ձեր հայրը ճշմարիտ

չէ իսոսած:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԼԵԱՆՏՐ, ՕԲԴԱՎ, ՔԱՐԼ, ՍՔԱՐԵՆԻ

ՔԱՐԼ.— Ձեր սիրոյն աննպաստ լուր մը կը բերեմ

ձեզ:

ԼԵԱՆՏՐ.— Ի՞նչ կայ:

ՔԱՐԼ.— Ձեր զնչունելն Զերպինէդը ձեր ձեռքէն փախ-
ցնելու կէտին մէջ են, օրիորդը արտասուալից աչօք ինգրեց
ինձմէ զալ իմացնել որ եթէ երկու ժամէն իրեն համար պա-
հանջուած ստակը չտանիք զնչուներուն՝ յաւիտեան պիտի
կորսնցնէք զինք:

ԼԵԱՆՏՐ.— Երկո՞ւ ժամէն:

ՔԱՐԼ.— Երկու ժամէն:

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԼԵԱՆՏՐ, ՕԲԴԱՎ, ՄՔԱՐԵՆ

ԼԵԱՆՏՐ.— Ո՞հ, սիրելիդ իմ Սքարէն, օգնութեանդ կարու եմ:

ՍՔԱՐԵՆ.— (ո՞յ եղեղով եւ զոռոգօրհն Լեանտրի առջեւ գաղով.) Ո՞հ, սիրելիդ իմ Սքարէն, հիմայ որ պէտք ունիք ինձմէ՛ սիրելիդ իմ Սքարէն կ'ըլլամ:

ԼԵԱՆՏՐ.— Թո՛ղ հիմայ այդ խօսքերն, ես բոլոր այդ բաները, եւ աւելին իսկ՝ եթէ ըրած են, կը ներեմ:

ՍՔԱՐԵՆ.— Ո՞չ, ո՞չ, ըրածներս մի՛ ներէք ինձի, ձեր սուրը փորս խօթեցէք: Գոն պիտի ըլլամ եթէ սպաննէք զիս:

ԼԵԱՆՏՐ.— Ո՞չ, դուն ինձի ապրեցուր՝ սիրոյ նպաստեւ լով:

ՍՔԱՐԵՆ.— Ո՞չ, ո՞չ, աւելի աղէկ կ'ընէք որ սպաննէք զիս:

ԼԵԱՆՏՐ.— Դուն ինձի համար չգտնուելիք ծառայ մ' ես, Սքարէն, կ'աղաշեմ որ ինձ համար գործածիս այն սքանչելի հանձարն՝ որ ամէն բան գլուխ կը հանէ:

ՍՔԱՐԵՆ.— Ո՞չ, սպաննէ՛ զիս, կ'ըսեմ:

ԼԵԱՆՏՐ. Ո՞հ, ինդրեմ, Սքարէն, մոոցի՛ր այս ամէն եղածները եւ ինձի օգնելը միայն նայէ:

ՕԲԴԱՎ. — Պէտք է բան մ'ընես իրեն, Սքարէն:

ՍՔԱՐԵՆ.— Այսքան անարդութենէ ետք կարելի՛ է որ օգնեմ իրեն:

ԼԵԱՆՏՐ.— Այս՛, մոոցի՛ր բարկութիւնս եւ այս պարագայի մէջ գու ճարպկութիւնդ բանեցուր:

ՕԲԴԱՎ.— Ես ալ կ'աղաշեմ, Սքարէն:

ՍՔԱՐԵՆ. — Եղած նախատինքը չեմ կրնար մարսել:

ՕԲԴԱՎ.— Ե՞ն, ալ մոոցի՛ր:

ԼԵԱՆՏՐ.— Սիրոյս այս ամենասագնապալի վիճակին մէջ զիս պիտի թողուա, Սքարէն:

ՍՔԱՐԵՆ.— Գալ այսպիսի նախատի՛նք մ'ընել յեղակարծ:

ԼԵԱՆՏՐ. — Ե՞ն, սիրեցայ:

ՍՔԱՐԵՆ.— Անպիտան, անզդամ, վատչուէր ածականները տալ ինձի:

ԼԵԱՆՏՐ.— Կը ցաւիմ այդպէս գէշ վարուելուա:

ՍՔԱՐԵՆ.— Ձեր սուրը փորս խօթե՛լ ուզէք:
ԼԵԱՆՏՐ.— Բոլոր սրտովս ներում կը խնդրեմ, Սքարէն, եւ եթէ հարկ է ծունկիդ իյնաւ, ահա այդ ալ կ'ընեմ աղաչւ լով նորէն որ զիս ձեռքէ չթողուա:

ՕԲԴԱՎ.— Ե՞ն, ա'լ պէտք է զիջանիս, Սքարէն:

ՍՔԱՐԵՆ.— Ուսք ելէք, ուրիշամ այսպահ չուտ չբարկանաք:

ԼԵԱՆՏՐ.— Խօսք կուտա՞ս որ ինձ համար պիտի աշխա-

տիս:

ՍՔԱՐԵՆ.— Ե՞ն, պէտք եղածով պիտի ընեմ:

ԼԵԱՆՏՐ.— Բայց զիտես թէ ժամանակը կարճ է, պէտք է չուտ ընել ինչ որ պիտի ընես:

ՍՔԱՐԵՆ.— Դուք անհոգ եղի՛ք, ո՞րքան ստակ պէտք է ձեզի:

ԼԵԱՆՏՐ.— Զորս հարիւր ոսկի:

ՍՔԱՐԵՆ.— Խոկ ձեզի, պարով Օքդալ:

ՕԲԴԱՎ.— Հինգ հարիւր ոսկի:

ՍՔԱՐԵՆ.— Այս ստակը ձեր հայրերէն կը փրցնեմ: (Օֆ-)

ՍՔԱՐԵՆ.— Այս ստակն հարքն արգէն գանուած է (Լեանտրին):

Պավին.) Ձեր մասին հարքն արգէն գանուած է (Լեանտրին):

Իսկ ձեր մասին՝ թեպէտ հայրերնիդ յետին աստիճան կծիք իսկ ձեր մասին՝ թեպէտ հարկու հարկ չկայ: Խելքի մասին զիտէք մէկն է՝ այլ երկար ձեւերու հարկ չկայ: Խելքի մասին զիտէք թէ փա՛ռք Սատուեռյ այսքան մոծ պաշար մը չունի: այնպիսի թէ փա՛ռք Սատուեռյ կրնաս կլւեցնել: Այս բանս ձեր մարդ մ'է՝ որու ուզածդ կրնաս կլւեցնել:

ԼԵԱՆՏՐ.— Այդքան յառաջ մի՛ երթար, Սքարէն:

ՍՔԱՐԵՆ.— Շա՛տ բան, այդ ալ ինձմառւթի՞ւն մը կ'ըլլայ եղեր: Այլ պարոն Օքդալի հայրը կը տեսնեմ: քանի որ նախ ներկայացաւ՝ իրմէ սկսինք Դուք երկուքդ ալ հեռացէ՛ք անգամ չկայ իր եւ ձեր մէջ, արգէն զիտէք հասարակութեան անգամ չկայ իր եւ ձեր մէջ, արգէն զիտէք հասարակութեան անգամ չկայ իր զիտէք կատարէ:

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԱՐԿԱՐԵ, ՍՔԱՐԵՆ

ՍՔԱՐԵՆ.— (մեկուսի.) Մտածման մէջ կը տեսնեմ զինքը:

ԱՐԿԱՐԵ.— (ինքինի առանձին կարծեղով.) Այսքան յոռի

վարք ու թերի դասողութիւնն ունենայ, երթայ այսպիսի
կապի մը տա'կ մտնէ: Ո՞հ, ո՞հ, երիտասարդակա՞ն ժողովու-
թիւն:

ԱՔԱԲԵՆ.՝ Բարեւ, տիար Արկանդ:

ԱՐԿԱՆԴ:— Բարեւ, Ս. Յաբէն:

ԱՐԱՐԵԲԻՆ. Զես սառուն ոռածեն վրայ, կը մտածէք

ԱՐԵՎԱՆԴԻ — Առաջնական լրատվական գործակը Հայաստանում:

ՍՔԱԲԻՆ. — Կեանք ըստած, տիեր Արկանդ, ձախողանքներով ի է, որոնց մարդու պէտք է միշտ պատրաստ ըլլայ: Երկար ժամանակ կայ նախնիի մը մէկ խօսքը լսած եմ՝ որ մտքէս չելլեր:

ԱՐԿԱՆԴ. — Ո՞ր խօսքն է այդ ։

ՍՔԱԲԵՆ. — Ընտանեաց հայր մը եթէ քիչ մը ժամանակ
բացակայ դանուի իրեններուն քովէն՝ պէտք է իր միտաքը
պտրտցնէ այն ամէն զէշ պատահարներուն վրայ՝ դորս ի գար-
ձին կատարուած սլիտի տեսնէ. իրեւակայէ թէ տունն այրած
է, ստակը գողցուած, կինը մեռած, որդին խեղած, աղջիկը
գլխէ ելած, եւ ինչ բան որ չպատահած դանէ՝ զայն իրեն
համար բաղդ սեպէ: Ես իմ փոքր փիլիսոփայութեամբս այս
խրատը միշտ ի զործ գրած եմ, երբէք տուն չեմ դարձած
առանց պատրաստուած ըլլալու տիրոջ բարկութեան, սաս-
տերու, թշնամանքներու, ծեծի, աքացի հարուածներու եւն.
այս ամէն բաներու մէջէն ինչ որ չպատահի՝ փառք տուած
եմ բաղդիս:

ԱՐԿԱՆԴ. — Այդ ամէնը լա՛ւ, բայց այս խենթ ամուսնութիւնը՝ որ մեր խորհրդին արգելվ կ'ըլլայ, անհանդուք եղիք բան մ'է, այս պատճառաւ փաստաբաններու գիմեցի զայն ջնջելու համար:

ՍՐԱԲԻՆ. — Եթէ ինձ կը հաւատաք, տիսր Սրկանդ,
աշխատեցէք ուրիշ ճամբով մը զործը կարգադրելու։ Գիտէք
քաջ թէ դատն ի՞նչ ըստել է այս երկրի մէջ, տարօրինակ նե-
ղութիւններ եւ գժուաբութիւններ պիտի կրէք։

ԱՐԿԱՆԻ. — Գիտեմ թէ ճշմարիտ է ըսածդ, այլ ուրիշ
ինչ ճամբար կրնայ ըլլալ:

ՍՔԱՅԻՆ. — Ես մէկ հնարք մը գտայ, պահ մը յառաջ ձեր
վիշտն ու թափիծը տեսնելով՝ այնքան մեծ կարեկցութիւն
զգացի՝ որ զձեղ այս հնհնութէն ազատելու համար աշխատե-
ցայ մտքովս ճար մը՝ միջոց մը փնտուել վասն զի ամէն ան-
գամ որ իրենց զաւակներուն երեսէն վշտի մէջ համակուած

պարկեցա հայրեր կը տեսնեմ կը յուղուիմ սաստիկ . եւ ասկէ
պատ, տիար Արլանդ, ձեր անձին նկատմամբ մասնաւոր հա-
մակրութիւն մ'զգացած եմ միշտ .
Ա.ԲԿԱՆԴ. - Շնորհակալ եմ այդ բարի զգացումներուդ

համար : Հայոց ամսու մնաղիալ աղջկան եղ-

ԱՐԿԱՆԴ. — Ե՞ս, Ե՞նչ կ'ուզէ:

ԱՐԿԱՆԻ. — ԱՅԼ ո՞րչափ :

ԱՐԱԲԻՆ. — Արտառոց, այլանդակ պահած

ԱՐԿԱՆԴ. - Ըստ՝ նայիմ ո՞րչափ է առկա լազք չըներ

ԱԳԱԲԵՆ. — ԵՐԵՎ-ՀՈՐՈ հաղար սովոր հապառ արգամ զետինին տակն

ԱՐԿԱՆԴ. - ԵՐԵՔ-ՀՈՐԱ Հակոբ

անցնի, ի՞նչ, զուարձանակ կ առէ

ԱԲԱԲԵՆ.—Ես այ այդ ըստ, ու

ութիւնները բացէ լիսաց և առաջ տես՝ զբ ել

անանկ դիւրախար մէկը չէ ու անուն չէ ձեռմէ վերջապէս մէկ շատ խօսքեր

ԱՐԿԱՆԴ. — Յիսուն ոսկի շատ է, բայց ինչ եւ է կուտամ։
 ՍՔԱԲԵՆ. — Զիու զէն ու զարդ ու ատրճանակներ, քսան ոսկի խօսք։
 ԱՐԿԱՆԴ. — Յիսուն եւ քսան ոսկիդ կընէ հօթանասուն ոսկի։
 ՍՔԱԲԵՆ. — Այդչափ։
 ԱՐԿԱՆԴ. — Եօթանասուն ոսկի շատ է, բայց ինչ եւ է կը հաւանիմ։
 ՍՔԱԲԵՆ. — Զի մ'ալ պէտք է սպասաւորին համար, քսան ոսկի մ'ալ ան։
 ԱՐԿԱՆԴ. — ^{ի՞նչ, քսան ոսկի} ալ սպասաւորի ձիու համար, թող բանը երթայ, մէ՛կ սոտակ չնմ տար։
 ՍՔԱԲԵՆ. — Ի՞նչ կ'ըսէք, տիար Արկանդ, մտածեցէք։
 ԱՐԿԱՆԴ. — Ո՛չ, կատարեալ լրբութիւն մ'է աս առաջարկը։
 ՍՔԱԲԵՆ. — Ի՞նչ, սպասաւորը հետի՞ պիտի երթայ։
 ԱՐԿԱՆԴ. — Ի՞նչպէս կ'ուզէ՝ այնպէս թող երթայ, տէրն առյուղիս։
 ՍՔԱԲԵՆ. — Ե՛ս, ի՞նչ ըսկմ, տիար Արկանդ, ատանկ պզտի գումարի մը խօսքը մի՛ ընէք։ Աստուծոյ սիրոյն, ըլլայ թէ զատի ելլէք, բոլոր ունեցածնիդ հանեցէք տուէ՛ք դատաւորներու ձեռքէն ազատելու համար։
 ԱՐԿԱՆԴ. — Շատ ազէկ. թող անանկ ըլլայ, այդ քսան ոսկին ալ կուտամ։
 ՍՔԱԲԵՆ. — Կ'ըսէ թէ ջորիի մ ալ պէտք ունի՝ որ բեռերը կրէ։
 ԱՐԿԱՆԴ. — Գետին անցնի ինքն ալ ջորին ալ, ես դատ պիտի բանամ։
 ՍՔԱԲԵՆ. — Ի՞նչ կ'ըսէք, տիար Արկանդ, լսու մտածեցէք։
 ԱՐԿԱՆԴ. — Մտածելիք բան չունիմ, փարայ մ'անգամ չեմ տար։
 ՍՔԱԲԵՆ. — Պատիկ ջորի մը, տիար Արկանդ, ատոր խօսքը կ'ըլլայ։
 ԱՐԿԱՆԴ. — Եշ անգամ չեմ տար անոր։
 ՍՔԱԲԵՆ. — Խորհեցէք թէ . . .
 ԱՐԿԱՆԴ. — Ո՛չ, դատ պիտի վարեմ։
 ՍՔԱԲԵՆ. — Ի՞նչ, դատի խօսք կ'ընէք, տիար Արկանդ, հազար անգամ մտածեցէք այդ բանն ընելէ յառաջ, նետեցէք ձեր ակնարկը անոր կերպ կերպ մանուածներուն վրայ, տիսէ՛ք

քանի՛ տեսակ կոչեր եւ իրաւասական աստիճաններ կան, քանի՛ տեսակ նեղացուցիչ զատավարութիւններ, քանի՛ յափշտակիչ զազաններ՝ որոց ճանկէն պիտի հարկադրիք անցնիլ իրաւայրի փոխանորդներ՛։ Ասոնցմէ ամէն մէկը ամենափոքր մէկ պատճառով կրնայ աշխարհի լաւագոյն իրաւունքն ապտակել։ / Ձեր փաստաբանը՝ նոյնպէս կաշառուած՝ ձեր զատը նայուած օրը ներկայ չպիտի գտնուի եւ ինդրէ զուրս պատճառներ յառաջ պիտի բերէ՝ որոնք զործին հետ որ եւ է յարարերութիւն չունին, եւ երբ՝ աշխարհի ամէն նախազգուշութիւններով այս ամէն վտանգներուն պրջին առած ըլլաք իսկ՝ մէյ մ'ալ չուարած՝ աղջած պիտի տեսնէք որ ամէնքը ձեզ գէմ պիտի ելլեն սուտ բարեպաշտներէ կամ իրենց սիրած կիներէ թելադրուած։ Ո՞հ, տիար Արկանդ, ձեր օձիքն ազատեցէ՛ք այդ զժոխքէն՝ եթէ կարելի է։ / Դատ ունենալը, զեռ չմեռած այս աշխարհի մէջ զժոխքի զատապարտուիլ ըսել է, ես զատին անունը լսեմ՝ մինչեւ Հնդկաստան կը փախչիմ։
 ԱՐԿԱՆԴ. — Զորիին համար ի՞նչ կը պահանջէ։
 ՍՔԱԲԵՆ. — Թէ՛ ջորիին թէ՛ իր ձիուն եւ թէ իր մարդու ձիուն համար, անոնց արդուզարդին եւ ատրճանակներու համար, նաեւ իր ատանտիրոջ ունեցած մանր պարտուց համար ընդամենը հինգ հարիւր ոսկի կը պահանջէ։
 ԱՐԿԱՆԴ. — Հինգ հարիւր ոսկի մի՛։
 ՍՔԱԲԵՆ. — Այո՛, այդքան։
 ԱՐԿԱՆԴ. — (բարկութեամբ ձեմելով.) Օ՞հ անդր, դատ կը վարեմ։
 ՍՔԱԲԵՆ. — Լաւ խորհեցէ՛ք։
 ԱՐԿԱՆԴ. — Լաւ խորհեցայ, զատ պիտի վարեմ։
 ՍՔԱԲԵՆ. — Զըլլայ թէ ինքինքնիդ նետէք այդ . . .
 ԱՐԿԱՆԴ. — Դա՛տ պիտի վարեմ, կ'ըսեմ։
 ՍՔԱԲԵՆ. — Այլ դատ վարելը սակով կ'ըլլայ, տիար Արկանդ, ստակ պիտի տաք աղջարաբագրի համար, ստակ պիտի տաք կրկնարձանագրի համար, ստակ պիտի տաք փոխանորդագրի համար, ստակ պիտի տաք իրաւայրի ներկայացման, խորհուրդներու, թուզթերու եւ մուրհակներու հանման եւ աւուրչէքներուն համար, Ստակ պիտի տաք փաստաբաններու խորհրդակցութեանց եւ զատավարութեանց համար, զատական թուզթերու պարկը ետ ուզելու համար, դատադրերու բուն օրինակներուն համար, Ստակ պիտի տաք իրաւայրի փոխանորդներու տեղեկադրներու համար, ընդհանուր դատախա-

զութեան վարձուց համար, զիւանապետի արձանագրութեան համար. թուղթեր ցուցնելու, վկայներ բերելու համանի խմբագրութեան համար, վճիռներու եւ գատակնիքներու համար, հակակչոներու, ստորագրութեանց համար եւ իրենց դպիքներու տուած վաւերական պատճեններու համար. Այս ստակը սա մեր մարդուն տուէ՛ք, եւ ամէն բանէ ապատած կ'ըլլաք:

ԱՐԿԱՆԴ. — Ի՞նչպէս, հինգ հարիւր ոսկի.

ՄՔԱԲԵՆ. — Այո՛, հինգ հարիւր ոսկի եւ դուք շահաւոր պիտի ելլէք: Դատական բոլոր ծախուց մէկ պղտի հաշիւն ըըթ ինքնիրեն, եւ տեսայ թէ այդ մարդուն հինգ հարիւր ոսկի տալով՝ գոնէ չորս հարիւր ոսկի գրպաննիդ պիտի մնայ, չեմ յիշեր այն ձեռնարկներն, այն հնհնուքներն, եւ այն նեղութիւններն որոնցմէ պիտի ազատիք: Այդ անշահ փաստաբաններուն խօսած հաղարումէկ ափեղցիեղ խօսքերը չլսելու համար միայն՝ ես տելի աղեկ ունէի վեց հարիւր՝ եօթ հարիւր ոսկի տալ քան թէ դատ վարել:

ԱՐԿԱՆԴ. — Հո՛գս, փաստաբաններն իմ վրայօքս ի՞նչ կընան խօսիլ:

ՄՔԱԲԵՆ. — Ազատ էք ձեր ուզածն ընելու, այլ ես ձեր տեղն ըլլայի՝ դատ չէի վարեր:

ԱՐԿԱՆԴ. — Ես հինգ հարիւր ոսկի չե՛մ տար:

ՄՔԱԲԵՆ. — Ահա նոյն ինքն կուգայ:

ՏԵՍԱՐԱՆ թ.

ԱՐԿԱՆԴ, ՄՔԱԲԵՆ, ԿԻՐԱԿՈՍ սիկարեանի հագուստներով

ԿԻՐԱԿՈՍ. — Սքաբէն, ցուցուր նայիմ ո՞վ է Օքղակի հայր ըլլալիք սա Արկանցը:

ՄՔԱԲԵՆ. — Ի՞նչու կուզէք ճանչնալ զինքը:

ԿԻՐԱԿՈՍ. — Իմացայ թէ կուզէ դատ բանալ ինձի գէմ, եւ գատարանի միջոցաւ քրոջս ամուսնութիւնն աւրել:

ՄՔԱԲԵՆ. — Զեմ զիտեր թէ տիար Արկանդ այդպիսի միտք մ'ունի՛, այլ ձեր պահանջած հինգ հարիւր ոսկին վճարելու չզիջանիք, կ'ըսէ թէ շատ ստակ է այդ:

ԿԻՐԱԿՈՍ. — Հո՛ւր եւ շա՞նթ, մէյմը դանեմ զինքը՝ երկու կտոր պիտի ընեմ, եթէ կ'ուզեն թող կախեն զիս:
(Արէնտ՝ չունասելու հայտ՝ ուղղաւունք Աւաբէնէ երև է զահուցուի:)

ԱՐԱԲԵՆ. — Օքղակի հայրը սրտուտ մէկն է, եւ գուցէ չվախնայ ձեզմէ:

ԿԻՐԱԿՈՍ. — Ահա, ահա, հո՛ւր ու շա՞նթ, եթէ սա տեղութիւնի պիտի մոլուք: (Արկանդը նշմարելով:)

Այս մարդու ո՞վ է:

ՄՔԱԲԵՆ. — Ան չէ, ան չէ, պարո՞ն:

ԿԻՐԱԿՈՍ. — Իր բարեկամներէն մէկն է արգեօք:

ՄՔԱԲԵՆ. — Ո՛չ, պարո՞ն, ընդհակառակն իր ոխերիմ թշնամին է:

ԿԻՐԱԿՈՍ. — Իր ոխերիմ թշնամի՞ն:

ՄՔԱԲԵՆ. — Այո՛:

ԿԻՐԱԿՈՍ. — Ե՞ս, աղէկ որ այնպէս է: (Արկանդի:.) Իրաւ այդ վատ Արկանդին թշնամի՞ն էք, պատասխանեցէք:

ՄՔԱԲԵՆ. — Այո՛, այլ, ես կը վկայեմ այնպէս ըլլալը:

ԿԻՐԱԿՈՍ. — (Արկանդի ձեռքն ուժգնակի ցնցելով:) Տուէք ձեր ձեռքը, ձշմարես վկա՞յ, կերպնում պատույս վրայ, կրած ձեր ձեռքը վրայ, ամէն բանի վրայ, որ այսօր զիշեր չեղած այդ թուրիս վրայ, ամէն բանի վրայ, այդ ցած Արկանդէն պիտի ազատիմ զձեզ, զուք բանն ինձի թողուցէք:

ՄՔԱԲԵՆ. — Պարո՞ն, չչօք վիաեր թէ այս տեսակ բան մը միծ պատիք ունի այս երկը մէջ:

ԿԻՐԱԿՈՍ. — Հոգս անդամ չէ, ես կորսնցնելիք բան չունիմ:

ՄՔԱԲԵՆ. — Ես անշուշտ զգուշութիւններ ի գործ պիտի գնէ, աղղականներ՝ բարեկամներ եւ ծառաներ ունի՝ որք զինք պիտի պաշտպաննեն ձեր բարկութեան դէմ:

ԿԻՐԱԿՈՍ. — Իմ ալ ուզածս ա'յդ է: (Սուրբ յաշելով:)

ԿԻՐԱԿՈՍ. — Հո՛ւր եւ շա՞նթ, Ա՛ւր Եր թէ այս ժամուս իրեն հանդպէի իր զուր ոգնականներով: Ի՞նչո՞ւ քան երեսուն պաշտպաններով զիմացս չելլեր, անոնք ամէնքն ալ զէն՝ ի ձեռին թող զիմացս իրնան: (Պաշտպանողական դիրի մ'առնելով:)

Ահա անպիտաններ, ինձի գէմ յարձակելու յանգնիքը: Հասա՞ զարնենք, ջարգե՞նք: (Թուրը ամէն կողմէ ուղղելով ուպիս զարնենք, ջարգե՞նք: (Թուրը ամէն կողմէ ուղղելով ուպիս թէ շատ մ'անձինի իր դիմացը գտնուէին:)) Աչ մէկուն պիտի

ինայեմ։ Հապա՛ ուղղե՛նք մեր թուրը, տա՛նք հարռւածը։ Զգո՛յշ։ Ո՛հ, սրիկաներ, ո՛հ, անպիտաննե՛ր, կոռուֆօլ կ'ուղէք։ Պիտի հասկնաք թէ կոռուլը ի՞նչչպէս մկ'ըլլայ։ Դիմացէ՛ք նայինք, սինլքորներ, զիմացէ՛ք։ Հապա պատասխանեցէք սա հարռւածին, սա՛ միւսին։ (Արկանի եւ Սյաբենի կողմը դառնալով.) Սըւո՛ր։ Սըւո՛ր, ի՞նչ, կ'ընկրկի՞ք հապա, մի նահանչէ՛ք, տեղերնէդ մի՛ շարժիք։

ՍՔԱԲէՆ. — Ե՛հ, պարոն, մեղմէ ի՞նչ կ'ուղէք, մենք անոնցմէ չենք։

ԿԻՐԱԿՈՍ. — Էինձի դէմ ելլելը պիտի սորվեցնե՛մ ձեզի։

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԱՐԿԱՆԻ, ՍՔԱԲԷՆ

ՍՔԱԲԷՆ. — Ե՛հ, տեսա՞ք հիմայ, տիար Սրկանդ, թէ հինգ հարիւր լուկիի համարն ո՞րքան մարդիկ կեանքերնին պիտի կորսնցնեն։ Չեղ յաջողութիւն կը մաղթեմ, տիար Սրկանդ։

ԱՐԿԱՆԻ. — (դողդալով.) Սքաբէ՛ն։

ՍՔԱԲԷՆ. — Հրամմեցէ՛ք։

ԱՐԿԱՆԻ. — Այս հինգ հարիւր ոսկին տալ որոշեցի։

ՍՔԱԲԷՆ. — Չեղ սաստիկ սիրելուս համար խիստ ուրախ եմ որ այդ խոհեմ որոշումը առուիք։

ԱՐԿԱՆԻ. — Երթանք գտնենք զինք, հինգ հարիւր ոսկի քովս ունիմ։

ՍՔԱԲԷՆ. — Ինձի տուէք, իրրեւ ուրիշ անձ մը ներկայանալէ ետք ձեր պատուոյն համար լաւ չըլլար որ բանին մէջ երեւիք, ատկէ զատ՝ կը վախնամ որ զեղ ճանչնալով՝ չելլէ աւելի պահանջումներ չընէ։

ԱՐԿԱՆԻ. — Այս, այլ կ'ուղէի ձեռքովս տալ այդ ստակը։

ՍՔԱԲԷՆ. — Ի՞նչ վրաս չէ՞ք վստահիք։

ԱՐԿԱՆԻ. — Չէ թէ չեմ վստահիք, բայց . . . :

ՍՔԱԲԷՆ. — Ե՛հ, տիար Սրկանդ, կա՛մ խարդախ եւ կամ պարկեսու մարդ եմ, երկուքն մէկը։ Ի՞նչ պիտի խարե՞մ զձեղ եւ այս գործիս մէջ միթէ ուրիշ նկատում մ'ունի՞մ քան ձեր շահը եւ իմ տիբոջս շահը՝ որու կ'ուղէք խնամենալ։ Եթէ ձեր առջեւ կասկածելի մէկն եմ՝ ա՛լ քանի մը չեմ խառու

նուիր, դացէ՛ք գործը շակող ուրիշ մէկը գտէ՛ք այս ժամէս։

ԱՐԿԱՆԻ. — Ահա կուտամ, ա՛ռ։

ՍՔԱԲԷՆ. — Ո՛չ, տիար Սրկանդ, ձեր ստակը ինձի մի՛ կ'ուղէմ ձեր ստակը մէջ՝ իմ տեղս ուրիշ մէկը գործաւ հաւտաք։ Այս գեցէք։

ԱՐԿԱՆԻ. — Ե՛հ, մի՛ երկնցներ, ա՛ռ։

ՍՔԱԲԷՆ. — Ո՛չ, ինձի մի՛ վստահիք։ Ո՞վ գիտէ, գուցէ

կ'ուղէմ ձեր ստակը շորթել։

ԱՐԿԱՆԻ. — Ա՛ռ կ'ըսեմ, աւելի խօսիլ մի՛ տար։ Այլ

ԱՐԿԱՆԻ. — Ա՛ռ կ'ըսեմ, աւելի խօսիլ երաշխաւորութիւններ առնայէ՛ որ իրմէ ամէն կարելի երաշխաւորութիւններ առնուս։

ՍՔԱԲԷՆ. — Այս մասին ամենեւին հոգ մի՛ ընէք, դիմացինը դարտակ մէկը չէ։

ԱՐԿԱՆԻ. — Տունս պիտի սպասեմ քեզի։

ՍՔԱԲԷՆ. — Շատ լաւ, կուգամ։ (Առանձին.) Այս եղա՛ մէկ, Հիմա մէկալին նայինք։ Ահա կը տհոնեմ որ կուգայ, մէկ կարծես թէ Աստուած իրար ետեւէ կը բերէ ցանցիս մէջ կը ձգէ զանոնք։

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ՃԵՐՈՆԻ, ՍՔԱԲԷՆ

ՍՔԱԲԷՆ. — (Ճերօնիլ յշևանել ձեւացնելով.) Տէ՛ր Ասուած, ի՞նչ անակնկալ ձախողութիւն է այս, Ո՞հ, խեղձ հայր, ո՞հ գմբազզ հայր, խեղձ պարոն ժերօնդ, հիմայ ի՞նչ պիտի ընես։

ՃԵՐՈՆԻ. — (Մեկուսի) Ինձի համար ի՞նչ կ'ըսէ այդպէս տրտմած կերպով մը։

ՍՔԱԲԷՆ. — Ալդեօք զիացող մը կտօյ, թէ ո՞ւր կը դանուի տիար ժերօնդ։

ՃԵՐՈՆԻ. — Ի՞նչ կայ, Սքաբէն։

ՍՔԱԲԷՆ. — (Տեսարանին վրայ վազվուելով) առանց Ճերօնիլ տեսել եւ լսել ուզելու։ Ո՞ւր կը նում զանել զինք ո՞ւ

այս գմբազզութիւնն իմացնեմ։

ՃԵՐՈՆԻ. — (Սյաբենի ետեւեն վագելով.) Ի՞նչ կայ,

Սքաբէն, ի՞նչ եղաւ։

ԺԵՐՈՆԴ. — Այլ ի՞նչու ցոկանաւը երթար, ա՛խ, անիծ-
եա՛լ ցոկանաւ, ապիրա՛տ զող, գետի՛նն անցնիք երկուքդ
ալ:

ՄՔԱԲԵՆ. — (առանձին.) Իրմէ առած չորս հարիւր ոսկիս
չկրնար մարսել, այլ իր պարտքէն տակաւին չէ ազատած,
զաւկին քով վրաս քսած մուրին փոխարէնը կ'ուզեմ որ ուրիշ
կերպով վճարէ:

ՏԵՍԱՐԱՆ ՃԲ.

ՕՔԴԱՎ. ԼԵԱՆՏՐ, ՄՔԱԲԵՆ

ՕՔԴԱՎ. — Ի՞նչ լուր, Սքաբէն, զործս յաջողցուցի՞ր :

ԼԵԱՆՏՐ. — Զիս իմ տագնապալի վիճակէս աղատելու հա-
մար բան մ'ըրի՞ր, Սքաբէն:

ՄՔԱԲԵՆ. — (ՕՔԴԱՎի.) Ահա հինգ հարիւր ոսկի՝ զոր ձեր
հօրմէն փրցուցի :

ՕՔԴԱՎ. — Ո՛հ, ո՛րքան կ'ուրախացնես զիս, Սքաբէն,

ՄՔԱԲԵՆ. — (ԼԿԱՆՏՐի.) Զեղի համար, տէր իմ, բան չկը-
ցայ ընել:

ԼԵԱՆՏՐ. — (Երբալ ուզելով.) Պէտք է մեռնիմ, ուրեմն,
Զերպինէզը ձեռքէս փախցնելէ ետք ապրելէ ի՞նչ պիտի
հասկնամ:

ՄՔԱԲԵՆ. — Այ, այ, քիչ մը կամաց. ո՛րքան ալ կ'աճա-
պարէք:

ԼԵԱՆՏՐ. — (ԵՏ դառնալով.) Ե՛հ, ի՞նչ կուզես որ ըլլամ
ասկէ վերջ:

ՄՔԱԲԵՆ. — Անհոգ եղիք, ձեր ստակն ալ զրպանս է:

ԼԵԱՆՏՐ. — Ո՛հ, Սքաբէն, կեանքս ինձ կը պարզեւես:

ՄՔԱԲԵՆ. — Բայց պայմանաւ որ ինձ խաղացած խաղին
համար թոյլ պիտի տաք որ պղտի վրէմ մը լուծեմ ձեր հօրմէ:

ԼԵԱՆՏՐ. — Ի՞նչ որ կ'ուզես՝ ըրէ:

ՄՔԱԲԵՆ. — Վկայի առջեւ կը խոստանա՞ք ի՞նձի:

ԼԵԱՆՏՐ. — Այո՛:

ՄՔԱԲԵՆ. — Ահա ձեր չորս հարիւր ոսկին:

ԼԵԱՆՏՐ. — Երթանք շուտով սիրական Զերպինէզիս դինը
վճարելու:

ԱՐԱՐՔ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԶԵՐՊԻՆԷԴԻ, ՀԻԱՍԻՆԴԻ, ՄՔԱԲԵՆ, ԿԻՐԱԿՈՍ

ԿԻՐԱԿՈՍ. — Այո՛, ձեր տարփածուները որոշեցին որ միա-
տեղ մնաք, մինք ալ մեզ տրուած հրամանը կը կատարենք:
ՀԻԱՍԻՆԴԻ. — (Զերպինէդի.) Այսպիսի կարգագրութիւն
մ'ըստ ամենայնի հաճելի է ինձ: Զեզ նման ընկերունի մ'ու-
րախութեամբ կ'ընդունիմ. ինձ հաճութիւն է որ մեր սիրա-
հարներու միջեւ գանուած բարեկամութիւնը մեր երկուքին
միջեւ ալ տարածուի:

ԶԵՐՊԻՆԷԴԻ. — Առաջարկը սիրով կ'ընդունիմ, բարեկա-
մութեան հրաւերի առջեւ ընկերող մէկը չեմ ես:

ՄՔԱԲԵՆ. — Իսկ եթէ սիրոյ հրաւե՞ր մ'ըլլայ ձեզ:

ԶԵՐՊԻՆԷԴԻ. — Այդ տարբեր խնդիր է, սիրոյ մէջ վտանգն
աւելի մեծ է, եւ ես հարկ եղած համարձակութիւնը չունիմ:

ՄՔԱԲԵՆ. — Հիմա կարծեմ ակրոջս մասին պիտի ունենաք
այդ համարձակութիւնը, ձեզ նկատմամբ ըրածը պէտք է արի-
ացնէ զձեզ որ իր սիրոյն պատասխանէք:

ԶԵՐՊԻՆԷԴԻ. — Թէպէտ հարկ եղած վատահութիւնն ունիմ
տիրոջ վրայ, այլ սակայն իր ըրածը բաւական չէ ինձ լիուլի
ապահովութիւն ներշնչելու: Բնութեամբ զուարթ եմ, միշտ

կը խնդամ, այլ խնդացած միջոցիս ինչ ինչ կէտերու նկատմամբ լուրջ եմ ու խիստ, ուստի տէրդ եթէ կը կարծէ թէ զիս ծախու առնուլը կը բաւէ որպէս զի նուիրուիմ իրեն՝ կը սխալի: Սյս բանիս համար ստակէ ուրիշ բան մը պէտք է, այսինքն իր սիրոյն ամեն կերպով պատասխանելու համար՝ պէտք է որ իր անկեղծ հաւասարմութեան հաւաստիքն ունենամ՝ կարեւոր դատուած ինչ ինչ ձեւակերպութիւններով ամոքուած:

ՄՔԱԲԷՆ. — Ինքն ալ այդ կերպով կ'ուղէ կատարել բանը, ձեր ձեռքն օրինաւոր կերպով կը խնդրէ, արդէն եթէ ուրիշ կերպ զիտում ունենար՝ ես այս զործին մէջ չէի խառնուեր:

ԶԵՐՊԻՆԵԴԻ. — Քանի որ այդպէս կ'ըսեմ՝ ես ալ սիրով այդպէս կը հաւատամ, այլ սակայն հօր կողմէ զժուարութիւններ կը նախատեսեմ:

ՄՔԱԲԷՆ. — Բանը կարգագրուելու կերպը կը դանուի:

ՀԻԱՍԻՆԴԻ. — (Զերպինեդի.) Մեր երկուքի բաղդերուն նմանութիւնն ալ պէտք է նախատէ մեր փոխազարձ բարեկամութեան հաստատութեանը, երկուքս ալ միեւնոյն սրտադողի մէջն ենք, երկուքս ալ նշաւակ ենք միեւնոյն ձախուզութեան:

ԶԵՐՊԻՆԵԴԻ. — Դուք դոնէ այն առաւելութիւնն ունիք թէ որմէ՞ ծնած ըլլալնիդ զիտէք, եւ թէ ձեր ծնողը ճանչցնելով կրնաք հարկ եղած պաշտպանութիւնը գանել ամէն բան շըտկելու, ձեր երջանկութիւնն ապահովելու եւ եղած կատարուած ամուսնութեան մը համար հաւասնութիւն ձեսք բերելու, այլ սակայն ես՝ իմ այս զիրքի մէջ այսպիսի նպաստ մը չեմ կարող դանել, իմ վիճակս երբէք չպիտի կակդէ հայր մ'որ հարստութեան աչք ունի միայն:

ՀԻԱՍԻՆԴԻ. — Այլ միւս կողմէ դուք ալ այն առաւելութիւնն ունիք որ ձեր սիրած երիտասարդին ուրիշ ազջիկ մը չեն առաջարկեր՝ որով դուցէ անոր միոքը պղտորուի:

ԶԵՐՊԻՆԵԴԻ. — Ամէնէ աւելի վախցուելիք կէտը սիրահարի մը սրտին փոփոխութիւնը չէ: Ազջիկ մը բնականապէս կրնայ հաւատալ թէ իր շահած երիտասարդն իրեն պահելու համար բաւական արժանիք ունի, այսպիսի ին զրի մը մէջ իմ տեսած ամենէ ահարկու բանս հայրական իշխանութիւնն է՝ որու քով որ եւ է արժանիք նշանակութիւն անգամ չունենար:

ՀԻԱՍԻՆԴԻ. — Բարէ՛, ինչո՞ւ այսպիսի օրինաւոր հակումներ արգելքներու՝ խափաններու հանդպին, ի՞նչ քաղցր բան է

աէրը՝ երբ որ եւ է խոչընդու չկայ այն քաղցր կապին՝ որով երկու սրտեր կցուած են իրարու:

ՄՔԱԲԷՆ. — Սխա՛լ կարծիք, սիրոյ մէջ խաղաղութիւնը այնքան ախորժ բան մը չէ: Սինհով սէր մը ձանձրալի կը դառնայ, այլազանութիւններ պէտք են կենցաղի մէջ: Երբ բանի մը մէջ զժուարութիւններ զան խառնուին՝ խանդը կը սաստկանայ, հաճոյքը կ'աւելնայ:

ԶԵՐՊԻՆԵԴԻ. — Սքարէն, պատմէ՛ մտիկ ընենք թէ ի՞նչ հնարքով քու ժլատ ծերուկէդ ստակ խլեցիր, խիստ զուարձալի բան մ'է եղեր այն: Գիտես թէ կը ինձ պատմութիւն մը պատմուի՝ պարապը չերթար, յայտնած ուրախութեամբս փոխարինած կ'ըլլամ ստանձնուած նեղութիւնան:

ՄՔԱԲԷՆ. — Իմ տեղս կիրակոս կրնայ այդ պատմութիւնը պատմել, մտքիս մէջ պղտի վրէժինզրութիւն մը ունիմ՝ որու վայելքը կ'ուղեմ հանել:

ԿԻՐԱԿՈՍ. — Զեմ հասկնար թէ ինչո՞ւ երթաս դլուխդ տարապարտ փորձանքներ հանես:

ՄՔԱԲԷՆ. — Ի՞նչ ընեմ, ձեռքս չէ, ես կ'ախորժիմ վտանգալի ձեսնարկներէ:

ԿԻՐԱԿՈՍ. — Բոի ու կը կրնեմ, հաւատա թէ լաւ կ'ընես այդ զիտաւորութիւնդ մէկդի թողլով:

ՄՔԱԲԷՆ. — Բայց ես ամենէ յառաջ ինձի կը հաւատամ, կիրակոս. — Ի՞նչ է ունենալիք զուարձութիւնդ:

ՄՔԱԲԷՆ. — Եւ քու վախդ ի՞նչ է:

ԿԻՐԱԿՈՍ. — Իմ վախս սա՛ է որ լաւ տփոց մ'ուտելու անհարկի վտանգին կ'ենթարկես ինքզինքդ:

ՄՔԱԲԷՆ. — Այդ իմ կոնակիս զիտնալիք բանն է չէ թէ քու կիրակոս. — Իրաւ է որ կոնկիդ տէրը դուն ես, եւ սնոր տնօրէնութիւնն ալ քեզ կը վերաբերի:

ՄՔԱԲԷՆ. — Այդ տեսակ վտանգներէ իմ աչքս երբէք վախցած չէ, ես կ'ատեմ այն երկշոտներն՝ որոնք գործի մ'ունենալիք հետեւանքը չափազանց մատելով՝ որ եւ է ձեսնարկի սիրտ չեն ըներ:

ԶԵՐՊԻՆԵԴԻ. — (Այաբէնի.) Քեզմէ պէտք պիտի ունենանք միշտ, Աքարէն:

ՄՔԱԲԷՆ. — Դուք զացէք ամենքդ ալ, քիչ ատենէն կուգամ զնեղ կը գտնեմ: Ո՛չ, անպատճ չպիտի մնայ ան՝ որ ինքզինք մատնելու վիճակին մէջ զրաւ զիս եւ ծածուկ մնալիք գաղտնիք մը պարտաւորեց յայտնել:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԺԵՐՕՆԴԻ, ՄՔԱՐԵՆ

ՏԵՍԱՐԱՆ Բ.
ԺԵՐՕՆԴԻ, ՄՔԱՐԵՆ
ԺԵՐՕՆԴԻ — Ի՞նչ յուր, Սքարէն, ի՞նչ եղաւ զաւկիս գործը,
ՄՔԱՐԵՆ. — Ձեր զաւակը, տէր իմ, ազատած է; այլ հիմայ
դուք ամենամեծ վտանգի մէջ կը գտնուիք, կ'ուղէի որ այս
ժամուս ձեր տան մէջ փակուած ըլլայիք:

ԺԵՐՕՆԴԻ. — Ի՞նչ խօսք է այդ, ի՞նչ կայ:

ՄՔԱՐԵՆ. — Ի՞նչ պիտի ըլլայ, այս ժամուս ամէն կողմ
զձեզ կը փնտռեն՝ սպաննելու համար:

ԺԵՐՕՆԴԻ. — Զի՞ս կը փնտռեն:

ՄՔԱՐԵՆ. — Այո՛, տէր իմ:

ԺԵՐՕՆԴԻ. — Եւ ո՞վ է փնտռողը:

ՄՔԱՐԵՆ. — Օքտավի առած աղջկան եղբայրը. նա կը կար-
է թէ ձեր աղջիկն իր քրոջ տեղ կնութեան տալու ձեր խոր-
հուրդը ամենամեծ պատճառն է կնքուած ամուսնութեան
խզուելուն, եւ այս մտածմամբ աներկիւդ որոշած է իր յու-
սահատութիւնը ձեր վրայ թափել եւ զձեզ սպաննել պատռոյ
վրէժ լուծելու համար: Իր բոլոր բարեկամները՝ ամէնքն ալ
սուր խաղցնողներ՝ ամէն կողմ կը փնտռեն զձեզ եւ ո՞ւր
ըլլալնիդ կը հարցնեն: Իր զօրախումբէն զինուրիներ իսկ տե-
սայ հոս հոն որք իրենց գէմն ելածին հարցուփորձեր կ'ընեն
եւ պզտի գունդերու բամնուած՝ ձեր տան բոլոր մուտքերը
բոնած են, անանկ որ ձեր բնակարանն երթալու համար աչ
կամ ձախ ինչ քայլափոխ ալ առնուք՝ անպատճառ իրենց
ձեռք պիտի իյնաք:

ԺԵՐՕՆԴԻ. — Է՛հ, ես հիմայ ի՞նչ ընեմ, սիրելիդ իմ Սքա-
րէն:

ՄՔԱՐԵՆ. — Ես ալ չզիտեմ, տէր իմ, զի խիստ գէշ գործ
մ'է այս Գլխէս մինչև ոտքերս կը դրամ ձեզի համար: Եւ
· · · կեցի՛ք:

(Ստոբէն աւասրանին իորն երնուը ուեւ կ'ընէ՛ որ գէշուցէ յուր
յուր հան:)

ԺԵՐՕՆԴԻ. — (դողդդալով.) Ի՞նչ կայ:

ՄՔԱՐԵՆ. — Ո՛չ, ո՛չ, բան չկայ:

ԺԵՐՕՆԴԻ. — Այս զտանդէն զիս ազատելու համար միջոց
մը չե՞ս կընար գտնել, Սքարէն:

ՄՔԱՐԵՆ. — Միջոց մը կ'երևակայիմ, այլ կը վախնամ որ
զլուստ փորձանքի պիտի հանդպի:

ԺԵՐՕՆԴԻ. — Ո՛չ, սիրելի Սքարէն, հաւատարիմ ծառայ
ըլլալդ ցուցո՛ւր, զիս մի՛ թողուր, կ'աղաչեմ:

ՄՔԱՐԵՆ. — Ես ալ զայդ կը վափաքիմ: Զեր վրայ սաս-
տիկ սէր ունենալով՝ չեմ կրնար զնեզ անօդնական թողուր:

ԺԵՐՕՆԴԻ. — Եւ ես կը վարձատեմ քեզ, Սքարէն, հագած
մեկնոցս երբ քիչ մը մաշի քեզ կուտամ:

ՄՔԱՐԵՆ. — Կեցի՛ք: Ճիշտ ժամանակին միտքս հնարք մը
կուգայ զձեզ աղատելու համար, պէտք է որ սա պարկին մէջ
մտնէք, եւ . . .

ԺԵՐՕՆԴԻ. — (կարծելով թէ մէկը կուզայ.) Հասի՛ր, Սքարէն:

ՄՔԱՐԵՆ. — Զէ՛, չէ՛, չէ՛, մի՛ վախնաք, մարդ չկայ: Պէտք
է որ սա պարկին մէջ մտնէք կ'ըսեմ, եւ ամենափոքր շար-
ժում մ'իսկ չընէք: Ես իրը որ եւ է բեռ մը՝ զձեզ կոնակս
առած՝ ձեր թշնամիներուն մէջէն այլպէս մինչեւ տուն պիտի
տանիմ: Սնկամ մ'որ ներս մտնենք՝ կամրանանք հոն եւ եղած
բոնաբարութեան դէմ օգնութեան կը կանչենք:

ԺԵՐՕՆԴԻ. — Լաւ հնարք է այդ, Սքարէն:

ՄՔԱՐԵՆ. — Այո՛, պատուական հնարք մը՝ ինչպէս պիտի
տեսնէք: (Մեկուսի.) Զրպարտութեանդ պատիմը պիտի
քաւես:

ԺԵՐՕՆԴԻ. — Ի՞նչ կ'ըսես, Սքարէն:

ՄՔԱՐԵՆ. — Կ'ըսեմ թէ ձեր թշնամիները պիտի խարուին,
ծուզակն իյնան: Պարկին խորը՝ խորը կծկուեցէք, եւ մանա-
ւանդ հոդ տարէ՛ք որ զձեզ չտեսնեն, եւ՝ ինչ որ ալ ըլլայ՝
ամենափոքր շարժում մ'իսկ մի՛ ընէք:

ԺԵՐՕՆԴԻ. — Դուն անհոգ եղի՛ր, Սքարէն, արձանի պէս
անշարժ պիտի մնամ, եւ . . .

ՄՔԱՐԵՆ. — Պահուեցէք: ահա՛ սուսերաձիգ մ'որ զձեզ կը
վիստէ: (Անոր ձայնը կեղծելով.) «Ի՞նչ, սա ժերօնդը չպիտի՝
զտնեմ՝ որ անոր զիսկը գետին փոեմ, մէկը չկա՞յ որ խերի
համար հասկցնէ թէ ո՞ւր կը զտնուի: (Ժերօնդի իր սովորա-
կան ձայնով.) Մի՛ շարժիք բնաւ: « իե՛սն անիծած, պիտի
զտնե՛մ, պիտի զտնե՛մ՝ եթէ զետնի տակն իսկ անցած
ըլլայ: (Ժերօնդի իր սովորական շեշտով.) Երեանիդ մի՛
զուցնէք: (Խոսակցութեան մէկ մասն կեղծած մարդունը կ'են-
քաղրուի, մնացածը՝ իրը:) « ինձ նայէ, պարկակիր մա՛րդ: »

Հրամայեցէք, պարոն։ “Քեզ ոսկի մը տամ, հասկցուք թէ ժերօնդն հիմայ ո՞ւր կրնայ ըլլալ։” Տիար ժերօնդը կը վիճա-
տոէք։ “Այո՛, խեռն անիծած, զան կը վնառեմ։” Եւ ի՞նչ բանի համար, պարոն, տիար ժերօնդը կը վնառէք։ “Ի՞նչ բանի համար։ Այո՛։ “Իե՛ռն անիծած, կ'ուղեմ գաւաղանիս տակ սատկեցնել զան։” Ո՛հ, պարոն, տիար ժերօնդի նման մէկու մը գաւաղանի հարուածներ չարուիր, ծեծուելիք մարդ չէ անիվկա։ “Ո՞վ այդ գարտա՞կ ժերօնդը, այդ անա՞րդն, այդ անպիտա՞նը։” Ներեցէ՛ք պարոն, տիար ժերօնդը ոչ գարտակէ, ոչ անարդ, եւ ոչ անպիտան։ իր վրայ այդ կերպ լեզու մը պէտք չէ՛ որ զործածէք։ “Ի՞նչ, ինձի հետ այսպէս խրոխտա-
նո՞ք խօսիս։” Ես խրոխտանօք չեմ խօսիր, պարոն, պատուա-
ւոր մէկը կը թշնամանէք։ Ես ալ կը պաշտպանեմ զան՝ ինչ-
պէս պարտքս է։ “Ի՞նչ, միթէ այդ ժերօնդին բարեկամներէ՞ն ես զուն։” Այո՛, պարոն, անոր բարեկամներէն եմ։ “Իեռն անիծած, անոր բարեկամներէ՞ն ես, կ'ըսես, հիմայ կը տես-
նես։” (Պարկին գաւազանի հարուածներ տեղացնելով) “Ահա՛,
անոր տեղ քեզ կը ծեծեմ։” (Ծեծ կերածի պէս պոռջտալով.) Ա՛հ, ա՛հ, ա՛հ, ա՛հ, ա՛հ, պարոն, ա՛հ, ա՛հ, պարոն, կամա՞ց։ Ա՛հ, մի՛ այդպէս սասափի զարնէք։ Ա՛հ, ա՛հ, ա՛հ։ “Գնա՞ր բարեւ-
ըրէ՛ իմ կողմէս, ես կ'երթամ հիմայ։” Ա՛հ, գարշելի՛ մարդ, ա՛հ, անդզա՞մ։ Ա՛հ։

ԺԵՐՕՆԴ. — (զլուխը պարկին հանելով.) Ա՛հ, Սքարէն, ջա՛րգուբուրդ եղայ, զիմանալիք կարողութիւնո չմնաց։

ՍՔԱԲԷՆ. — Հապա ե՞ս, տէր իմ, հապա ե՞ս, ողջ մէկ կողմա չմնաց, ուսերս խուրառուխաչ են։

ԺԵՐՕՆԴ. — Իմ ուսերուս զարկաւ, եւ քու ուսե՞րդ խուր-
առուխաչ կ'ըլլան։

ՍՔԱԲԷՆ. — Ոչ, տէր իմ, նա իմ ուսերուս կը զարնէր, ոչ
թէ ձերիններուն։

ԺԵՐՕՆԴ. — Պարա՞պ խօսք, հարուածները ուտողն ե՛ս եմ, եւ ցաւը կ'զգամ տակալին։

ՍՔԱԲԷՆ. — Ոչ բնաւ, գաւաղանին ծայըը միայն կը հաս-
նէր ձեր ուսերուն։

ԺԵՐՕՆԴ. — Ուրեմն քիչ մ'աւելի հեռուն երթալու էիր որ
ինձի չհասնի՞։

ՍՔԱԲԷՆ. — (ժերօնդի զլուխը նորեն պարկին մէջ խօ-
րելով.) Պահութեցէ՛ք, օտար կերպարանքով ահա ուրիշ մէկը
կուգայ։ (Հոս ալ նոյնպէս խօսակցութեան մէկ մասը կեղ-

ծուած անձինը կ'ենթադրուի, մնացածը՝ իրը.) Ի՞նչ, ամէն
կողմ վաղվուսի՞մ եւ չիրնա՞մ այդ գարշելի ժերօնդը գտնել, ո
կաւ պահուեցէ՛ք։ “Էսէ՛ նայիմ, դուն ով որ ես, չե՞ս գիտեր
Լաւ պահուեցէ՛ք։ “Էսէ՛ նայիմ, դուն ով որ ես, չե՞ս գիտեր
թէ ո՞ւր կը դտնուի սա ժերօնդը՝ զոր կը վնառեմ։” Ոչ,
թէ ո՞ւր կը դտնուի սա ժերօնդը՝ զոր կը գանուի ժերօնդ։ “Էսէ՛ հա-
պարոն, չեմ զիտեր թէ ո՞ւր կը գանուի ժերօնդ։” Միայն
մարձակ, ես մեծ չարիք չպիտի հասցնեմ իր կանկին,
երկուամսնեակ մը գաւաղանի պատիւ պիտի ընեմ իր կանկին,
եւ թուրս ալ երեք կամ չորս անդամ կուրծքին պիտի միւսն։
Կ'ըսեմ որ մէջը բան մը պիտի ըլլալ։” Ամենեւին պարոն,
կ'ըսեմ որ մէջը բան մը պիտի ըլլալ։” Ամենեւին պարոն,
սիսակ է ձեր կարծիքը, “Ներսէս կուգայ որ թուրի հարուած
մէջինը ցուցուր անկամ մը որ տեսնեմ։” Կամաց, պարոն,
հանգարանցէ՛ք։ “Ի՞նչ ըսել է հանգարանիմ։” Այս պարկին
մէջինը տեսնելին ի՞նչ օգուտ կ'ելլէ ձեզի։ “Քեզի ի՞նչ, ես
կ'ուզեմ տեսնել։” Զէ՛, չպիտի տեսնէք։ “Ի՞նչ յանդգնութիւն
է այդ։” Մէջինը ինձ վերաբերեալ զգիսակովէն է։ “Ցուցուր
է այդ։” Չեմ ցուցուներ, “Չե՞ս մի ցուցներ։” Ոչ, “Ես ալ
տեսնեմ։” Չեմ ցուցուներ, “Չե՞ս մի ցուցներ։” Ես ատանկ խօսքերէ
այս գաւաղանս կոնկիդ կ'իջեցնեմ։” Ես ատանկ խօսքերէ
չեմ վախնար, “Ի՞նչ, կարծութիւն կը ծավանս։” (Պարկին
գաւազանի հարուածներ տեղացնելով) Ա՛յ, ա՛յ, ա՛յ, պարոն, ա՛հ, ա՛հ, ա՛հ։
մէկ ձերին իմ կողմէս կ'ըլլայ։” Վահական վայրէ։
ԺԵՐՕՆԴ. — (զլուխը պարկին դուրս հանելով.) Ա՛հ, խուր-

տուխաչ եղայ, ողջ տեղու չմնաց։

ՍՔԱԲԷՆ. — Ա՛հ, մեռայ, լինցա՛յ։

ԺԵՐՕՆԴ. — Ի՞նչո՞ւ իմ կոնակին զարնեն։

ՍՔԱԲԷՆ. — (ժերօնդի զլուխը նորեն պարկին մէջ խօ-
րելով.) Ո՛հ, պահութեցէ՛ք, վեց-եօթ զինուորներու խումբ մը
լովաց։ (Մի շատ անձեռու ձայնը նմանցնելով) “Ո՞ն, աշ-
կուդայ։ (Մի շատ անձեռու ձայնը նմանցնելով) Յոզ-
խամբ գտնել սա ժերօնդը, ամէն տեղ վնառենք զան։ Յոզ-
խամբ չնենք, բոլոր քաղաքը գաւանանք։ Եւ ոչ իսկ տեղ մը
զանց ընենք, Ամէն տեղ քննենք նայինք։ Ամէն կողմ վեն-
գանց ընենք, Ամէն կողմէն, Ամէն կողմէն։” Ո՛չ ա-
ռաջի զանց պիտի երթանք։ Անկէ զանանանք։ Ոչ, ա-
ռաջի զանց պիտի երթանք։” Անկէ զանանանք։ Ո՛չ ա-
ռաջի զանց պիտի երթանք։” Անկէ զանանանք։ Ո՛չ ա-

ծառան: Օ՞ն, անպիտան, չո՞ւա ըսէ՛ մեղ, ո՞ւր է տէրդ: » Հէ՛, պարոններ, մի՛ խուէք զիս: « Օն, ըսէ՛, ո՞ւր է, խօսէ՛: Շո՛ւտ լմացնենք բանը: Շուտ ըրէ՛, չո՞ւտ: » Էհ, պարոններ, կամա՞ց, հանգարտեցէ՛ք: (Ժերօնդ կամացուկ մը զլուխը պարկեն դուրս հանելով՝ Մյարենի նենցուրինը կը հասկնայ.) « Եթէ հիմայ անմիջապէս աէրդ ո՞ւր ըլլալը չըսիս՝ լաւ մը պիտի տփենք քեզ: » Աւելի լաւ ունիմ ամէն տեսակ կոփանք քան թէ տէրս մատնել: « Քեզ պիտի սատկեցնենք: » Ինչ որ կ'ուզէք ըրէ՛ք: « Միբոդ ծեծ ուտել կ'ուզէ՛: » Բայ թէ տէրս չեմ մատներ: « Փայտին հա՞մն առնուլ կուզես ուրեմն: Ահա: » Ա՛յ: (Զարնելու պարտասարդարներ կէտին՝ Ժերօնդ պարէ՛ն ուսւըն կէլլէ: Աւբէշէ՛ն կը կանչէ:)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԶԵՐՊԻՆԵՐ, ԺԵՐՈՆՄ

ԶԵՐՊԻՒՆԵԴՐ. — (Միծաղելով, առանց ժերօնղը տեսնելու.)
Ա՞հ, ա՞հ, կ'ուզեմ քիչ մ'օդ առնուլ:

ԳԵՐՈՆԴ. - (Անկուսի՝ առանց Զերպինեղը տեսնելու .)
Կը տեսնեմ, ի՞նչպէս քթէդ կը հանեմ այս սրբիկալութիւնը :

ԶԵՐՊԻՆԵԴԻ.— (առանց մերօնդը տեսնելու.) Ա՛հ, ա՛հ, ա՛հ,
ա՛հ, ի՞նչ զուարձալի անցք է այն, ի՞նչ զիւրախաթ՝ ի՞նչ
ախմար մէկն է եղեր այդ ծերունին:

ԺԵՐՈՆԴ. — Զուարձալի բան չէ այդ, եւ ոչ ալ խնդալու :

ԶԵՐՊԻՆԵԴ. — Ի՞նչ ըստ կ'ուզէք, պարոն:

ՃԵՐՈՆԴ. — Սա՞ ըսել կ'ուզեմ թէ պէտք չէ ծաղրել զիս:
ԶԵՐՊԱՆԻԴ. — ԶՃԿԱ ծառահէ:

ԺԵՐ ԱՐԵՒՐ. - ՀԱՅ Կ ՏԱԿԻՐՈՂ
ԺԵՐՈՎՆԴԻ - ԱՐԵՎ:

$g_k f \otimes h_k h_2 = h^2 k$

ՃԵՐԾՈՒԴԻ. — ԽԱՀՈՅՈՒ կուղաք երեսս ի վար կը խնդաք ու-
բեմ:

ԶԵՐՊԻՆԵԼԴ. — Ես ձեր վրայ չեմ խնդար, պարոն, այլ ա-
մենազուարձակի անցքի մը վրայ՝ որ պատմուեցաւ ինձ։ Զեմ
գիտեր բանին մէջ շահ ունենալուս համար է, բայց կենաց

Էջ Երբեք լսած չեմ այնքան զուարձալի անցք մը քան այն
խաղը՝ զոր զաւակ միը հօրմէն ստակ փրցնելու համար պահ
մը յառաջ խաղաց իր հօրը:

ՃԵՐԾՈՒԴ. — Զաւակի մէջը հօրմէն ստակ դրցուե
առաջ մասաց խաղ խաղաց իր հօրը :

ԺԵՐՈՆԴ. — Խնդրեմ, պատմեց քայլ պահանջման վեց

ԶԵՐՊԻՆԵԿԴ. — Սիրով՝ Զայս ընկերու ոչչ զառապահ գամանակ զաղտնի մնալիք բան չէ։ Բաղդացին զանգէս ուղեց որ զնչուներու խումբի մը մէջ գտնուիմ։ զիւ տէք թէ գնչուները երկիւ կը զեգերին եւ բաղդ նայելու կ'ելլեն եւ երբեմն ուրիշ շատ բաներ ալ կ'ընեն։ Սյա քաղաքը եկած ժամանակնիս երիտասարդ մը զիս տեսնելով սիրահարեցաւ եւ ա'լ չուզեց ինձմէ հեռանալ։ ինչպէս ամէկ երիտասարդ՝ իսկզբան կարծեց նա որ ինձ քանի մը խօսք իս սելուն պէս գործը պիտի յաջողպէր։ բայց այնպիսի մեծարտութիւն մը տեսաւ իմ կողմէս՝ որ իր առջի կարծիքը շուտով փոխեց։ Զիս առաջնորդող անձանց իր սէրն հասկցուց եւ զանոնք յօժար գտաւ ստակի փոխարէն զիս իրեն յանձնելու բայց ուշն ա'յն էր որ իմ հոմանիս այն վիճակին մէջ կ գտնուէր ուր լաւ ընտանեաց զաւակներ կը գտնուին ստէկ այսինքն թէ խիստ թիթեւ էր քսակը։ Խր հայրը՝ թէպէ հարուստ՝ կծծիին մէկը, աշխարհի ամենէ վնիթի մարզը, Կեցեւ նայիմ միաքս կուզաց անոր անունը։ Օ՞ո, օգնեցէք յիշողութեանս, այս քաղաքին մէջ յետին աստիճան կծծի ճանչցու մէկու մանունը տուէք։ Զէ՞ք զիտեր այսպիսի մէկը։

Digitized by Google

ԶԵՐՊԻՆԵՐ. — Անունին մէջ ըստ . . . բռնկ և լուրջ անունին մէջ մէկ . . . ժերօնդ: Այսուհետեւ ժերօնդ անունածածք անունը՝ զոր վերջապէս գտայց այդ մեծ կծծիկն վրայ աղանձիս անունը՝ զոր վերջապէս գտայց այդ մեծ կծծիկն վրայ կը խօսիմ: Մեր պատմութեան զալով՝ զիս բերող խումբն ու զից այսօր այս քաղքէն մէկնիւ եւ իմ տարիածուս ստակ չունենալուն պիտի կորսնցնէլ զիս՝ եթէ իր մէկ ծառային վարպետութեանն իրեն օգնութեան չհասնէր: Այդ ծառայինն անունը խիստ քաջ կը յիշեմ Սքարէն է, անհնման մէկը՝ զոր ոռորան զովիս՝ քիչ է:

ՃկունԴ. - (Ակլուսի.) Ս. անզգամ

ԶԵՐՊԻՆԵՐ. — Ահա մարզուկը խարելու համար բանեցուցած հնարքը: Ա՛հ, ա՛հ, ա՛հ, ա՛հ: Ամէն անդամ որ միտքս գայ՝ բոլոր սրտովս կը խնդամ: Ա՛հ, ա՛հ, ա՛հ, ա՛հ: Գնաց մեր փնթին գտաւ: ա՛հ, ա՛հ, ա՛հ, եւ ըստաւ անոր թէ հաւահանդատին վրայ իր դաւկին հետ պտտած միջոցին, հի՛, հի՛, ցոկանաւ մը տեսեր՝ ու հրաւիրուեր են մէջը մանելու: Երիտասարդ մը ճաշ հաներ է իրենց: ա՛հ, կերակուրի ատեն ցոկանաւը ճամբայ հաներ են, եւ մարդն ալ մակոյկով մը զինք քաղաք խրկեր է որպէս զի իր ափրոջը հօրը ըսէ որ եթէ անմիջապէս չորս հարիւր ոսկի չնրկէր՝ ի միասին պիտի առնուր տանէր իր որդին: Ա՛հ, ա՛հ, ա՛հ: Սոսկալի հնանուքի մէջ կ'իյնայ մեր կծծին, մեր փնթին, ծնօղական սէրը ահազին պայքար մը կ'մղէ իր անտանելի ագանութեան հետ: Պահանջուած չորս հարիւր ոսկին չորս հարիւր գաշոյն էր՝ որ կը մխուր իր որտին մէջ: Ա՛հ, ա՛հ, ա՛հ, ա՛հ: Այս զումարը քասկէն հանելու որոշում չկրնար ընել, այդ բանն այնքան ցաւ կը պտտնառէ իր սրտին՝ որ զաւակն ազատելու համար հազար կերպ ծաղրելի միջոցներ կը մտածէ: Դատաւորները կ'ուղէ բաց ծովը խրկել՝ ցոկանաւին ետեւէն: Ա՛հ, ա՛հ, ա՛հ: կ'աղաչէ իր ծառային որ երթայ պատանդ մնայ իր զաւկին տեղ՝ մինչեւ որ տալու միտք չունեցած զումարը պատրաստուի: Ա՛հ, ա՛հ, ա՛հ: Այդ չորս հարիւր ոսկին զոյացնելու համար կ'ուղէ չորս-հինգ հինումին հաղուստներ յանձնել՝ որք չորս ոսկի անդամ չնն բոներ: Ա՛հ, ա՛հ, ա՛հ: Ծառան ամեն անդամ եղած առաջարկութեանց անհեթեթութիւնը կը հասկցնէ անոր, եւ իր մէն մի զիտոզութիւնը « Այլ ի՞նչու ցոկանաւը երթար, ա՛խ, անիծեալ ցոկանաւ, ա՛խ անդզամ՝ աւաղակ» մորմոքալի բացադարձութեան շարժառիթ կ'ըլլայ: Վերջապէս մէկ շատ զարձուածներէ՝ երկար ողբերէ եւ հեծեծանքներէ ետք . . . այլ կը տեսնեմ թէ պատմութեանս վրայ չէք ծիծաղիր, զուք այս բանիս ի՞նչ կ'ըսէք:

ՃԵՐԾՈՆԴ. — Կ'ըսեմ թէ երիտասարդը ոչուփուճ լիբրին մէկն է որ իր խաղցած անդզամ խազիմ պատիմը իր հօրմէն պիտի ընդունի, թէ գնչուեին թեթեւսոլիկ յիմարին մէկն է որ պատուաւոր մէկու մը թշնամանքներ կ'ընէ, եւ որ պիտի սորմի ընտանիքի գաւակ մը զմակ հանելն ի՞նչպէս կ'ըլլայ: Կամ ծառան ազիրատ մ'որ այսօր զիշեր չեղած ժերօնղի ճեռ քով կախաղան պիտի ելլէ:

ՏԵՍԱՐԱՆ Դ.**ԶԵՐՊԻՆԵՐ,** ԿԻՐԱԿՈՅ

ԿԻՐԱԿՈՅ. — Ո՞ւր այգուէս կը փախչիք, օրիորդ՝ գիտէ՞ք թէ այս մարզը՝ որու հետ կը խօսէիք, ձեր սիրահարին հայրն է:

ԶԵՐՊԻՆԵՐ. — Այգուէս ըլլալը իմ ալ մտքէս անցաւ: Առանց զիտանալու իր պատմութիւնը իրենի չպատճե՞մ մի:

ԿԻՐԱԿՈՅ. — Ի՞նչ կ'ըսէք, իր պատմութի՞ւնը պատմեցիք իրեն:

ԶԵՐՊԻՆԵՐ. — Այսո՛, այնքան խելքս առած էր՝ որ դայն պատմելու համար եռուենի կ'ելլէի: Այլ ի՞նչ փոյթս: Քարը զլուխը, մեր դործն անով ո՛չ կը շտկուի, ո՛չ կ'աւրուի:

ԿԻՐԱԿՈՅ. — Շատիսոսութեան մարմաջ կ'զգայիք: Իր գործերուն վրայ լուսութիւն չպահելու համար պէտք է մէկը չպահանց թրթուակ լեղու մ'ունենայ:

ԶԵՐՊԻՆԵՐ. — Եթէ ես չխօսէի՝ որիշէն չպիտի՝ լոէք:

ՏԵՍԱՐԱՆ Ե.**ԱՐԿԱՆԴ,** ԶԵՐՊԻՆԵՐ, ԿԻՐԱԿՈՅ

ԱՐԿԱՆԴ. — (Տեսարանի ետևուն.) Է՛յ, ծօ՛, կիրակու: Կիրակոյ. — (Զերպիների.) Դուք տուն զացէք, տէրս ինձ կը կանչէ:

ՏԵՍԱՐԱՆ Զ.**ԱՐԿԱՆԴ,** ԿԻՐԱԿՈՅ

ԱՐԿԱՆԴ. — Այսպէս ուրեմն երեք անպիտաններ, Աքարէն զուն եւ որդիս, խօսք մէկ ըրիք նենդութեամբ զիս խարելու համար:

ԿԻՐԱԿՈՅ. — Եթէ Աքարէն զձեղ կը խարէ նենդութեամբ: Ես անպարտ եմ, տէր իմ, ես զործին մէջ մատ չունիմ բնաւ:

ԱՐԿԱՆԴ. — Պիտի տեսնենք այդ գործը, թշուառական, պիտի տեսնենք այդ գործը, ևս այնպէս խարուող մարդ չկմ:

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԺԵՐՈՆԴ., ԱՐԿԱՆԴ., ԿԻՐԱԿՈՅ

ԺԵՐՈՆԴ. — Ա՛հ, տիար Արկանդ, ամենամեծ ձախորդութեան մէջ կը գտնուիմ:

ԱՐԿԱՆԴ. — Ես ալ նկուն՝ բեկուն վիճակի մէջ եմ:

ԺԵՐՈՆԴ. — Անօրէն Սքաբէնը նենդութեամբ չո՛րս հարիւր ոսկիս յափշտակէ:

ԱՐԿԱՆԴ. — Մի եւ նոյն անօրէն Սքաբէնը նոյնպէս նենդութեամբ իմ ալ հինգ հարիւր ոսկիս զողցաւ:

ԺԵՐՈՆԴ. — Զորս հարիւր ոսկիս յափշտակէ զատ՝ այնպիսի վարմութեանը մ'ունեցաւ որ կ'ամշնամ զրուցել, այլ այս ամէնը քթէն պիտի հանեմ:

ԱՐԿԱՆԴ. — Կ'ուզեմ որ ինձ խաղցած խաղին պատիժը գտնէ:

ԺԵՐՈՆԴ. — Միտքս զրած եմ անմոռանալի վրէժ մը լուծել իրմէ:

ԿԻՐԱԿՈՅ. — (Անկուսի.) Տա՛ր Աստուած որ այս բաներուն մէջ ես ալ բաժին չունենայի:

ԺԵՐՈՆԴ. — Բայց ձախորդութիւնս այս չէ միայն, տիար Արկանդ, գժբաղգութեան մ'ետեւէն ուրիշ մ'ալ կը համնի: Այսօր կը բերկրէի այս յուսով թէ աղջիկս պիտի գար որու վրայ զրած էի իմ բոլոր միսիթարութիւնս, եւ հիմայ իմ մարդէս կ'իմանամ թէ վաղուց մելիներ է թարէնթէ, ուր այնպէս կ'ըսուի եղեր որ ծովակուլ եղած ըլլայ հեծած նաւուն հետ:

ԱՐԿԱՆԴ. — Այլ ըսէք, կ'աղաչեմ, տիար ժերօնդ, ինչո՞ւ թարէնթ պահէք զան, եւ ձեր քովին ունենալու ուրախութիւնը չվայելէք:

ԺԵՐՈՆԴ. — Այզպէս ընելու համար իմ պատճառներս ունէի, ընաանեկան շահեր զիս մինչեւ հիմայ հարկադրեցին այս երկրորդ ամուսնութիւնը դադանի պահելու: Այլ ի՞նչ կը տեսնեմ:

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԱՐԿԱՆԴ., ԺԵՐՈՆԴ., ՆԵՏԻՆ, ԿԻՐԱԿՈՅ

ԺԵՐՈՆԴ. — Ո՛հ, գուն եկե՞ր ես, նէտին:
ՆԵՏԻՆ. — (Ժերօնդի ծնկըուներուն վարելով.) Ա՛հ, տիար բանտօլիք . . .

ԺԵՐՈՆԴ. — Ա՛լ այդ անունը մի՛ տար, ժերօնդ կոչէ զիս:
այն պատճառներն՝ որք զիս ստիպած էին թարէնթի մէջ
այզպէս անուանուելու՝ զոյութիւն չունին ա՛լ:

ՆԵՏԻՆ. — Ափո՞ս, անուան այս փոփոխութիւնը զձեղ
գալ գանելու գործին մէջ ո՛րչափ հնանուքի եւ ո՛րչափ նե-

դութեանց պատճառը եւ առիթ եղաւ:

ԺԵՐՈՆԴ. — Աղջիկս ու կինս ո՞ւր են:
ՆԵՏԻՆ. — Ձեր աղջիկը հեռուն չէ, տէր իմ, այլ զայն
ձեր առջեւ հանելէ յառաջ բանի մը համար պէտք է ձեղմէ

թողութիւն խնդրեմ. գովք բացակայ մեր լքուն վիճակին
մէջ զան ամուսնացուցի:

ԺԵՐՈՆԴ. — Ի՞նչ, աղջիկս ամուսնացա՞ւ:

ՆԵՏԻՆ. — Այս, տէր իմ:

ԺԵՐՈՆԴ. — Որո՞ւ հետ:

ՆԵՏԻՆ. — Օքավ անուն երիտասարդի մը հետ՝ որդի տիար
Արկանդ կոչուած մէկու մը:

ԺԵՐՈՆԴ. — Ի՞նչ հրաշք, տէր Աստուած:

ԱՐԿԱՆԴ. — Ի՞նչ հանգիպոււմ:

ԺԵՐՈՆԴ. — Շո՞ւտ, իր քովը տար, իր քովը տա՛ր զմեղ:

ՆԵՏԻՆ. — Այս տունս մտէ՛ք, հոն է:

ԺԵՐՈՆԴ. — Առջեւնէս քալէ՛, զուք ալ հետս եկէք,
տիար Արկանդ:

ԿԻՐԱԿՈՅ. — (առանձին.) Իրաւ որ դարմանալի պա-

տահար:

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՍՔԱՐԵՆ, ԿԻՐԱԿՈՅ

ՍՔԱՐԵՆ. — Ե՞ս, ի՞նչ լուր, Կիրակոս, ի՞նչ կ'ընեն մեր
մարդիկը:

ԿիրԱԿՈՍ. — Երկու լուր քեզի, մէկը՝ թէ Օքդավի գործը շտկուած է, մեր Հիասինդը տիար Ժերօնդի աղջիկն է եղեր, եւ ինչ որ ծերունի հայրենին խորհած էին՝ բաղդը զայն զլուս հանեց։ Միւս լուրն այն է թէ երկու ալեւորները սոսկալի սպառնալիքներ կ'ընեն քեզ դէմ, եւ մանաւանդ տիար ժերօնդ։

ՍՔԱԲԷՆ. — Այդ բան մը չէ, ես սպառնալիքներէ վնաս մը տեսած չեմ, այնպիսի ամպեր են անոնք՝ որք մեր զլիսուն վրայ խիստ հեռուէն կ'անցնին։

ԿիրԱԿՈՍ. — Աչքդ չորս բա՛ց, Սքաբէն, զաւակները կը բնան իրենց հայրերուն հետ հաշտուիլ եւ զքեզ մէջանեղը ձգել։

ՍՔԱԲԷՆ. — Դուն անհոգ եղի՛ր, ես կրնամ անոնց բարկութիւնն եջեցնել եւ . . .

ԿիրԱԿՈՍ. — Հեռացի՛ր տոկէ, ահա կուգան։

ՏԵՍԱՐԱՆ Ճ.

ԺԵՐՈՆԴ, ԱՐԿԱՆԴ, ՀԻԱՄԻՆԴ, ԶԵՐՊԻՆԵԴ, ՆԵՑԻՆ,
ԿիրԱԿՈՍ

ԺԵՐՈՆԴ. — Հապա՛, աղջիկս, տունս եկուր, եթէ մայրդ ալ կարող ըւլայի հոն զանել՝ ուրախութիւնս կատարեալ պիտի ըւլար։

ԱՐԿԱՆԴ. — Ահա Օքդավը խիստ յարմար ժամանակին կուղայ։

ՏԵՍԱՐԱՆ ՃԱ.

ԱՐԿԱՆԴ, ԺԵՐՈՆԴ, ՕԲԴԱՎ, ՀԻԱՄԻՆԴ, ԶԵՐՊԻՆԵԴ,
ՆԵՑԻՆ, ԿիրԱԿՈՍ

ԱՐԿԱՆԴ. — Եկուր զաւակս, եկուր մեղ հետ ուրախացի՛ր քու բարեբաստիկ ամուսնութեանդ համար։ Աստուած . . .

ՕԲԴԱՎ. — Ոչ, հայր իմ, ձեր ամուսնական առաջարկներն օգուտ մը չունին։ Դիմակը պէտք է որ վար առնում, արդէն կնքած ամուսնութեանս վրայօք խօսուած է ձեզի։

ԱՐԿԱՆԴ. — Այս՛, այլ չես զիտեր . . .

ՕԲԴԱՎ. — Իմ զիտցածս զիտեմ ես։

ԱՐԿԱՆԴ. — Հսել կ'ուղեմ թէ տիար Ժերօնդի աղջիկը . . .

ՕԲԴԱՎ. — Ես տիար Ժերօնդի աղջկան հետ գործ չունիմ։ ԺԵՐՕՆԴ. — Այն աղջիկն է զոր . . .

ՕԲԴԱՎ. — (Ժերօնդի) Ո՛չ, պարոն, ներում կը խնդրեմ, ես իմ որոշումս ըրա՛ծ եմ։

ԿիրԱԿՈՍ. — (Օֆդավի) Մտիկ ըրէք . . .

ՕԲԴԱՎ. — Ո՛չ, ձայնդ քաշէ, ես բան մտիկ չեմ ըներ։ ԱՐԿԱՆԴ. — (Օֆդավի) Կինդ . . .

ՕԲԴԱՎ. — Ո՛չ, հայր իմ, ոչ, ես կը մնոնիմ եւ իմ սիրական Հիասինդս չեմ թողուր, (Հիասինդի յով երթալու համար քեմը կտրել անցնելով) Այս՛, ինչ ընէք օգուտ չունի, ահա այն աղջիկը որու խօսքս տուած եմ։ Մինչ ցմահ պիտի սիրեմ զինք, ես ուրիշ կին չեմ ուղեր։

ԱՐԿԱՆԴ. — Է՛հ, մտիկ ըրէ՛, քեզ ալ տրուածը ճիշդ այդ աղջիկն է։ Ի՞նչ անխորհուրդ ընթացք որ եր ըսածը կը բռնէ կ'երթայ եւ խօսք անդամ չուղեր լսել։

ՀԻԱՄԻՆԴ. — (Ժերօնդը ցուցնելով) Այս՛, Օքդավ, ահա հայրս՝ զոր զտայ, մեր հնհնուքները վերջացան։

ԺԵՐՕՆԴ. — Տունս երթա՛նք, հոն աւելի հանդիստ կրնամնք խօսակցիւ։

ՀԻԱՄԻՆԴ. — (Զերպինեդը ցուցնելով) Ո՛հ, հայր իմ, իրը չնորհ կը խնդրեմ ձեզմէ որ սա սիրուն օրիորդէն չբաժնուիմ։ Արթանիքի տէր աղջիկ մ'է եւ կը լաւ մը ճանչնաք, իր վրայ ձեր համարումը պիտի աւելնայ։

ԺԵՐՕՆԴ. — Ի՞նչ, կուզես որ տո՞ւնս պահեմ եղօրդ այդ սիրուհին՝ որ պահ մը յառաջ այնքան ափեղցիեղ բաներ խօսցաւ երեսիս։

ԶԵՐՊԻՆԵԴ. — Պարո՛ն, խնդրեմ որ ներէք ինձ, եթէ զիտնայի որ զուք էք՝ անշուշտ այդ կերպ չէի խօսեր, անունով միայն կը ճանչէի զձեղ։

ԺԵՐՕՆԴ. — Ի՞նչպէս, անունով միայն։

ՀԻԱՄԻՆԴ. — Հայր իմ, եղածոս սէրը օրինաւոր սէր մ'է, եւ ես այս աղջկան առաքինութիւնը կ'եղաշխաւորեմ։

ԺԵՐՕՆԴ. — Եփակը աղուո՞ր խօսք, ի՞նչ ելլեմ տղայ կարգիմ այդ օրիորդին հետ, անձանօթ աղջիկ մը վարքը կասկածելի։

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ԱՐԿԱՆԴ, ԺԵՐՈՆԴ, ԼԵԱՆՏԻ, ՕԲԴԱՎ, ՀԻՍՈՒՆԴ,
ԶԵՐՊԻՆԵԴ, ՆԵՑԻՆ, ԿԻՐԱԿՈՍ

Եղիսաբետ
ԱԲԱՆՏԻ. — Հայր իմ, մի՛ գանգատիք թէ անձանօթ աղջիկ
մը կը սիրեմ՝ անտոնմ եւ անինչ. իրեն ընկերացող խումբը՝
որմէ ծախու՝ առի զան, եկան ըսին թէ այս քաղաքէս պար-
կեշտ ընտանիքի մը զաւակ է եղեր՝ զոր չորս տարեկան
հասակին մէջ գողցեր են. ապարանջան մ'ալ տուին որու
միջոցաւ կընանք իր ծնողքը դտնել:

ԱԲԿԱՆԴ. — Աւա՛ղ, այս ապարանջանը քննելով՝ իմ աղ-
ջիկս է Զերպինէդ. ճշմարիտ է, այդ ըսուած տարիքին մէջ
կորուսի զան:

ԺԵՐՈՆԴ. — Զեր աղջիկը մի:

ԱԲԿԱՆԴ. — Այս՝ իմ աղջիկս, եւ իր բոլոր դիմադերը կը
հաւասառեն թէ իրօք ա՛ն է:

ՀԻՍՈՒՆԴ. — Տէ՛ր Աստուած, ի՞նչ երկնահրաշ պատա-
հարներ են ասոնք:

ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

ԱՐԿԱՆԴ, ԺԵՐՈՆԴ, ԼԵԱՆՏԻ, ՕԲԴԱՎ, ՀԻՍՈՒՆԴ,
ԶԵՐՊԻՆԵԴ, ՆԵՑԻՆ, ԿԻՐԱԿՈՍ, ՔԱՐԵ

ՔԱՐԵ. — Ա՛ն, պարոններ, ճանք արկած մը պատահեցաւ:
ԿԻՐԱԿՈՍ. — Ի՞նչ արկած:

ՔԱՐԵ. — Իե՛ղձ Սքարէնը . . . :

ԺԵՐՈՆԴ. — Իեղձ Սքարէնը մի, անզգամ թշուառականին
մէկն է՝ զոր կախել պիտի տամ:

ՔԱՐԵ. — Ափառ'ս, այդ նեղութիւնը չպիտի ունենաք,
պարօն: Շէնքի մ'առջեւէն անցած միջոցին քարակոփի ծանր
մուրճ մը դիմուն ինկաւ եւ անոր գանկը ջախջախելով բոլոր
ուղեղը զուրս թափեց, մահամերձ վիճակի մէջ աղաչեց որ
հոս բերուի մեռնելէ յառաջ ձեզի հետ խօսելու համար:

ԱԲԿԱՆԴ. — Ո՞ւր է:

ՔԱՐԵ. — Ահա:

ՏԵՍԱՐԱՆ ԺԴ.

ԱՐԿԱՆԴ, ԺԵՐՈՆԴ, ԼԵԱՆՏԻ, ՕԲԴԱՎ, ՀԻՍՈՒՆԴ,
ԶԵՐՊԻՆԵԴ, ՆԵՑԻՆ, ՍՔԱՐԵ, ԿԻՐԱԿՈՍ, ՔԱՐԵ

ԱԲԱՆՏԻ. — (զոր երկու մարդիկ կը բերեն իբր վիրաւոր
զույխը կտաւ ներով պատառուած.) Ահի՛, ահի՛, պարոններ, կը
տեսնէք զիս . . . ահի՛, շատ զէշ վիճակի մէջ կը գանուիմ:
Ահի՛, Ուզեցի որ մեռնելէ յառաջ զամ թողութիւն ինդրեմ
այն ամէն անձերէն՝ զորս կրնամ վշտացուցած ըլլալ: Ահի՛:
Այս՝ պարոններ, յետին չունչս տակաւին չաւանդած՝ կը
Այս՝ պաղատիմ ի բոլոր սրտէ որ բոլոր ըլլածներուս համար ներէք
ներում կը խնդրեմ:

ԱԲԿԱՆԴ. — Իմ մասիս կը ներեմ քեզ, մեռի՛ր հոգւոյ

Խաղաղութեամբ:

ՄԲԱԲԷՆ. — (Ժերօնիմ) Զձեզ, տիար Ժերօնդ, զձեզ ա-
մենէ աւելի վշտացուցի գաւաղանի հարուածներով՝ զոր . . . :

ԺԵՐՈՆԴ. — Է՛հ, մի՛ երկնցներ խօսքը, ես ալ կը ներեմ:

ՄԲԱԲԷՆ. — Իմ կողմէս ամենամեծ յանդղութիւն էր այն

գաւաղանի հարուածները՝ զոր . . . :

ԺԵՐՈՆԴ. — Բաւակա՞ն է:

ՄԲԱԲԷՆ. — Մասուան կէտիս անհնարին վիշտ կ'զգամ այն
գաւաղանի հարուածներուն համար՝ զոր . . . :

ԺԵՐՈՆԴ. — Է՛հ, ա՛լ լոէ՛, Սքարէն:

ՄԲԱԲԷՆ. — Այս անպիտան գաւաղանի հարուածները՝ զոր

ես ձեզի . . . :

ԺԵՐՈՆԴ. — Է՛հ, ըստ, ես մոոցայ ամէն բան:

ՄԲԱԲԷՆ. — Ո՛քան աղնիւ՝ ո՛քան բարի էք, տիար
Ժերօնդ, այլ իրաւ ի բոլոր սրտէ ներհցի, ա՛լ ի խօսքը
հարուածները՝ զոր . . . :

ԺԵՐՈՆԴ. — Է՛հ, ներեցի, ի բոլոր սրտէ ներհցի, ա՛լ ի խօսքը

չընե՞նք, ներեցի, կը լսե՞ս, լմեցու ա՛լ:

ՄԲԱԲԷՆ. — Ո՛հ, տիար Ժերօնդ, ձեր այս խօսքին վրայ
սիրաս թեթեցաւ:

ԺԵՐՈՆԴ. — Այս՝, կը ներեմ պայմանաւ որ սիրտի մեռնի՛ս:


ՄԲԱԲԷՆ. — Ի՞նչպէս ըսիզ, տիար Ժերօնդ,

ԺԵՐՕՆԴ. — Խոսքս ետ կ'առնում, եթէ փորձանքէն պլծիս։
 ԱՐԱԲԻՆ. — Ահի՛, ահի՛, ահա ցաւերս նորէն բռնեցին։
 ԱՐԿԱՆԴ. — Տիտր ժերօնդ, այս մեր ուրախութեան սիրոյն
 պէտք է որ անպայման կերպիւ ներէք իրեն։
 ԺԵՐՕՆԴ. — Է՛հ, թող այդպէս ըլլայ։
 ԱՐԿԱՆԴ. — Երթա՛նք, միասին ճաշենք՝ մեր ուրախու-
 թիւնը լաւ մը վայելելու համար։
 ԱՔԱԲԻՆ. — Զիս ալ մինչեւ որ մեռնելուս ժամն հասնի՛
 տարէք սեղանին ճօթը նստեցուցէք։

ԿԱՐԴԱՑՈՂ ԿԻՆԵՐ

(LES FEMMES SAVANTES)

ԿԱՏԱԿԵՐԳ ՀԻՆԳ ԱՐԱՐԹՈՎ



ԱՆՁԻՆՔ

—:0002—

ՔՐԻԶԱԼ	Բարեւմիտ քաղբենի:
ՖԻԼԱՄԵՆԴ	Կիև Քրիզալի:
ԱՐՄԱՆՏ ՀԱՆՐԻԷԴ	Քրիզալի և Ֆիլամենդի ազգիկներ:
ԱՐԻՍԴ	Եղրայր Քրիզալի:
ԹԵԼԻԶ	Քոյր Քրիզալի:
ՔԼԻԴԱՆՏՐ	Սիրահար Հանրիկի:
ԹՐԻՍՈԴԻՆ	Գրագետ:
ՎԱՏԻՈՒՍ	Գիտնական:
ՄԱՐԴԻՆ	Խոհանոցի սպառչնի:
ԼԵԲԻՆ	Սպասաւոր:
ԺԻԼԻԷՆ	Եառայ Վատիուսի:
ՆՕՏԱՐ ՄԸ	

ՏԵՍԱՐՈՒՆ Է Ի ԹԱՐԻԶ ԳՐԻԶՈՒՆԻ ՏՈՒՆԸ



ԱՐԱՐՔ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԱՐՄԱՆՏ, ՀԱՆՐԻԷԴ

ԱՐՄԱՆՏ.— Ի՞նչ, քոյր իմ, աղջկութեան գեղեցիկ անունը բանի տեղ չդնելով՝ կ'ուզես հրաժարի՞ւ անոր սիրալի քաղցրութենէն, եւ կը համարձակիս ուրախասիթ բան մը սեպել ամուսնութիւնը՝ ի՞նչ, խօսեք կուտաս այդպիսի զոհիկ մէկ խորհուրդի:

ՀԱՆՐԻԷԴ.՝ Այսո', քոյր,

ԱՐՄԱՆՏ.— Ո՞հ, կարելի՞ է միթէ հանդուրժել այդ այս՝

ին, կարելի՞ է միթէ առանց զզուանքի լսել այդ այս՝

ՀԱՆՐԻԷԴ.՝ Եւ ամուսնութիւնն ի՞նչ ունի իր մէջ, քոյր

իմ, որ . . . :

ԱՐՄԱՆՏ.՝ Բո՛ւհ, զզուանք:

ՀԱՆՐԻԷԴ.՝ Ի՞նչ խօսք է ադ!

ԱՐՄԱՆՏ.՝ Բո՛ւհ կըսեմ. չե՞ս հասկնար, քոյր, որ այդ ամուսնութիւն բառին արտաքերուի՛լը միայն ո՛րքան խորշում կ'աղջէ սրտի. ի՞նչ վիրաւորիչ այլանդակ պատկեր լ'ընծայէ մարդուս մոքին, ուր աղտեղի տեսիլ մը կը բարուցանէ միայն. Այդ պիղծ բառէն չե՞ս գարշիր, չե՞ս սարսուիր, քոյր, եւ կընա՞ս սիրտդ համակերպել անոր հետեւանքներուն:

ՀԱՅԻՐԻՔԴ. — Ամուսնութիւն բառին հետեւանքները աչքիս առջեւ բերած ատեն՝ կը տեսնեմ ամուսին մը, զաւակներ, ընտանիք, եւ եթէ զատողութիւնս ուղիղ է՝ չկայ բան մ'ահոր մէջ որ միտք վիրաւորէ եւ սարսուս աղդէ սրտի:

ԱՐՄԱՆԾ. — ի՞նչ, Աստուած իմ, համով, ախորժելի բա՛ն կը սեպես սրտի այդ տեսակ ստորին կապեր:

ՀԱՅԻՐԻՔԴ. — Եւ իմ տարիքիս մէջ աղջիկ մ'ի՞նչ լաւագոյն բան կը նայ լինել՝ բայց եթէ իրը ամուսին իրեն միացնել մարդ մ'որ կը սիրէ զինք եւ ինքն ալ իր կողմէ սիրելի է իրեն, եւ սիրոյ հետեւանք եղող այս միութեամբ անմեղ կհանաքի մը քաղցրութիւնները վայելի: Քաջայարմար ամուսնութիւն մը հրապոյներ չունի՞ ուրիշն գու աչքիդ:

ԱՐՄԱՆԾ. — Տէ ը իմ Աստուած, ի՞նչ գոեհիկ միտք եւ անարդ մտածուներ են ատոնք: Աշխարհի մէջ ի՞նչ դուզնաքեայ, ի՞նչ փանաքի զեր մը կատարել է ընտանեկան ողորմելի կեանքի մէջ փակուլ բանտարկուիլ, եւ իրը կուռք պաշտուած ամուսնէ մը եւ անհի ծնած լակուններէ աւելի բարձր հաճոյք եւ միխթարութիւն չկրնալ ըմբռնել: Այս տեսակ կեանքի մ'ստորին զուարձութիւնները թանձր զգացմանց տէր գոեհիկ անձերու թո՞ղ, քոյր իմ, բարձրացո՞ւր սրտիկ իդան ու թսիչն աւելի վաեմ բաններու, սկսէ՝ ազնիւ հաճոյքներէ միայն ճաշակ առնուլ, եւ առ ոչինչ զրելով նիւթ եւ զգայարանը՝ մտաւոր կեանքի նուիրուէ՝ մեղ նման: Սոյնեւզ օրինակ ունիս մեր մայրը՝ որ ամէն տեղ յարգ եւ պատիւ ունի իրը ուսունական, ինձ նման աշխատէ՝ արժանի զաւակ ըլլալ անոր, եղի՛ր տենչացող մեր ընտանիքին բաժին եղող աղնուացուցիչ հմտութեանց, եւ ճանչցի՛ր վերջապէս այն քաղցր հեշտութիւններ՝ զոր ուսման եւ զիտութեան սէրը կը հեղու մարդուս սրտին մէջ: Ամուսնոյ մը կամքին գերի ըլլալու աեղ՝ փիլիսոփայութեան հետ ամուսնացի՛ր՝ որ մարդկային աղդէ վե՛ր կը բարձրացնէ զմեղ, եւ զերազոյն իշխանութիւնը մտքի՛ ընծայելով՝ անոր հրամանին կ'ենթարկէ իր թանձր բերմունքներով զմեղ կհնդանեաց հաւասարեցնող անամսնական մասը բարձր խանգեր, վեհանոյշ յափշտակութիւններ, ասո՞նք պէտք է զրաւեն մեր կեանքի բոլոր վայրկեանները: Զգայնու կիններու արարած սնոտի հոգերն ու խնամքները պարզապէս խեղճ ու ողորմելի զբաղումներ կ'երեւին իմ աչքիս:

ՀԱՅԻՐԻՔԴ. — Ես այդպէս չեմ մտածեր: Աստուած իր իւմաստուն տնօրէնութեամբ՝ ծնած ժամանակնիս տալրեր տարբեր պաշտօններու յատկացուցած է զմեղ, եւ ամէն տարբեր պաշտօններու յատկութիւններով չէ օժտուած: մէկը փիլիսոփայ ըլլալու յատկութիւններով չէ օժտուած: Եթէ քու միտք, քոյր, այն վեհ մտածումներու սահմանուած եւ կը բարձրանան գիտնականներու հայեցողութիւնք, է՛ս ուր կը բարձրանան գիտնականներու համար ծնած՝ իմ ընդհակառակն հետեւակ գաղափարներու համար ծնած՝ մանր հոգերու ու ինհամքներու մէջ կ'ամփոխուի համեսմանը հոգերու ու ինհամքներուն անօրէնութեանց տօրէն: Ուստի սուանց երկնային իմաստուն տնօրէնութեանց խանգարիչ հանդիսանալու՝ պարզապէս մեր անձնական խանգարիչ դուն բարձր ու վաեմ հանձնարի մը բնազններուն հետեւի՞նք: Դուն բարձր ու վաեմ հանձնարի մը թոփով փիլիսոփայութեան վերնագաւառները սաւառնէ՛, մինչ թոփով փիլիսոփայութեան մարմնաւոր քաղցրութիւնները միտքս ամուսնութեան մարմնաւոր քաղցրութիւնները կ'ուղէ ճաշակել: Այսպէս մեր զնացից մէջ իրար թիւնները կ'ուղէ ճաշակել: Արինակին հետեւած պիտի հակառակ՝ երկուքս ալ մեր մօր օրինակին հետեւած կողմէ, ըլլանք: Դուն հոգւոյ եւ ազնուալսոն տեհչանքներու կողմէ, գուն ես ալ զգայարանքներու եւ երկրաւոր հածոյից կողմէ, գուն մտքի եւ հմտութեան արագորութեանց պիտի նուիրես ինքնագոյք, իսկ ես հողեղէն երկրային բաններու:

ԱՐՄԱՆԾ. — Քոյր, երբ մէկու օրինակին հետեւիլ կ'ուղես՝ անոր ընտիր կողմերէն պէտք է նմաններու աշխատիլ: անոր պէտի ընտիր կողմերէն պէտք է նուիրես կողմէ, զիտցի՛ր պէտի նաղալն ու թքնելն՝ զայն օրինակ առնուլ չէ, զիտցի՛ր պէտի հաղարին ու թքնելն՝ զայն օրինակ առնուլ չէ:

ՀԱՅԻՐԻՔԴ. — Բայց զուն այսօր եղածիդ վրայ չզիտի պարձէր՝ եթէ մեր մայրը այդ զերիվեր կողմերուն միայն հետեւող ծէրի՝ եթէ մեր մայրը այդ զերիվեր կողմերուն միայն հետեւող ծէրի՝ մեր մայր կամակութենէն, այլ ըսէ՛ նայիմ զր՞կ պիտի ընտրես: միտք զէթ Քիլիդանարն առնուլ չէ, կը յուսամ:

ՀԱՅԻՐԻՔԴ. — Եւ ինչո՞ւ միտքս Քիլիդանարն առնուլ չըլլալոյ, միթէ արժանիք չունի՞ նա, միթէ անպատճն ընտրութի՞ւն մ'է ըրածս:

ԱՐՄԱՆԾ. — Ո՛չ, այլ անլայել խորհուրդ մ'է ուրիշն

սիրողը ձեռքէն յափշտակել, աշխարհ արարած գիտէ թէ Քիւ-
դանտը սիրահար մ'է ինձ:

ՀԱՆՐԻՒՔԻ. — Այս՝, այլ իր սիրահարական բոլոր յայտաբարութիւններն ի գերեւ ելած են, այն պատճառաւ որ զուներկը քարչ բաներու խելք չես տար, եւ վիլխոսփայութեանդ հետամուտ՝ յաւիտեան ձեռք քաշած ես ամուսնութենէ, ուստի քանի որ աչք չունիս Քիլիգանտրի՝ քեզ ի՞նչ փոյթ, կը հարցնեմ, որ ուրիշ մը կարգուիլ ուղէ անոր հետ:

ԱՐՄԱՆՏ. — Այս իշխանութիւնը՝ զոր միտքը զդայարանք-ներու վրայ ի գործ կը դնէ, քաղցրանոյշ զովանքները չփոտքեր, եւ աղջիկ մը կրնայ արժանեաց տէր մէկը մերճել իբր ամուսին, եւ սակայն պահել զան միշտ իբր պաշտող սիրահար.

ՀԱՆՐԻՔԴ. — Ես արգելք չեղայ որ նա հրապոյրներուդ շարունակէ իր մեծարանքները, այլ երբ դուն մերժեցիր իր սիրոյ արտայայտութիւնները, ես պարզապէս ընդունեցայ դանոնք:

ԱՐՄԱՆԾ. — Այլ ի՞նչպէս կընաս վատահիլ գժկամակ սիրահարի մը սրանեղած յայտարարութեանց, կը կարծե՞ս որ ուռաչքիդ յօնքիդ իրապէս զարնուած ըլլայ՝ եւ ինձ նկատմամբ իր սրտին տարիիր շիջած բոլորովին:

ՀԱՆՐԻՔԴ. — Եա կը հաստատէ շիջած բլլալը եւ ես կը հաւատամ թէ այնպէս է:

ԱՐՄԱՆՏ - Այդքան բարեմիտ մի՛ ըլլար, և հաւատա՛
որ երբ Քլիկանար կը հաստատէ թէ վրաս ունեցած սէրբ
մարած է և զքեզ կը սիրէ՝ ըստածին ինքն ալ չհաւատար, և
պարզապէս կը խարէ ինքովինք:

ՀԱՆՐԻՔԴ.— Ես ատոր այդպէս ըլլալը չդիտեմ, այլ եթէ կուզե՞ զիւրին է բանն հասկնալ։ Սհա կուզայ Քիվանար, նա կարող է մեր տարակոյսները փարատել։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԳԼՈՒԽԱՆՏՐ, ԱՐՄԱՆՏ, ՀԱՆՐԻԷԴ

ՀԱՆՐԻՔԴ. Եկո՛ւր, Քլիգանար, քոյրս երկայի մէջ կը
թողու զիս, յայտնէ՛ բացէ ի բաց թէ սիրտդ անո՞ր հետ է թէ
իմ, հ՞ս կամ նա իրաւունք ունի հաւատալ սիրոյ հաւաստիք-
ներուդ:

ԱՐՄԱՆՏ. — Ո՞չ, ո՞չ, Քլիգանտը, ես չեմ ուզեր բռնադատել սէրդ, որ իր ներքին բուն զիտումը յայտնէ: Ես այս տեսակ խնդիրներու մէջ զգուշաւոր ընթացք ունիմ, եւ զիտեմ թէ այսպիսի դէմ յանդիման խոստափանութիւն մ'ո՛քանատագնապալի է չըստ ինքնամ:

տաղնապալիք և չէ Քիշդասը. — Ո՞չ, օրիորդ, անկեղծ սիրո մ'ուսրո որ
ազատ խոստովանութիւն մ'ընելէ չքաշուիր. այսպիսի պա-
րագայ մ'ինձ համար տաղնապալիք չէ բնաւ, եւ համարձակ,
որոշ ու մեկին կը խոստովանիմ թէ սրտիս ու հողեսյո բոլոր
սէրն ու խանդը դէպի այս կողմ (Համրիկիլը ցուցնելով)
գարձած են վերջնականապէս. Այս խոստովանութիւնս չըուղ-
ուիք բնաւ, վասն զի զուաք ուղեցիք որ բանն այսպէս
ըլլայ, ես սիրահարուած էի ձեզ եւ արձակած հառաջանք-
ներս զգացմանց սաստկութեան ապացոյցն էին, սիրտս յա-
ւիտենական սէր մը ուխտած էր ձեզ, այլ սակայն ձեր աշ-
քերը զիս արժանի չգտան այս սիրահարութեան, անոնք զո-
ուզարար կ'իշխէին իմ հոգւոյս վրայ՝ որ բիւր քամահանքներ
կը կըէր իրենց լուծին տակ նկուն ու կորակոր. Այսքան վիշտ
ու տառապահնքէ յոզնած գաղրաց՝ յաղթական այլ աւելի զթոտ
ականողիք եւ նուազ զմնազկ սէր մը փնտոեցի, եւ զտայ
զանոնք (Համրիկիլը ցուցնելով) այս աչքերուն մէջ՝ որոնց
աղջած հուրը ինձ նուիրական պիտի ըլլայ յաւիտեան; անոնք
հածեցան ձեր մերժածը չորհամարհել եւ իրենց դիւրապկաց
հայուածքով արցունքներս սրբեցին; իր այս բարեսիրս եւ
համբոյր ընթացքէն սիրտս այն աստիճանի շարժած է՝ որ իր
սէրը սրտէս հանել կըցող որ եւ է ոյժ չկայ աշխարհի մէջ.
Կը խնդրեմ ուրեմն, օրիորդ, հին կրակ մ'արձարծելու համար
որ եւ է անօգուտ ծիդ չթափէք, եւ չփորձէք ընդունայն ձեզ
վերագարձնել սիրտ մ'որ իր նորածիլ քաղցր սիրոյն մէջ
մեսնելու անշարժ որոշում ըրած է:

ԱՐՄԱՆՏ - Եւ ո՞վ կ'ըսէ ձեզ, պարսու, ո՞ւ ո՞ւ ո՞ւ
փաք մ'ունեցած ըլլամ ևւ ձեր ինձմէ հեռանալն հոգ ընկմ
եղբէք։ Զեր այսպիսի բան մ'երեւակայելն զուարձալի է
ստուգիւ, եւ զայն յայտնելը մահաւանդ՝ ոչ սակաւ ժպրնու-
թիւն։

ՀԱՅԵՐԻ կ. - է՞ն, հանգարած, քուրու կը պարզական՝ որ ահառնական մասը կը վարէ, ու սահնձ կը բարոյական՝ թափին:

կը մնայ քու բարոյականդ՝ որ քեզ կեանք տուող ծնողներու հաւանութիւնը չստացած՝ քեզ յայտարարուած սիրոյ մը կը պատասխանես իսկոյն։ Գիտցի՛ր թէ հօրդ մշրդ հրամանին անսալու պարտական ես յաւէտ, որոնք սրտիդ վրայ գերագոյն իշխանութիւն ունին, եւ թէ անոնց ընտրած մա՛րդը միայն կրնաս սիրել, քանզի մեծ մեղք է ելլել սիրահարութեան մը մէջ այդպէս նետուիլ ինքնագլուխ։

ՀԱՆՐԻՒԵԴԻ. — Շնորհակալ եմ, քոյր, ազնիւ հոգածութեանդ համար՝ որ ելեր պարտաւորութիւններս կը սորվեցնես ինձ։ Տուած խրատներուդ համեմատ կ'ուղեմ շարժիլ եւ ցուցնելու համար որ կ'օգտուիմ անոնցմէն՝ խնդրեմ, Քլիդանատըր, որ երթաս սիրոյդ մասին ծնողացս հաւանութիւնն առնուս, օրինաւորապէս տէր եղի՛ր իմ սրտիս, եւ դքեզ առանց միղաց սիրելու միջոցն հայթայթէ՛ ինձ։

ՔԼԻԴԱՆԱՏԾՐ. — Այս մասին քու քաղցր թոյլտուութեանդ կ'սպասէի, անուշիկս, պիտի երթամ ամէն ճիզս թափեմ այդ հաւանութիւնը ձեռք ձգելու։

ԱՐՄԱՆԵՏ. — Յաղթանակը կը տանիս, քոյր, եւ խելքովդ կ'երեւակայես թէ Քլիդանատըի այս ընթացքը հո՞դ կ'ընեմ։

ՀԱՆՐԻՒԵԴԻ. — Ե՞ս այդ բանը երեւակայեմ, քոյր, Քաւ լիցի, գիտեմ թէ բանի եւ ողջմտութեան իրաւունքները հզօր ոյժ մ'ունին զգայարանացդ վրայ, եւ թէ քեզ յատուկ եղած իմաստութեամբ այդպիսի տկարութենէ մ'անաղելի կը մնաս, Զէ թէ միայն չեմ երեւակայեր որ հոգ կընես այդ բանը՝ այլ նաեւ կը կարծեմ եւ կը հաւատամ որ այս խնդրիս մէջ ինձի համար պիտի աշխատիս, ոյժ պիտի տաս Քլիդանարի առաջարկին, եւ քու ազգեցութեամբդ մեր ամուսնութեան բարեբաստիկ ժամը պիտի մօտեցնես։ Կը թափանձեմ ուրեմն որ գործին յաջողութեան աջակցիս, եւ

ԱՐՄԱՆԵՏ. — Կը տեսնեմ Համրիէդ, թէ խեղճու կ խելքովդ գիս հեգնելու ելեր ես, եւ հպարտանք կ'զգաս տիրանալով սրտի մը՝ զոր քու առջիդ նետեցի արհամարհանոք։

ՀԱՆՐԻՒԵԴԻ. — Եւ սակայն կ'ախորժիս միշտ այդ սրտէն՝ զոր առջեւս նետեր ես արհամարհանոք, եւ աչքերդ պիտի զիջանէին խոնարհիլ՝ եթէ զայն ինձմէ ետ առնելու կարող ըլլային միայն։

ԱՐՄԱՆԵՏ. — Եւ ոչ իսկ կը պատասխանեմ այդպիսի ափեղցիկ խօսքերու, զանոնք լոելէն բիւր անգամ լաւագոյն ունիմ չլսել բնաւ։

ՀԱՆՐԻՒԵԴԻ. — Եա՛ւ ընթացք քու կողմէդ, ցուցուցած չափաւորութիւնդ անխմանալի է սառւպիւ։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՔԼԻԴԱՆԱՏԾՐ, ՀԱՆՐԻՒԵԴԻ

ՀԱՆՐԻՒԵԴԻ. — Բրած անկեղծ խոստովանութիւնդ, Քլիդանատըր, մէծ զարմանք պատճառեց քրոջս։ ՔԼԻԴԱՆԱՏԾՐ. — Այսպիսի համաբակախօսութիւն մը պէ՛տք էր անոր, իր մեծամիտ եւ յիմար զոսողութիւնն արժանի էր գէթ որ այս անկեղծ յայտաբարութիւնը ւէր բերնէս։ Այլ գէթ որ այս անկեղծ հայտաբարութիւնը ւէր բերնէս։ Հիմա իսկ կը զիմեմ հօրդ որպէս որպինեւ կը հաւանիս՝ հիմա իսկ կը հայթայթէ՛ իսկ կը դիմեմ այդպէս որպինեւ կը համար կամքին կը համակերպի հլութեամբ, զինք կառավարի կնոջ կամքին կը համակերպի հլութեամբ, զինք կառավարը մայրս է, որ իր տուած որ եւ է որոշումն անարդել րողը մայրս է, որ իր տուած որ եւ է որոշումն անարդել յառաջ կը տանի Փափաքելի էր մեծապէս որ թէ՛ իրեն եւ թէ յառաջ կը տանի Փափաքելի էր մեծապէս որ թէ՛ իրեն եւ հօրաքրոջս մասին աւելի հաշտարար ընթացք մը բունէիր եւ անոնց մաքի զնորքները ողոքելով՝ զրաւէիր երկուքին աւ համարումը։

ՔԼԻԴԱՆԱՏԾՐ. — Այն աստիճան անկեղծ է սիրոն՝ որ կարող չեմ նոյն իսկ քոյլը Արմանտը ողոքել՝ որ ճիշտ անոնց բնաւորութիւնն ունի. զրող կարգացող կիներէ չեմ ախորժիր ես։ Կ'ընդունիմ որ կին մ'ամէն բանի վրայ տեղեկութիւններ ունինայ, բայց չեմ սիրեր բնաւ որ ուսումնական երեւալու համար միայն ուսումնական ըլլալու դժնզակ ախսան ունինայ, ամառ թէ կը փափաքեմ որ իրեն հարցումնիր եղած ժամանակ անդիտանայ զիտցան իսկ կը փափաքեմ վերջապէս մանակ անդիտանայ զիտցան իսկ անձէն անգամ պահէ, հմառութիւն որ իր սորվածներն ինք իր անձէն անգամ պառեր հանելու ունինայ առանց յայտնելու, առանց մեծ մեծ բառեր հանելու բերնէն, եւ իր ամէն մէկ խօսքին մէջ սրավասութիւն գնելու, անձին լուսակ յայտը կը յարգեմ մեծապէս, բայց չեմ կարող իր ցնորք մայրը կը յարգեմ մեծապէս պարոն Թըիսօդէնը ներն ընդունիր, եւ իր հիացումը զրաւող պարոն Թըիսօդէնը

երկինք հանած ժամանակը արձագանք ըլլալ բերնէն ելած զրաբանութեանց: իր այդ մաքի զիւցաղնը պարզապէս ջղեւ ըուս կը դպչի, կը բարկանամ որ մայրդ պատուէ փառաւորէ այդպիսի ոչինչ մարդ մը, մեծ եւ բարձր հանճարի մը տեղ դնէ ապուշ մը՝ որու գրուածները կը սուլուկն ամենուրեք, իմաստակ մ'որու շողոմ դրիչն անբաւ թուղթ կը հայթայթէ նպարավաճառի պիտոյից եւ . . . :

ՀԱՆՐԻԷԴ. — Պարոն Թրիսօդէնի թէ՛ խօսքերն ու թէ գրուածները, Քլիգանար, ինձ ալ տաղտուկ եւ անհամ երեւցած են, ես ալ քեզի պէս կը դատեմ զանոնք, այլ մօրս վրայ մեծ աղղեցութիւն ունենալուն համար՝ պէտք է կամայ ակամայ փոքր ինչ կամահամ գանուիլ անոր. սիրահար մ'իր դարպասը կընէ մտադիւր ուր որ իր սիրտը կապուած է, եւ կ'աշխատի բոլոր պարագաներուն համակրութիւնը շահիւ, եւ մինչեւ իսկ կը ջանայ տանը շան հաճելի երեւալ՝ որպէս զի իր սիրոյն որ եւ է հակառակող մը չզբանուի:

ՔԼԻԴԱՆՏԻ. — Այո՛, ճշմարիտ է խօսքդ, Հանրիէդ, այլ ի՞նչ ընեմ. սիրապէս հակակրելի է ինձ այդ պարոն Թրիսօդէնը, Բարեխօսութիւն մը շահելու համար իր անշահ զրուածները գովելու անպատութիւն չեմ կրնար յանձնառու ըլլալ, վասն զի ամենէ յառաջ ա՛յտ գրուածներով իր անձը յայտնած է ինձ, այնպէս որ տակաւին չտեսած՝ կը ճանչնայի զինք, իր երկերու խառնակոյտին մէջ տեսայ ինչ որ իր իմաստակ անձնաւորութիւնը կը ցուցադրէ ամէն տեղ, անտանելի եւ անդուսպ յանձնապաստանութիւն, անվեհեր եւ անսասան համարում մը՝ ծայրագոյն վատահութիւն մ'իր վրայ՝ որով միշտ եւ ամէն ժամանակ գոն է իր անձէն, գոն՝ իր անբաւ արժանիքէն: իր լըրճուկ գրուածներուն ա՛յն աստիճան հաւանած է՝ ա՛յն աստիճան յափշտակուած անոնցմով՝ որ իր վարկն ու հոչակը ընդհանուր զօրապետի մը պատույն հետ չփոխեր:

ՀԱՆՐԻԷԴ. — Ի՞նչ լաւ տեսեր ու հասկցեր ես, այս ամէն բաներս:

